

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒՐԻ ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

**ԼԵԶՈՒ,
ԼԵԶՈՒՆԵՐ ԵՎ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2019**

ՀՏԴ 81:93/94
ՊՄԴ 81+63.3
Գ 124

*Հրահարկության է երաժիշակորել Երևանի
դեսական համալսարանի եվրոդական լեզուների և
հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

Գրախոսներ՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Շ. Պարոնյան
Բ.Գ.Ք., դոց. Վ. Պետրոսյան

Գաբրիելյան Յու.

Գ 124 Լեզու, լեզուներ և ժողովուրդներ/ Յու. Գաբրիելյան: -Եր., ԵՊՀ
հրատ., 2019, 122 էջ:

Սույն մենագրությունը նվիրված է ընդհանրապես մարդկային լեզվի, ինչպես նաև աշխարհի առանձին լեզուների և դրանցով խոսող ժողովուրդների ծագման ու զարգացման խնդիրներին՝ ըստ գիտության նորագույն տվյալների: Ընդ որում, լեզվի էությանն ու գործառնությանն առնչվող հարցերը քննարկվում են առավելապես վերջին տասնամյակներում առաջ քաշված վարկածների ու տեսությունների հաշվառմամբ: Առաջին անգամ փորձ է արվում հնարավորինս հանրամատչելի ձևով, զերծ մնալով խրթին գիտականությունից, ներկայացնելու նշված խնդիրների վերաբերյալ լեզվաբանության, հնագիտության, կենսաբանության, հոգեբանության, մշակութաբանության և հարակից այլ գիտակարգերի կողմից առաջ քաշված տեսակետներն ու դրույթները: Աշխատությունում առանձին անդրադարձ է կատարվում նաև հայերի և հայերենի ծագման ու զարգացման խնդիրներին:

ՀՏԴ 81:93/94
ՊՄԴ 81+63.3

ISBN 987-5-8084-2416-6

© ԵՊՀ հրատ., 2019
© Գաբրիելյան Յու., 2019

Նախաբան

Դեռ ամենավաղ ժամանակներից մարդկանց հետաքրքրել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են լեզվի ծագումը, լեզուների բազմազանության պատճառները, լեզվի բնույթը և դերը մարդկային հասարակության մեջ և այլն: Այս հարցերի վերաբերյալ մարդկության նախագիտական պատկերացումներն իրենց արտացոլումն են գտել ժողովրդական բանահյուսության մեջ, որոնք առասպելների, առածների ու ասացվածքների ձևով առկա են համարյա բոլոր ժողովուրդների մոտ: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել երեք հարց, որոնք դարերով զբաղեցրել են մարդկային միտքը.

1) ինչպե՞ս են առաջացել տարբեր լեզուներն իրենց տարբեր հատկություններով հանդերձ,

2) ի՞նչ փոխհարաբերության մեջ են գտնվում տարբեր լեզուները միմյանց հետ,

3) ո՞րն է լեզուներից հնագույնը:

Վաղ շրջանում, նկատելով լեզուների միջև եղած որոշ նմանությունները, մարդիկ դրանք բացատրում էին այդ լեզվով խոսող ժողովուրդների նախահայրերի եղբայրությամբ: Միաժամանակ նրանք կարողանում էին արտաքին հատկությունների հիման վրա համեմատել տարբեր լեզուները, ընդ որում, տվյալ լեզվով խոսողներն իրենց լեզուն համարում էին ամենակատարյալն ու գեղեցիկը: Նշենք նաև, որ այս կամ այն լեզվի նախնականության հարցը կապվում էր մեկ ընդհանուր նախալեզվի՝ լեզուների բազմազանությանը նախորդելու հարցի հետ: Վերջինիս լուծման ելակետային մոտեցումները տարբեր էին, ինչպես, օրինակ, Աստվածաշունչը հեղինակություն համարող ժողովուրդները հավատացած էին եբրայերենի՝ նախնական լեզու լինելու մեջ: Այդ նույն ձևով էլ մահմեդականները որպես այդպիսին համարում էին արաբերենը: Նրանց ավանդության համաձայն, որն արտացոլված է արաբական հայտնի բառարանի՝ «Կամուսի» մեջ. Ադամի որդիները տարբեր լեզուներ ունեին, որոնցով խոսում էին իրենց զավակների հետ, իսկ Ադամը գիտեր այդ բոլոր լեզուները և ամեն մեկի հետ խոսում էր նրա լեզվով: Հետագայում Ադամի որդիները, ցրվելով զանազան վայրեր, իրենց հետ տարել են իրենց լեզուները: Շատ ժողովուրդներ էլ, նույնիսկ մեր ժամանակներում, ազգային ինքնասիրությունից կամ զանազան վիճելի համոզմունքներից ելնելով, նախնական են համարել իրենց լեզուն կամ

մերձավոր այլ լեզուներ: Մեզանում, օրինակ, կարծիք է հայտնվել, որ դրախտը գտնվել է Հայաստանում, և Ադամի լեզուն հայերենն է եղել (տես Չամչյան Մ., 1784, էջ 153-164): Հայտնի հույն պատմիչ Հերոդոտոսը իր «Պատմության» երկրորդ գրքում հաղորդում է, որ եգիպտական փարավոն Փասմնատիքոսը, նպատակ ունենալով պարզել, թե փռյուզերեն և եգիպտերեն լեզուներից որն է ավելի հին, հրամայում է երկու նորածին երեխայի պահել այնպես, որ բացառվի նրանց շփումը մարդկանց հետ: Մի քանի ամիս անց պարզվում է, որ նրանց առաջին ինքնուրույն արտաբերած բառն է «բեկոս», որը փռյուզերեն նշանակում է «հաց»: Այդպիսով փարավոնը եզրակացնում է, որ փռյուզերենն ամենահին լեզուն է: Արդի գիտության տեսանկյունից, սակայն, նշված փորձի արդյունքը չի կարող հավաստի լինել, քանի որ լեզուն բնածին երևույթ չէ. այն ունի հասարակական բնույթ և կարող է յուրացվել միայն լեզվական հանրության անդամների շփմամբ: Այդուհանդերձ, մինչ 19-րդ դարի սկիզբը նշված փորձի արդյունքների նման արտահայտվել են բազմաթիվ և բազմաբնույթ տեսակետներ ու վարկածներ, որոնք վերոհիշյալ խնդիրների լուծման մեջ էական առաջընթաց չեն արձանագրել: Այդ շրջանում լեզվաբանական գիտության հիմնադրումից, ինչպես նաև հնագիտական հայտնագործումներից հետո միայն մի շարք հարցերի պարզաբանման հնարավորություն առաջացավ: Ընդ որում, առավել արդյունավետ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով վերջին 200 տարիների ընթացքում գիտնականները ներգրավում էին նաև այլ գիտակարգերի՝ պատմագրության, փիլիսոփայության, մարդաբանության, հոգեբանության և նույնիսկ կենսաբանության ու բնագիտական այլ ոլորտների համապատասխան փաստերը: Ձևավորվեցին առանձին գիտակարգեր ու միջգիտակարգեր, ինչպես պատմահամեմատական, կառուցվածքային և տիպաբանական լեզվաբանական ուղղությունները, լեզվափիլիսոփայությունը, հոգելեզվաբանությունը, տարածքային լեզվաբանությունը և այլն, որոնք լեզուն և առանձին լեզուներն ուսումնասիրում են թե՛ ծագման ու զարգացման, թե՛ էության ու բնույթի և թե՛ կառուցվածքի ու գործառույթի տեսանկյունից:

Այսպիսով, կարող ենք ասել, որ վերոհիշյալ հիմնախնդիրների վերաբերյալ կուտակվել է այնպիսի հսկայածավալ նյութ, որ արդի ոչ մի հետազոտող ի գործու չէ թեկուզև ընդհանուր գծերով պատկերացում կազմել համապատասխան վարկածների, տեսակետների, դրույթների վերլուծության սկզբունքների և հարակից այլ հարցերի մասին: Այս ա-

մենը նկատի ունենալով՝ սույն աշխատության մեջ փորձ է արվում անդրադառնալու միայն մեր կարծիքով կարևոր՝ լեզվի և լեզուների ծագման ու զարգացման, լեզվի էության և գործառույթի, ինչպես նաև լեզուների ու դրանց կրող ժողովուրդների փոխհարաբերությունների խնդիրներին՝ ըստ արդի գիտության նորագույն տվյալների: Բնականաբար, ստորև քննարկվող հարցերի վերաբերյալ մենք ունենք նաև մեր սեփական պատկերացումները, որոնք ձևավորվել են դրանց երկարամյա ուսումնասիրությունների արդյունքում և այստեղ ներկայացվում են ըստ անհրաժեշտության: Նշենք նաև, որ նկատի ունենալով հիշյալ խնդիրների բավականաչափ խրթին բնույթը, սույն աշխատության մեջ իրականացվող համապատասխան վերլուծություններն աշխատել ենք շարադրել հնարավորինս հանրամատչելի լեզվով՝ խուսափելով գիտական բարդ սահմանումներից ու ձևակերպումներից, ինչպես նաև համապատասխան երևույթների պարզաբանման գործընթացը տարբեր լեզուներից վերցված բազմատեսակ փաստերով ծանրաբեռնելուց, քանի որ մեր նպատակը քննարկվող խնդիրներն ընթերցողների լայն զանգվածներին ներկայացնելն է:

Լեզվի ծագումը

«Սկզբումն էր Բանը. Եվ Բանն Աստուծոյ մօտ էր. Եվ Բանն Աստուած էր»: Հովհաննեսի Ավետարանի այս նախաբանի հայերեն թարգմանությունը, մեր կարծիքով, ավելի մոտ է բնագրին, քան, ասենք, ռուսերեն, գերմաներեն կամ այլ լեզուներով տարբերակները, եթե նկատի ունենանք, որ հիմնականում ելակետային համարվող հունարենում *logos* բառը նշանակում է ոչ միայն «բառ, խոսք», ինչպես թարգմանվում է այլ լեզուներում, այլև՝ «միտք, բանականություն», որն ամբողջությամբ արտահայտում է նաև հայերենի «բան» ձևը:

Պարզվում է նաև, որ ամերիկացի լեզվաբան Մերիթ Ռահլենը գիտի այն առաջին բառը, որն արտաբերվել է մարդու կողմից: Նրա կարծիքով այդ բառն ուներ *tik* ձևը, և նախամարդն այն օգտագործել է «մատ» նշանակությամբ, որից էլ ծագում են նաև լատիներենի *digitus* և գերմաներենի *Zeh* «մատ», ինչպես նաև *zeigen* «ցույց տալ» ձևերը (տե՛ս Ruhlen M., 1996): Անշուշտ, դրան համապատասխան հնչյունափոխված ձևեր կարելի է գտնել նաև հայերենում (ինչպես՝ *tēs* «տես», *tel* «տեղ») և այլ լեզուներում, սակայն անբացատրելի է մնում, թե ինչու պետք է հենց այս արմատը դիտել որպես նախնական ձև: Միևնույն ժամանակ, թեև Ռահլենը չի նշում, թե երբ կարող էր առաջացած լինել նշված արմատական ձևը, սակայն, նրա որոշ հետևորդներ կարծում են, որ դա պետք է լիներ մոտ հարյուր հազար տարի առաջ (տե՛ս Liberman Ph., *Uniquely Human*, 1991, 47):

Այս առումով նշենք, որ լեզվի ծագման հարցը եղել և մնում է ինչպես լեզվաբանների, այնպես էլ մարդաբանների, կենսաբանների, հնագետների և գիտության այլ ոլորտները ներկայացնող գիտնականների ուշադրության կենտրոնում: Իսկ ի՞նչ է լեզուն ընդհանրապես: Եթե պարզ ձևակերպենք, ապա լեզուն ընդհանուր առմամբ բառերի ամբողջություն է: Բառն իր հերթին երկկողմանի է. ունի արտաքին կողմ, որն արտահայտվում է ֆիզիկական, հնչյունական ընկալելի (տեսանելի) ձևով, և ներքին կողմ, որն ընկալելի (տեսանելի) չէ, այլ հոգեկան է: Առաջինը հնչվող կամ գրվող բառն է, իսկ երկրորդը՝ նրա իմաստը կամ նշանակությունը: Բառերը լեզվում փոխկապակցված են որոշակի հարաբերություններով, ինչը լեզուն դարձնում է համակարգ: Բացի դրանից՝ լեզվում գործում են բառերի շղթայաձև դասավորության կա-

նոններ՝ համապատասխան մտքերի արտահայտման նպատակով (շարահյուսություն):

Այդպիսով, լեզվի ծագման խնդիրը հանգում է առաջին հերթին բաների արտաքին կողմի ձևավորման բացահայտմանը, իսկ նրանց ներքին կամ բովանդակային կողմը, որը սերտորեն առնչվում է մտածողությանը, թվում է նվազ խնդրահարույց: Արդ, ինչպե՞ս են առաջացել բառածևերը, և ինչպե՞ս է դրանց որոշակի իմաստ հատկացվել:

Ասեմք նաև, որ ցանկացած բան կամ ինքն իրեն է առաջանում, կամ էլ ինչ-որ մեկն է այն ստեղծում: Այդպես էլ լեզուն. կամ այն առաջացել է ինքնին բնական ճանապարհով, կամ էլ ստեղծվել է գործուն և ստեղծագործ ուժի կողմից: Անկախ այս հարցի վերաբերյալ կոնկրետ հետազոտողի տեսակետից՝ հիմնականում ենթադրվում է, որ լեզուն ստեղծագործություն է և չէր կարող ինքն իրեն առաջանալ: Դեռ անտիկ շրջանի մտածողներն են փաստել, որ իրականում լեզուն է, որ տարբերում է մարդուն մյուս կենդանիներից, և խոսելու կարողությունը կենդանիներին տրված չէ: Նույն այդ շրջանում նշված կարողության կամ լեզվի ծագման վերաբերյալ առաջ քաշված երկու հիմնական տեսակետները՝ «ըստ սովորույթի» (հուն. *thesei*) և «ըստ բնույթի» (հուն. *physei*), կարելի է ասել, մինչ այսօր էլ քննարկման առարկա են: Այդ շրջանի փիլիսոփաները ներկայացրել են համարյա բոլոր հնարավոր վարկածները, որոնք հետագայում խորացվել են ու ամբողջացվել: Եթե փիլիսոփան ընդունում էր առաջին (*thesei*) տեսակետը, որը, ըստ էության, նշանակում է, որ լեզուն ստեղծվել է ինչ-որ մեկի կողմից, ապա նա պետք է պատասխաներ, թե ով է այն ստեղծել: Այս դեպքում հնարավոր պատասխաններն են՝ Աստված (աստվածները), առանձին անհատը կամ մարդկային հասարակությունը կամ աստվածային ուժով օժտված մարդը և այլն: Երկրորդ տեսակետի կողմնակիցները (*physei*) գտնում էին, որ բաներն արտահայտում են իրերի կամ անձերի բնական առանձնահատկությունները կամ երկուսը միասին:

Հետագայում թե՛ փիլիսոփաները, թե՛ լեզվաբաններն ու հոգեբաններն իրենց ուշադրությունը կենտրոնացնում են լեզվի բուն կառուցվածքի վրա՝ փորձելով բացահայտել դրա ձևավորման ու զարգացման հանգամանքները: Այս առումով հատկապես կարևոր էր ճշտել, թե ինչպիսին կարող էր լինել լեզուն իր ձևավորման վաղ փուլում, և թե որ լեզուն պետք է համարել ամենահինը: Վերջինս, բնականաբար, իր լուծումը չգտավ, որովհետև անհնար էր եղած լեզուների փաստերի հիման

վրա պարզել այդ խնդիրը, եթե նկատի ունենանք, որ ժամանակի ընթացքում թեկուզ ամենահին վկայություններով լեզուներն անճանաչելիորեն փոխվում են: Ինչ վերաբերում է լեզվի նախնական վիճակին, ապա բազմաթիվ վիճահարույց վարկածներից հետո 19-րդ դարի սկզբներին ճանաչում գտավ գերմանացի փիլիսոփա Վ. Հումբոլդտի տեսակետը, որն առաջ քաշեց լեզվի եռափուլ զարգացման գաղափարը: Ըստ այդմ՝ առաջին փուլում, որը Հումբոլդտն անվանում է «նախապատմական կամ նախագրային», լեզուն կազմված է եղել մաքուր արմատներից, և բառերը չեն ունեցել նախածանցներ, վերջածանցներ կամ վերջավորություններ. այդ լեզուն հարուստ էր բառերով և կարող էր նկարագրել ցանկացած իրադրություն (Humboldt W., 1973, 91): Հետագայում առանձին բառեր միանում են «իրական» արմատներին՝ կորցնելով իրենց «առարկայական» իմաստները և վերածվելով բառակազմական (ածանց, վերջավորություն) միջոցների: Ինչ վերաբերում է բառերի նախնական իմաստների առաջացմանը, ապա մինչ այսօր վիճարկվում են բառածների և դրանց միջև կապի վերաբերյալ տեսակետները. գիտնականների մի մասը գտնում է, որ դրանց միջև կապը նախապես եղել է պատճառաբանված, իսկ մյուսը, ընդհակառակը, պնդում է, որ ցանկացած բառածնի և նրա բովանդակության միջև որևէ կապ չի եղել, և պատահականորեն են ձևերն ու բովանդակությունները միմյանց հատկացվել: Նշենք, որ կոնկրետ լեզուներում հնարավոր է տեսնել թե՛ առաջին և թե՛ երկրորդ տեսակետը հիմնավորող փաստեր: Վերջին տարիներին Ամերիկայում և Եվրոպայում առաջ քաշված, այսպես կոչված, «բնականության տեսությունը» գտնում է, որ լեզուների ձևավորման վաղ շրջանում, այնուամենայնիվ, լեզվական ձևերի և դրանց արտահայտած իմաստների միջև կապերը եղել են պատճառաբանված, այսինքն՝ կոնկրետ ձևը պայմանավորված էր նրա իմաստով (տե՛ս Գաբրիելյան Յ., 2001, 172-175): Այստեղ չենք ցանկանում անդրադառնալ լեզվական ձևերի առաջացման միմյանց հակասող, մինչ այժմ գոյություն ունեցող բազմաթիվ տեսություններին (ինչպես, օրինակ, ծայնարկությունների, բնածայնությունների և մյուս տեսությունները), քանի որ ցանկության դեպքում ցանկացած լեզվում կարելի է գտնել թե՛ մեկ և թե՛ մյուս տեսությունը հիմնավորող փաստեր: Բացի դրանից՝ սույն աշխատության հետագա շարադրանքում այս կամ այն չափով քննարկվելու են այդ խնդիրների վերաբերյալ արտահայտված թե՛ վաղ շրջանի և թե՛ ժամանակակից տեսակետները:

Վերադառնալով կրկին Մ. Ռահլենի վերը ներկայացված դրույթին՝ նշենք, որ գիտական առումով այն պատկանում է իսկապես վիճահարույց վարկածների թվին, և անդել, որ երկրագնդի հազարավոր լեզուներով խոսող յոթ միլիարդից ավելի բնակչության համար ելակետային է եղել ընդամենը մեկ արմատական ձև, մեր կարծիքով, համարձակ և միաժամանակ լուրջ հիմնավորման կարիք ունեցող տեսակետ է: Այդուհանդերձ, ամերիկացի մի շարք գիտնականներ կարծում են, որ այն իրական է, և հիշյալ խնդրի լուծումը պետք է փնտրել մարդու ծագման կենսաբանական արմատներում: Վերջինիս առավել համաձայնալից քննությունը կիրականացվի ստորև, իսկ մինչ այդ նշենք, որ Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանից Ա. Վիլսոնը, Մ. Ստոնեքինգը և Ռ. Քեյնը, ուսումնասիրելով ժամանակակից մարդկանց տարբեր խմբերի ԴՆԹ կառուցվածքը և այն համեմատելով հնէաբանական հետազոտություններով ձեռք բերված տվյալների հետ, ենթադրում են, որ ամբողջ մարդկությունն ընդհանուր ծագում ունի: Ընդ որում, հիմք է ընդունվում այն դրույթը, որ գենային ժառանգականության պահպանողն ու փոխանցողը կինն է, և այդ պատճառով էլ նշված գիտնականները հանգում են ընդհանուր «նախամոր» գաղափարին, որը 200.000 տարի առաջ բնակվել է Աֆրիկայում (տե՛ս Lieberman Ph., 1991, էջ 67): Այս տեսակետը, որը կոչվում է նաև «Եվայի վարկած», չնայած իր վիճահարույց բնույթին, 20-րդ դարի վերջերին դարձավ լայն քննարկումների առարկա: Մինչ այդ ասենք, որ ավանդական համեմատական լեզվաբանությունը տարբեր լեզվաընտանիքների նախալեզուների առաջացման ժամանակաշրջանը համապատասխանեցնում էր ուշ քարի դարի հետ, որին վերագրվում է առավելագույնը 7000 տարվա հնություն: Հետագայում տարբեր լեզվաընտանիքների համարժեք փաստերի համեմատությամբ դանիացի լեզվաբան Դոլգեր Պեդերսենը եկավ այն եզրակացության, որ ավելի վաղ տարբեր լեզվաընտանիքների լեզուներն առաջացել են մեկ այլ ընդհանուր լեզվից, որը նա անվանեց «նոստրատիկ» (լատ. *noster*՝ «մերային»): Այստեղ չենք ցանկանում անդրադառնալ գիտության մեջ մինչ այժմ ընթացող համապատասխան վեճերին, դրանց բնույթին ու էությանը, այլ կցանկանայինք ընդգծել միայն, որ հիշյալ «նոստրատիկ» կամ տարբեր այլ անվանումներով գործածվող նախալեզվի ժամանակաշրջանը համարվում է միջին քարի դարի (մեզոլիթի) փուլը՝ մոտ 12000 տարվա հնությամբ: Ավելացնենք միայն, որ հիշյալ տեսության կողմնակիցները աշխարհի ոչ բոլոր լեզուներն էին հատկացնում

մինչև 4-6 գերընտանիքին, և հետագայում սահմանվեց ևս 4-6 գերընտանիք¹, որտեղ ներկայացված են նաև համարյա բոլոր հայտնի լեզուները, իսկ դրանցում ընդգրկված լեզուները բնութագրվում են առավելագույնը 15.000 տարվա հնությամբ: Այսպիսով, 20-րդ դարի վերջերին համեմատական լեզվաբանության կողմից կարծես ձևավորվեց լեզուների բազմածագում մոտեցումը, ինչն ակնհայտորեն հակասում է Մ. Ռահլենի և մյուսների վարկածներին: Նշենք, որ ընդհանուր առմամբ երեք գիտակարգերի ուսումնասիրության մեթոդների ու դրանց օգնությամբ ձեռք բերված տվյալների տարբերությունն է պատճառը, որ մինչ այժմ քննարկվող խնդիրների վերաբերյալ միասնականություն գոյություն չունի: Դրանք են մարդաբանությունը, հնագիտությունը և լեզվաբանությունը, որոնք մինչ այժմ իրենց հետազոտությունները տանում են տարբեր հարթություններում, տարբեր կանխավարկածների հիման վրա և տարբեր նպատակադրումներով, ինչը հանգեցնում է իրարամերձ և հակասական տեսակետների: Ձերժ մնալով դրանց միասնականացման գաղափարից՝ այստեղ նպատակ ունենք բացահայտելու առկա հակասությունների բնույթն ու պատճառը, իսկ որոշ դեպքերում էլ համադրելու փաստերը՝ լրացնելով դրանք մեր մեկնաբանություններով:

Նախ փորձենք հանրամատչելի ձևով անդրադառնալ ավանդական համեմատաբանության (ըստ էության՝ հնդեվրոպաբանության) և նոստրատիկ տեսության հետևորդների տեսակետների էությանը: Նշենք, որ դասական հնդեվրոպաբանությունը սահմանափակվում էր մոտ 4000 տարվա հնության փաստերով և գտնում, որ այդ ժամանակաշրջանում համահնդեվրոպական ընդհանուր լեզուն քայքայվել է մեկ տասնյակից ավելի լեզվախմբերի, որոնցից փոքրասիական և թուսարական լեզվաճյուղերը հետևորդներ չեն թողել: Ընդ որում, հնդեվրոպացիների նախահայրենիքը համարելով Կենտրոնական Եվրոպան՝ նրանք կարծում էին, որ ոչ եվրոպական լեզուների կրողներն իրենց ներկայիս բնակության վայրեր են տեղափոխվել ավելի ուշ, որտեղ էլ չփվել են նաև այլ ծագմամբ տեղաբնիկ ցեղերի հետ՝ աստիճանաբար ստեղծելով իրենց յուրահատուկ լեզուն: Հետաքրքիր է նաև, որ այս տեսակետն առաջ է քաշվել դեռ 1786 թ. անգլիացի իրավաբան Վ. Ջոնսի կողմից, որը, հնդկաստանի Կալկաթա քաղաքում ուսումնասիրելով հին հնդկական կամ

¹ Հարկ է նշել, որ «նոստրատիկ» ցեղակցությունը հետագայում ավելի նեղ իմաստով է գործածվում և այդպիսով նկատի է առնվում ընդամենը մեկ գերընտանիք, որը հիմնականում ընդգրկում է հնդեվրոպական, սեմական և կովկասյան լեզվաընտանիքները:


սանսկրիտյան տեքստերը, եկավ այն եզրակացության, որ չպետք է բանասեր լինել՝ չտեսնելու համար այս լեզվի նմանությունները եվրոպական մյուս լեզուների հետ: Նրա այս տեսակետը հետագայում զարգացվեց դանիացի Ռ. Ռասկի և գերմանացի լեզվաբաններ Ֆ. Բոպի և Յ. Գրիմի կողմից, որոնք արդեն զուտ լեզվաբանական հետազոտություններով փորձում էին հիմնավորել այն այնպիսի համեմատություններով, ինչպես՝ սնսկ. *pitar* = գերմ. *Vater*, անգլ. *father*, լատ. *pater*, հայ. *hayr* կամ սնսկ. *bharami*, հուն. *fero*, հայ. *berem*, հ. գերմ. *baira* և այլն: Այստեղ քննարկվող խնդիրների առումով այդ շրջանի համար կարևոր ենք համարում գերմանացի Ա. Շլայխերի հնդեվրոպական լեզուների ծագման ու զարգացման վերաբերյալ, այսպես կոչված, «ծննդաբանական ծառի» տեսությունը, որը, կարելի է ասել, մինչ օրս դեռ արդիական է (տե՛ս Schleicher A., 1862): Ըստ այդ տեսության և համապատասխան գծապատկերի՝ ներկայումս առանձին լեզվաճյուղեր կազմող փոքրասիական, կելտական, ռոմանական, գերմանական, բալթյան, սլավոնական, իրանական և հնդկական լեզուները, ինչպես նաև առանձին հանդես եկող հայերենն ու թուրքերենը ծագում են մեկ ընդհանուր հնդեվրոպական բնից, որից սերում են հիշյալ լեզուների համար հիմք հանդիսացող անատոլիական, կելտա-իտալա-թուրքական, բալթիա-սլավոնա-գերմանական և հնդկա-իրանա-հունա-հայկական ընդհանուր լեզվաճյուղերը:

րագրվում է մոտ 6000 տարվա հնություն, ինչը հակասության մեջ է նոստրատիկ տեսությամբ առաջ քաշվող ժամանակագրության հետ: Ուստի «Ծննդաբանական ծառի» տեսությունը բավարարում է միայն հնդեվրոպաբանությանը, իսկ աշխարհի մյուս լեզուների ծագման հարցն այդ տեսությամբ բացատրել հնարավոր չէ: Հնարավոր չէ նաև ցույց տալ տարբեր լեզվաընտանիքների միջև առնչություններ, որոնք նույնիսկ հեռավոր ցեղակցության (նոստրատիկ) տեսությամբ բացառվում են: Մնում է, կարծես, ենթադրել, որ լեզուները բազմածագում են, դրանք կազմում են տարբեր լեզվաընտանիքներ, որոնք միմյանց հետ ծագումնաբանական ընդհանրություններ չունեն կամ էլ առավելագույնը, ըստ հեռավոր ցեղակցության տեսության, կազմում են գերընտանիքներ, որոնց մեջ կարելի է միավորել միայն մի քանի լեզվաընտանիքներ: Այս առումով նշենք, որ հիշյալ տեսության հետևորդները հիմնականում առանձնացնում են վեց գերընտանիքներ, որոնցից նոստրատիկը և եվրասիականը միասին միավորում են հնդեվրոպական, աֆրասիական (սեմական, բերբերյան), դրավիդյան, քարթվեկական և ուրալալթայան լեզուները, սինո և դենեկովկասյան գերընտանիքները միասին՝ հյուսիսկովկասյան, տիբեթաչինական, ենիսեյոստյակական, ինչպես նաև խուռերեն, ուրարտերեն, խեթերեն, էտրուսկերեն և բասկերեն լեզուները, ամերինդյան գերընտանիքը ներկայացնում են հյուսիսամերինդյան, հարավամերինդյան և նադենե, հնդկախաղաղովկիանոսյան՝ անդամանական, պապուասական և տասմանական, իսկ ավստրալանեզականը՝ ավստրալանեզական, թայի, միայաոական, ավստրալասիական լեզուները: Միևնույն ժամանակ գոյություն չունի նաև միասնական կարծիք վերոհիշյալ դասակարգման վերաբերյալ հատկապես այն պատճառով, որ լեզուների ուսումնասիրվածության աստիճանը տարբեր է, իսկ լեզվաբանների ունեցած փաստերն էլ համարժեք չեն: Մեր կարծիքով կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ լեզուների ծագման և տարածման ժամանակաշրջանները ևս տարբեր են: Այսինքն՝ լեզվաընտանիքները նոստրատիկ ընդհանրությունից, իսկ լեզուները լեզվաընտանիքներից միաժամանակ չեն առանձնացել: Բնականաբար, քննարկվող հարցերի լուծման համար անհրաժեշտ է դառնում նաև այլ գիտակարգերի փաստերի ներգրավումը, քանի որ միայն լեզվաբանական տվյալներով դրանք լուծել հնարավոր չէ: Ասվածը առաջին հերթին վերաբերում է Մ. Ռահլենի և նրա հետևորդների կողմից ներկայացվող վերը հիշատակված տեսությանը, որտեղ մարդու և լեզվի

ծագմանը հնության տարբեր ժամանակաշրջաններ են վերագրվում: Ասենք նաև, որ գիտության մեջ այս մոտեցումը նոր չէ, և դեռևս 18-րդ դարից սկսած՝ առաջ են քաշվել նման այլ վարկածներ, որոնք, սակայն, համընդհանուր ճանաչում չեն գտել, և այդ պատճառով էլ այստեղ դրանք չեն քննարկվում: Միևնույն ժամանակ ժամանակակից գիտության նոր տվյալները ստիպում են մեզ, այնուամենայնիվ, անդրադառնալ Ռահլենի և մյուսների դրույթներին, քանի որ դրանց օգտին բերվում են տարաբնույթ փաստեր ու հիմնավորումներ:

Մինչ այդ նշենք, որ կենսաբանական տեսակների ծագման արդի տեսությունները փորձում են ընդհանուր գծերով վերականգնել մարդկության աշխարհագրական տարածման այն պատկերը, որը հանգեցրել է ժամանակակից մարդու առաջացմանը: Այդ առումով հիշատակման է արժանի, այսպես կոչված, «շշավզիկի ծագումնաբանական տեսությունը»², ըստ որի՝ ժամանակակից մարդը սերում է *Homo sapiens* (մարդ-բանական) տեսակից, որը 100.000 տարի առաջ բնակվել է Աֆրիկայում կամ Մերձավոր Արևելքում: Ինչ վերաբերում է մարդու մյուս տեսակներին, որոնք գոյություն են ունեցել ավելի վաղ, ինչպես *Homo habilis* (մարդ-կարող, ընդունակ), *Homo erectus* (մարդ-ուղղաքայլ, ուղիղ քայլող), *Homo neanderthalensis* (մարդ-նեանդերթալյան) և այլն, ապա ժամանակի ընթացքում դրանք տարբեր պատճառներով իրենց քանակական կազմի նվազման հետևանքով անհետացել են: Ընդ որում, նրանք, ի տարբերություն *Homo sapiens*-ի, լեզվական ունակությամբ օժտված չեն եղել: Բացի այդ՝ հիշյալ տեսության հետևորդներից ոմանք տարբերում են նաև *Homo sapiens*-ի ավելի վաղ (անհետացած) և նրա ժամանակակից տեսակները: Ենթադրվում է նաև մարդու հիշյալ տեսակների աշխարհագրական տարածման երկու փուլեր՝ մինչև մեկ միլիոն տարի ընդհանուր ժամանակաշրջանով: Ասվածը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

² Շշավզիկի ծագումնաբանական տեսությունը տեսակների առաջացման ժամանակակից կենսաբանական տեսություն է, ըստ որի՝ որևէ տեսակի քանակական նվազումը բերում է տվյալ տեսակի վերարտադրության կրճատմանը (տես *Population Bottlenecks and Volcanic Winter* (<http://www.jqjacobs.net/antro/paleo/bottleneck.html>)):



Ըստ այս պատկերի՝ ժամանակակից մարդիկ առաջացել են Homo sapiens-ի մի փոքր խմբից, որն ապրել է 100.000 տարի առաջ (Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում), իսկ հնագույն Homo sapiens-ի մյուս խմբերը (նեանդերթալյան և այլն) անհետացել են՝ առանց հետնորդներ թողնելու:

Նշենք նաև, որ այսօր վիճարկվում է նաև նախամարդու զուտ աֆրիկյան ծագման տեսակետը, և նորագույն հնագիտական պեղումների արդյունքներով ենթադրվում են նաև այլ վայրեր, այդ թվում՝ նաև ներկայիս Հայաստանի տարածքը (տե՛ս Ararat news, 03.04.15 թ.): Մեզ հետաքրքրող խնդիրների տեսանկյունից, սակայն, այս վարկածներն առաջնային նշանակություն չունեն, եթե նկատի ունենանք, որ տվյալ դեպքում խոսքը նախամարդու այն վաղ տեսակի (մասնավորապես Homo erectus-ի) մասին է, որը լեզվաունակությամբ օժտված չի եղել:

Այսպիսով, անկախ նախամարդու նախնական աշխարհագրական տարածման վերաբերյալ կոնկրետ վարկածից՝ առաջ են քաշվում լեզուների ծագման երեք հիմնական տեսակետներ.

1. մարդկային լեզուն առաջացել է մոտ 10.000 տարի առաջ ժամանակակից Homo sapiens-ի տարբեր խմբերում նրա աշխարհագրական տարածումից հետո, 2. լեզուն առաջանում է անմիջապես մարդու ծագման պահից սկսած, և 3. լեզուն գոյություն է ունեցել մինչև ժամանակակից Homo sapiens-ի առաջացումը, և այն ունեցել է դեռ հնագույն Homo sapiens-ը (ինչպես, օրինակ, նեանդերթալյան մարդը):

Մի շարք հետազոտողներ մերժում են առաջին վարկածը՝ գտնելով, որ լեզուն համընդհանուր բնույթ ունի, և մարդու տեսակը ծագումնաբանորեն համասեռ է: Հետևաբար դժվար է պատկերացնել, որ հարաբերականորեն կարճ ժամանակում ժամանակակից Homo sapiens-ի տարբեր խմբերում անկախ կերպով և թռիչքաձև կարող էին առաջանալ լեզուներ՝ առանց որևէ հետք թողնելու: Տվյալ դեպքում պետք է հաշվի առնել նաև այն բազմաթիվ ընդհանրությունները, որոնք առկա են լեզուների միջև, ինչպես, օրինակ, հնչյունական, ձևաբանական և քերականական կառուցվածքները կամ քերականական արտահայտության միջոցների բազմաթիվ ընդհանրությունները և այլն: Ենթադրվում է, որ հիշյալ որակական թռիչքը հնարավոր էր միայն մարդու ընդհանուր ճանաչողության փոփոխությամբ: Նկատենք, որ ցանկացած երեխա նույն կերպ է յուրացնում ցանկացած լեզու՝ անկախ իր ծնողների լեզվից: Կարիք չկա ամերիկացի լեզվաբան Նոամ խոմսկու «Ի ծնե համընդհանուր քերականության» տեսության հետևորդը լինել, որպեսզի ընդունենք, որ մայրենի լեզվի յուրացումը պայմանավորված չէ անհատի ծագումնաբանությամբ: Ուստի կարծես դժվար է ենթադրել, որ լեզվաուսնակությունը Homo sapiens-ի տարբեր խմբերում տարբեր կերպ է զարգացել: Մյուս երկու վարկածները լեզվի ծագմանը ընդհանուր բնույթ են վերագրում: Ընդ որում, ըստ երկրորդի՝ լեզուն առաջացել է 100.000 տարի առաջ հնագույն Homo sapiens-ի մի փոքր խմբում և մահացել է այդ խմբի անհետացմամբ պայմանավորված: Տվյալ դեպքում Homo sapiens-ի առաջացումը կապվում է նրա լեզվաուսնակության հետ, և այդ ունակությունն է համարվում այն հիմնականը, որի միջոցով նա դարձել է «մարդ-բանական»: Այստեղ խնդիր է առաջացնում հնագույն Homo sapiens-ի անհետացման պատճառների պարզաբանումը: Ենթադրվում է, որ, օրինակ, նեանդերթալյան մարդու ճանաչողական կա-

րողությունները չէին կարող ավելի փոքր լինել, քան ժամանակակից մարդունը, եթե նկատի ունենանք, որ նա ունեցել է ուղեղի ավելի մեծ ծավալ: Դրա օգտին են խոսում նրա աշխատանքային տարբեր գործիքները, սոցիալական կազմակերպվածությունը, որսորդության տարբեր միջոցները և այլն: Այս առումով առաջ են քաշվում տարբեր վարկածներ, որոնք միանշանակորեն դժվար է հաստատել կամ մերժել: Տարածված տեսակետներից մեկն այն է, որ նեանդերթալյան մարդու անհետացման պատճառ կարող էր լինել որոշակի սոցիալական հարաբերությունների կորուստը որսորդությամբ և հավաքչությամբ զբաղվող փոքր խմբերում: Այդպիսով, լեզվի նոր ծնունդը պայմանավորվում է հիշյալ հարաբերությունների պահպանման ու կատարելագործման անհրաժեշտությամբ, և հնագույն մարդկանց համար լեզուն ծառայել է ոչ միայն տեղեկության փոխանակմանն ու զգացմունքների արտահայտմանը, այլև որսորդության կազմակերպմանն ու գործիքների արտադրությանը: Պակաս կարևոր չէ նաև լեզվի պատմողական գործառույթը, որի օգնությամբ մարդը կարող է պատմել, թե նախկինում ինչ է եղել, ինչ կարող է լինել, և ինչը չպետք է լինի, որն ընդհանուր առմամբ ներառվում է լեզվի կուտակիչ գործառույթի մեջ: Թերևս այս հանգամանքներն էին, որ նպաստեցին մարդկային հասարակության մեջ նոր սոցիալական հարաբերությունների հաստատմանը և ճանաչողական նոր կարողությունների ձևավորմանը: Այս առումով կարելի է առանձնացնել նաև մի շարք այլ մոտեցմամբ բնութագրվող ժամանակակից տեսակետներ, ինչպես, օրինակ, ամերիկացի գիտնական Դ. Բիկերտոնը (Bickerton D., 1990) կարծում է, որ լեզուն մարդկային ուղեղի զարգացման երկրորդային արդյունք է: Նյարդաբանական կառուցվածքները, որոնց օգնությամբ նախամարդը կարողացել է իր աշխարհաճանաչողությունը համադրել իրական աշխարհի հետ, նպաստել են այնպիսի ունակությունների զարգացմանը, որի շնորհիվ նա որոշակի հնչյունական ձևերի և ժեստային միջոցների գործադրմամբ արտահայտել է հասկացություններ: Այդպիսով առաջացել է պարզունակ մի լեզու՝ կազմված միայն բառերից և առանց դրանց կապակցման միջոցների կամ քերականության: Որպես փաստարկ Բիկերտոնը նշում է այն հանգամանքը, որ այսօր էլ հանգամանքների բերումով, այսպես կոչված, «մաուզլի-երեխաները», վաղ հասակում հայտնվելով հասարակության մեջ, շատ բան են սովորում, իսկ նրանց լեզուն այդպես էլ մնում է պարզունակ մակարդակի վրա: Այս խնդրին կանոնադաշտանք ստորև, իսկ

այստեղ նշենք, որ ներկայացված տեսակետում այդպես էլ անհայտ է մնում, թե ինչպես է տեղի ունեցել անցումը լեզվի պարզունակ ձևից ավելի բարդ շարահյուսական ձևին՝ նկատի ունենալով, որ ըստ Բիկերտոնի՝ դա կարող էր տեղի ունենալ մարդու կազմաբանական փոփոխությամբ: Վերջինս իր հերթին ենթադրում է նախամարդու ուղեղային գործունեության և բնախոսական կարողությունների փոփոխություններ: Ասենք նաև, որ այս տեսակետը նոր չէ, և, ինչպես վերը տեսանք, նման այլ տեսակետներ արտահայտվել են գիտության զարգացման դեռ անտիկ շրջանից, իսկ նախորդ դարի կեսերին հոլանդացի Գիննեկենը առաջարկել է հիշյալ երկու ձևերի համար լեզվի զարգացման «տեսողական» և «լսողական» փուլերի տարբերակման գաղափարը (տես Ginneken H.van, 1939, 44): Առաջինը եղել է լեզվի պարզունակ ձև հիմնականում ժեստային և բնաձայնական միջոցներով, իսկ երկրորդը բնութագրվել է ձևերի հստակ հնչյունական արտահայտությամբ և որոշակի քերականական կառուցվածքով: Ընդ որում, լեզվի զարգացման երկրորդ փուլը, ըստ Գիննեկենի, համընկնում է վաղ քարի դարաշրջանի հետ: Միևնույն ժամանակ անցումը մեկ փուլից մյուսին նա բացատրում է հասարակական-տնտեսական կացութաձևերի փոփոխությամբ:

Հետևելով Հ. Գիննեկենի տեսությանը՝ Մ. Տոմասելլոն (Tomasello M., 2008) կարծում է, որ «տեսողական» լեզվի շրջանում մարդը օգտագործել է ժեստեր (ինչպես ժամանակակից մարդանման կապիկները), որոնք ուշադրություն գրավելու նպատակ են ունեցել, և շարժումներ, որոնց օգնությամբ նա արտահայտել է տվյալ պահին իր նպատակադրումները: Բնականաբար, ժեստերի միջոցով մարդը չէր կարող լիարժեք տեղեկույթ հաղորդել, և որպեսզի խոսակիցը հասկանար «խոսողի» նպատակադրումները, պետք է երկուսն էլ որոշակի ընդհանուր գիտելիքներ ունենային կոնկրետ առարկաների ու երևույթների մասին: Մյուս կողմից պետք է համընկնեին նաև նրանց հաղորդակցական նպատակադրումները, քանի որ լեզուն չէր կարող միջոց հանդիսանալ սխալ տեղեկույթի փոխանցման համար: Ըստ Տոմասելլոյի՝ ուշադրություն գրավող ժեստերը հետագայում փոխարինվում են ցուցական ժեստերով, իսկ շարժումները՝ համընկնող ձևերով (նույն տեղում, էջ 77-94): Մեր կարծիքով դրանք կարող էին լինել միայն պատկերանշանային ձևեր, երբ հնչյունական լեզվի բացակայության պայմաններում խոսողն իր ասելիքը ներկայացնում է օբյեկտիվ իրականության որևէ կարևոր հատկանիշ արտահայտող պատկերի կամ շարժումների միջոցով, և այդ

հատկանիշի վերաբերյալ ընդհանուր գիտելիքն էլ դառնում է տեղեկության փոխանակման հիմք: Այս պարագայում կարելի է համաձայնել Տոմասելլոյի այն տեսակետին, որ լեզվի զարգացումը ընթացել է մարդու ճանաչողական զարգացմանը զուգահեռ, որը պայմանավորված է եղել իրողությունները բացատրելու, կանխատեսելու և կարգավորելու անհրաժեշտությամբ: Ինչ վերաբերում է «լսողական» կամ հնչյունային լեզվի առաջացմանը, ապա, ըստ նրա, հնչյունական ձևերը նախապես եղել են զգայական օժանդակ միջոցներ ժեստերի արտահայտման ժամանակ, իսկ դրանց՝ որպես հաղորդակցական նշանների լիարժեք իրացումը պայմանավորված է եղել հեռավորության վրա տեղեկության փոխանակման անհրաժեշտությամբ (տես նույն տեղում): Ելնելով Յ. Գիննեկենի վերոհիշյալ տեսությունից՝ կարծում ենք, որ հեռավորության վրա հաղորդակցման անհրաժեշտությունը կարող էր առաջանալ մարդու հավաքչությունից որսորդական կացութաձևի անցման շրջանում:

Արդի գիտության մեջ լայն ճանաչում է գտել ամերիկացի լեզվաբան Ն. Խոմսկու վերը հիշատակված տեսակետը, որ շարահյուսությունը (կամ քերականությունը) մարդու բնածին կարողություններից է, որի ձեռքբերումն իր հերթին պայմանավորված է մարդուն բնորոշ մի շարք կարողությունների զարգացմամբ, ինչպես, օրինակ, հնչյունների արտաբերման գիտակցված կարգավորումը, որը տարբերում է մարդուն կենդանիներից: Մյուս կարողությունը արտաբերված հնչյունների վերծանումն է մարդու ուղեղային գործունեության օգնությամբ: Հարկ է նկատի ունենալ նաև մարդու բնախոսական կարողությունը, եթե հաշվի առնենք, որ հողաբաշխ խոսքի ձևավորման համար կարևոր դեր ունի նաև գանգի կառուցվածքը, որը տարբերվում է այլ բարձրակարգ կենդանիների գանգի կառուցվածքից: Գիտնականները վաղուց են նկատել, որ մարդը միակ կաթնասունն է, որ չի կարող միաժամանակ սնվել ու շնչել, և այդ «թերությունը» նպաստել է մարդու արտասանական կարողության զարգացմանը: Ենթադրվում է, որ այն բնորոշ չի եղել նեանդերթալյան մարդուն, որը թերևս այդ պատճառով էլ չի կարողացել գոյատևել: Այս ամենից հետևում է, որ միայն Homo sapiens-ն է օժտված եղել խոսելու կարողությամբ:

Անդրադառնալով Ն. Խոմսկու, Դ. Բիկերտոնի և այլ գիտնականների (հիմնականում ամերիկյան) այն հիմնարար տեսակետին, որ շարահյուսությունն է մարդու լեզվական կարողության ձևավորման վճռական գործոնը, ռուս լեզվաբան Բ. Յակուշինը գտնում է, որ, օրինակ, «Два-

Крюково-обратно» բառային շղթան, որը կարող է հանդիպել երկաթուղային կայարանում հաղորդակցման ժամանակ, տոմսավաճառի կողմից ընկալվում է այնպես, ինչպես «Не могли бы Вы продать мне два билета на электричку до станции Крюково, позволяющих доехать туда и вернуться обратно?» բարդ շարահյուսական կառույցը (Якушин Б., 2004, 112): Այսինքն՝ կոնկրետ իրավիճակում որքան մեծ է խոսողի և խոսակցի համար ընդհանուր տեղեկության ծավալը, այնքան փոքր է դրա փոխանակման համար անհրաժեշտ լեզվական ձևերի քանակը: Այս դրույթը հաստատում է նաև իր վերոհիշյալ գործում Մ. Տոմսելլոն, որի կարծիքով այդ հանգամանքը պարզորոշ արտահայտվում է նաև երեխայի, այսպես կոչված, «եսակենտրոն լեզվում», որը, տիրապետելով ամբողջ տեղեկության, այդուհանդերձ, իր ուշադրությունը կենտրոնացնում է առանձին տարրերի վրա և այդ պատճառով էլ լիակատար նախադասության փոխարեն գործածում է առանձին բառերից բաղկացած շղթա (տես Tomasello M., 2008, 147): Եթե ընդունելի ենք դիտում այս տեսակետը, ապա պետք է ենթադրել, որ նաև վաղնջական շրջանում շարահյուսությունը մարդուն անհրաժեշտ է եղել, որ խոսակցին փոխանցվի իրադրության այն ընդհանուր կադապարը, որը նախկինում բացակայել է: Այլ կերպ ասած՝ շարահյուսական միջոցների գործադրումը ուղղված է նրան, որ խոսակիցը լիարժեք պատկերացում կազմի, թե ով և ինչպիսի դեր ունի նկարագրվող իրադրությունում: Քանի որ այս խնդրի առավել ամբողջական վերլուծությունը պահանջում է նաև արտալեզվական փաստերի ներգրավում, ապա դրան առավել հանգամանակից կանդրադառնանք սույն աշխատության հաջորդ գլուխներում:

Ամփոփելով այս տեսակետները՝ նշենք, որ ընդհանուր առմամբ դրսևորվում է այն մոտեցումը, որ լեզվի ծագումը մարդկային ճանաչողության որակական փոփոխության արդյունք է, և այն տեղի է ունեցել հանկարծակի կամ թռիչքաձև: Այսպիսով, կարծես հիմնավորվում է վերը ներկայացված այն դրույթը, որ մարդու ծագումը ժամանակագրորեն նախորդում է լեզվի ծագմանը: Որոշ գիտնականներ (Յ. Տատտերսալ, Ջ. Մատերենս) կարծում են, որ այդպիսով կարելի է տարբերել հնագույն *Homo sapiens*-ի և նրա ժամանակակից տեսակի ժամանակաշրջանները: Ինչ վերաբերում է լեզվի թռիչքաձև զարգացմանը, նրանք կարծում են, որ հնագույն *Homo sapiens*-ը ևս օժտված է եղել խոսելու կարողությամբ, սակայն նրա մոտ բացակայել է պատկերավոր մտածողությունը,

որի պատճառով էլ լեզուն չի զարգացել: Հենց պատկերավոր մտածողության առաջացմամբ էլ տեղի է ունեցել ճանաչողության վերոհիշյալ որակական փոփոխությունը: Այսուհանդերձ, կրկին հարց է ծագում՝ հիշյալ փոփոխության արդյունքում առաջանում է մեկ ընդհանուր լեզու, թե առանձին և տարբեր լեզուներ: Ընդ որում, տվյալ խնդրի լուծումը հնարավորություն է տալիս պարզաբանելու նաև լեզվի և լեզուների թռիչքածն կամ աստիճանական զարգացման վարկածների հավանականությունը: Այս առումով, կարծես, առանց համեմատական լեզվաբանության մեթոդների գործադրման տվյալ խնդրի լուծումը հնարավոր չէ: Վերադառնալով Մ. Ռահլենի լեզուների ծագման վերաբերյալ տեսությանը՝ նշենք, որ նա այդ նպատակով գործադրում է լեզվական կապերի սահմանման մի նոր մեթոդ, որի հիմքում կրկին լեզուների հիմնական բառաֆոնդերի համեմատությունն է (տե՛ս Ruhlén M., 1996, p. 27-69): Ընդ որում, նա կարծում է, որ ճիշտ չէ, երբ լեզուների ցեղակցական կապերի բացահայտման համար նախ վերականգնում ենք արդեն մեռած նախալեզուն և հետո միայն ըստ այդ լեզվի սահմանում ենք հիշյալ կապերը: Ըստ նրա՝ նախ համեմատությունների միջոցով պետք է ապացուցել ցեղակցությունը և հետո միայն վերականգնել նախալեզուն և սահմանել հնչյունական օրենքներ, որոնք ի հայտ են գալիս ցեղակից լեզուների համեմատության ժամանակ: Ասենք, որ նման մոտեցում որդեգրել էր նաև ավանդական հնդեվրոպաբանության ներկայացուցիչներից Ե. Կուրիլովիչը (տե՛ս Kurilowicz J., 1973), որը կիրառվել է նաև մեր կողմից «Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն» աշխատության մեջ: Փաստորեն՝ Մ. Ռահլենն առաջարկում է ուսումնասիրության այն ուղին, որով բացահայտվել է հնդեվրոպական լեզուների ցեղակցությունը: Այս դեպքում, սակայն, կրկին առաջանում է այն խնդիրը, ինչ որ հնդեվրոպաբանության ձևավորման վաղ շրջանում. ինչպե՞ս առանձնացնել լեզուներում առկա հնատիպ տարրերը: Դասական հնդեվրոպաբանությունը, ինչպես գիտենք, ելնում էր այն բանից, թե որ ցեղակից լեզուն է ավելի վաղ գրավոր փաստերով վկայված, և այդ վկայություններն էլ համարում էր առավել հնատիպ: Ավանդաբար այդպիսին էին համարվում հին հնդկերենի (սանսկրիտի), հին հունարենի, ինչպես նաև զենդերենի և լատիներենի տվյալները: Հետագայում այս տեսակետը վերանայվեց, և լեզվաբանները հնատիպ ձևեր էին փնտրում նաև լեզուների ոչ գրավոր (բանավոր) կամ բարբառային տարբերակներում՝ գտնելով, որ դրանցում առկա շատ առանձնահատկություններ պետք է համարել

ավելի հին: Այս առումով նշենք, որ ավանդական համեմատաբանության սկզբունքներից ու դրույթներից ելնելիս տվյալ խնդիրը լուծել հնարավոր չէ, քանի որ դրանց հիման վրա կատարվող վերականգնումները վերացարկուններ են կամ միայն բանաձևային արժեք ունեն և բնական լեզուներին բնորոշ յուրահատկություններից չեն բխում: Մինչդեռ լեզվի զարգացման ցանկացած փուլի համար մենք պետք է ենթադրենք ոչ թե ինչ-որ քարացած կառուցվածք, այլ շարժուն և գործող համակարգ: Այլ կերպբնորոշմամբ, ինչպես նշում է ֆրանսիացի լեզվաբան Ժ. Վանդրիեսը, բնական լեզուները չեն կարող հասնել այնպիսի տրամաբանական կատարելության, ինչպիսին ունեն արհեստական լեզուները (Вандриес Ж., 1934, 27) ուստի ավանդական տարաբնույթ վերականգնումները արհեստական են և բնական լեզուների էությունը չեն արտացոլում: Արդի մի շարք գիտնականներ (Ս. Պինկեր, Բ. Վիկտորի, Ռ. Քելլեր և ուրիշներ) տարօրինակ են համարում այն փաստը, որ նույնիսկ նոստրատիկ լեզվաբանության ներկայացուցիչները այդ շրջանի համար վերականգնում են ընդհանուր առմամբ կատարյալ և համաչափ լեզվական համակարգ, թեև նրանցից շատերն ընդունում են նաև, որ իրականում մնացած համակարգ չէինք կարող ունենալ: Բացի դրանից, ինչպես վերը տեսանք, լեզվի ծագման համարյա բոլոր տեսություններում առկա է պատմական ժամանակամիջոցում լեզվի պարզագույն ձևերից ավելի բարդերի աստիճանական անցման տեսակետը: Հետևաբար, եթե կարողանանք լեզվում կամ լեզուներում որոշակի սկզբունքներով բացահայտել առավել հին ձևերը, ապա կլուծվի նաև բարբառային հնատիպության խնդիրը: Այս դեպքում վերլուծությունը կարելի է տանել նաև մասնավորից դեպի ընդհանուրը այն հիմնավորմամբ, որ ցանկացած կենդանի լեզու իր մեջ որոշակիորեն պահպանում է նաև հիշյալ ձևերը: Նման փորձ ձեռնարկվել է մեր կողմից, երբ հայերենի փաստերի հիման վրա փորձել ենք վերականգնել ոչ միայն ընդհանուր հնդեվրոպական, այլև նախահնդեվրոպական (կամ նոստրատիկ) շրջանից եկող ձևեր (տես Գաբրիելյան Յ., 2001): Այս պարագայում նախ անհրաժեշտ է ճշտել, թե մոտ 15.000 տարվա հնությամբ լեզվավիճակները կարող էին արդյոք ունենալ այնպիսի հնչյունական, ձևաբանական կամ քերականական կառուցվածքներ, որոնք բնորոշ են ժամանակակից լեզուներին: Վերը կատարված վերլուծությունները մեզ հուշում են, օրինակ, որ նախադասության այնպիսի կառուցվածք, որը բնորոշ է ժամանակակից լեզուներին, չէինք կարող ունենալ այն պարզ պատճառով, որ այդ շրջանում

մարդու աշխարհընկալումն ու լեզվամտածողությունն այլ է եղել, իսկ նախադասությունը, ինչպես գիտենք, մտածողության նյութական ձևն է: Բացի այդ, եթե ենթադրվում է, որ լեզվի զարգացման վաղ փուլերում գերակայել է բառնախադասությունը, հետևաբար այդ շրջանի համար ձևաբանական ու քերականական կազմիչների մասին խոսք լինել չի կարող: Անդրադառնալով նոստրատիկ շրջանում լեզուների հոլովական համակարգերի յուրահատկություններին՝ գտնում ենք նաև, որ կարելի է վերականգնել առավելագույնը երկու հոլովական ձև՝ սեռական և ար-սոլլուտիվ (տե՛ս Գաբրիելյան Յ., 2005): Ընդ որում սեռականն իր հայտ-նի իմաստով դեռ չի գործածվել, այլ ցույց է տվել ընդամենը առարկայի հատկանիշ: Բացի այդ, լեզուների ձևավորման վաղ փուլերում չէինք կարող ունենալ նաև կատարյալ հնչյունական համակարգեր, քանի որ լեզվական պարզագույն հաղորդակցման համար դրա անհրաժեշտու-թյունը չի եղել, և հիշյալ համակարգերը լեզուներում կատարելագործվել են աստիճանաբար և որոշակի միտումների հիման վրա: Այս հանգա-մանքը նկատել են նաև ավանդական համեմատաբանության ներկայա-ցուցիչները, որոնք, կոնկրետ փաստերից ելնելով, ցույց են տվել լեզու-ների վաղ փուլերում այս կամ այն հնչյունների բացակայությունը կամ նվազ գործառական հաճախականությունը, որոնք ավելի ուշ արդեն հստակորեն ամրագրվել են կոնկրետ համակարգում: Այս ամենից ելնե-լով՝ նոստրատիկ շրջանի համար մեր կողմից վերականգնվել է այնպի-սի հնչյունական համակարգ, որտեղ պայթական և պայթաշփական բա-ղաձայնները դեռ ամբողջությամբ չէին ձևավորվել, իսկ ձայնավոր հնչյունների փոխարեն հանդես էին գալիս տարբեր երանգավորմամբ թ¹, թ², թ³ կոկորդային հնչյունները³ (տե՛ս Գաբրիելյան Յ., 2001, էջ 148-153): Մեր պատկերացմամբ «նոստրատիկ» շրջանում ունեցել ենք հետևյալ բաղաձայնական համակարգը.

k' ք ք

k^h t^(h) փ

H₁ H₂ H₃

Ինչպես տեսնում ենք, այդ շրջանում ունեցել ենք միայն k^h -ն որ-պես լիարժեք ձևավորված պայթական, կատկային k' -ն համարյա չի


³ Այստեղ պետք է նկատի ունենալ, որ հետագայում թ¹ -ն վերածվում է i-ի, թ² -ն՝ u-ի, իսկ թ³ -ն՝ a-ի:

պահպանվել (բացառությամբ առանձին բարբառային ձևերի)⁴, իսկ միակ առաջնալեզվային պայթականը կարող էր իրացվել կամ պարզ է, կամ շնչեղ է⁵: Ինչ վերաբերում է ո, օ, օ, օ ձայնորդներին, ապա դրանք բնութագրվել են յուրահատուկ խլությամբ, իսկ չեզոք դիրքերում հանդես են եկել տարբեր երանգավորմամբ՝ H_j, H_w, H_h կոկորդայինները, որոնց հետքերը կարելի է տեսնել թե՛ հայերենում և թե՛ հնդեվրոպական ու ոչ հնդեվրոպական շատ լեզուներում (տե՛ս Գաբրիելյան Յ., նույն տեղում, էջ 123): Մեր այս դրույթներին կարելի է համաձայնորեն ծանոթանալ նշված աշխատություններում, իսկ այստեղ նշենք, որ դրանք համահունչ են լեզուների ծագման վերաբերյալ վերը ներկայացված ընդհանուր տեսություններին: Հետևաբար ելնելով նշված փաստարկներից՝ կարելի է բացահայտել այն լեզվական ձևերը, որոնք առավել հնատիպ բնույթ ունեն, ինչպես, օրինակ, հայերենի հին, քուն, տուն, հավ, կով, կաթ և այլ ձևերը, որոնք բխում են տվյալ համակարգից, պետք է դիտարկել ավելի հին, քան ասենք, դար, քեր, գեր, ծին, շուն կամ առավել ևս՝ ավելի բարդ ձևերը: Նույն կերպ այլ լեզուներում նույնպես կարելի է առանձնացնել տվյալ համակարգից բխող համապատասխան ձևեր, որոնք էլ հնարավոր է համարել առավել հնատիպ, քան մյուսները: Ամեն դեպքում կարծում ենք, որ այս տեսակետը՝ որպես տարբեր լեզուների փաստերի վրա հիմնված վարկած, նույնպես պակաս հետաքրքիր չէ, եթե նկատի ունենանք, որ այն հավանության է արժանացել նաև մի շարք հետազոտողների կողմից (տե՛ս Sprachreport, 2002): Նկատենք նաև, որ, եթե ելնում ենք այս վարկածից, ապա Մ. Ռահլենի կողմից վերականգնվող *tik* ձևը թվում է հավանական, քանի որ այն բխում է տվյալ համակարգից: Մյուս կողմից, սակայն, մեր կողմից վերականգնված համակարգը չունի այն հնությունը, ինչ ենթադրում են Մ. Ռահլենն ու մյուսները, և մենք առավել հակված ենք ընդունելու Հ. Գիննեկենի տեսակետը, որ լիարժեք հաղորդակցական նշանակությամբ լեզուն ձևավորվել է ավելի ուշ՝ միջին քարի դարաշրջանում: Միևնույն ժամանակ կարելի է ընդունել, որ այս փուլին նախորդել է պարզագույն հաղորդակցման լեզուն, որի հիմքում եղել են վարքային կամ ժեստային և բնածայնական ձևերը: Ասենք նաև, որ մենք ընդունում ենք այն գիտնականների տեսակետը, որ վերոհիշյալ լեզվի ձևավորման վաղ շրջանը համընկնում է մարդու որսորդական կացութաձևի, իսկ նոստրատիկ ընդհանրություն-

⁴ Այս համակարգում k-ն ցույց է տալիս հնագույն կատկային պայթականը, որը հիմնականում ավելի ուշ անհետանում է և պահպանվում է միայն մի քանի լեզուներում:

նը՝ հողագործության զարգացման փուլի հետ: Սույն պարագայում անհրաժեշտ է դառնում նաև վկայված լեզվական փաստերի հետ նոստրատիկ կամ վաղնջական շրջանի տվյալների համապատասխանեցման սկզբունքների մեկնաբանությունը, եթե նկատի ունենանք, որ ժամանակի ընթացքում լեզվական ձևերը անճանաչելիորեն փոխվում են: Այս առումով նշենք, որ ելնելով վերը հիշատակված այն դրույթից, որ նախապես գերակայել են պարզ արմատական ձևերը, ապա որոշակի հնչյունական օրենքների պարզաբանման դեպքում տվյալ խնդիրը առանձին բարդություններ չի հարուցում: Հիմք ընդունելով բնական լեզվաբանության մեջ ընդունված լեզվական միտումների զարգացման տեսությունները, ինչպես նաև ավանդական համեմատական լեզվաբանության կողմից կոնկրետ լեզվական փաստերի հիման վրա սահմանվող հնչյունական օրինաչափությունները՝ կարող ենք ցույց տալ, թե ինչպես է տեղի ունեցել նոստրատիկ շրջանին վերագրվող վերոհիշյալ հնչյունական համակարգի զարգացումը համահնդեվրոպական շրջանում:

հ.ե. I բարբառային խումբ նոստրատիկ հ.ե. II բարբառային խումբ⁵



Այս պատկերից հետևում է, որ համահնդեվրոպական վիճակը ձևավորվել է նոստրատիկ շրջանի համակարգի կատարելագործմամբ՝ երկու տարբեր միտումների հիման վրա, թեև վերջնական արդյունքում ունենում ենք նույն ընդհանրական համակարգը՝ իրացման տարբեր արդյունքներով: Այս փոփոխություններն իրենց հերթին նպաստում են նաև առանձին ծայնորդական (m, n, l, r, j, w) և ծայնավորական (a, o, e, i, u, ə) համակարգերի ձևավորմանը, որոնք բնորոշ են այդ լեզուներում պայթաչփական (ինչպես հայերենի ձ, ծ, ց, չ) և այլ կարգի ծայնավոր հնչույթների (ինչպես ռոմանական և գերմանական լեզուներում երկար

⁵ Համապատասխան փաստերի հիման վրա հայերենը հատկացվում է 2-րդ խմբին:

և կարճ, ռնգայնացած և այլն) առաջացմանը, ապա դրանք ձևավորվել են առանձին լեզվաճյուղերի ինքնուրույն զարգացման արդյունքում հնդեվրոպական միասնության քայքայումից հետո: Տվյալ դեպքում հարկ է նկատի ունենալ նաև, որ հետմորդ լեզուները պահպանում են ինչպես նոստրատիկ, այնպես էլ համահնդեվրոպական շրջանին բնորոշ հնչույթային համակարգերից բխող ձևերը: Վերջիններիս համար ասենք, որ ինչպես ցույց են տալիս ծագումնաբանական և տիպաբանական փաստերը, պարզագույն արմատական ձևերը (բացի բնածայնական արմատներից) կազմվում են տարբեր արտաբերման տեղով բնութագրվող հնչույթներով: Այսինքն՝ նոստրատիկ շրջանի համար հնարավոր են այնպիսի արմատական ձևեր, որոնց կազմում միաժամանակ կարող էին հանդես գալ միայն *k'-* և *q'-* և *h'-* և *h-* և *h₁-* և *h₂-* և *t'-* և *k'-* և *t'-* և *k'-* և *t'-* և *k'-* և *t'-* և *h₁-* և *h₂-* և *h₃-* և *h₄-* և *h₅-* և *h₆-* և *h₇-* և *h₈-* և *h₉-* և *h₁₀-* և *h₁₁-* և *h₁₂-* և *h₁₃-* և *h₁₄-* և *h₁₅-* և *h₁₆-* և *h₁₇-* և *h₁₈-* և *h₁₉-* և *h₂₀-* և *h₂₁-* և *h₂₂-* և *h₂₃-* և *h₂₄-* և *h₂₅-* և *h₂₆-* և *h₂₇-* և *h₂₈-* և *h₂₉-* և *h₃₀-* և *h₃₁-* և *h₃₂-* և *h₃₃-* և *h₃₄-* և *h₃₅-* և *h₃₆-* և *h₃₇-* և *h₃₈-* և *h₃₉-* և *h₄₀-* և *h₄₁-* և *h₄₂-* և *h₄₃-* և *h₄₄-* և *h₄₅-* և *h₄₆-* և *h₄₇-* և *h₄₈-* և *h₄₉-* և *h₅₀-* և *h₅₁-* և *h₅₂-* և *h₅₃-* և *h₅₄-* և *h₅₅-* և *h₅₆-* և *h₅₇-* և *h₅₈-* և *h₅₉-* և *h₆₀-* և *h₆₁-* և *h₆₂-* և *h₆₃-* և *h₆₄-* և *h₆₅-* և *h₆₆-* և *h₆₇-* և *h₆₈-* և *h₆₉-* և *h₇₀-* և *h₇₁-* և *h₇₂-* և *h₇₃-* և *h₇₄-* և *h₇₅-* և *h₇₆-* և *h₇₇-* և *h₇₈-* և *h₇₉-* և *h₈₀-* և *h₈₁-* և *h₈₂-* և *h₈₃-* և *h₈₄-* և *h₈₅-* և *h₈₆-* և *h₈₇-* և *h₈₈-* և *h₈₉-* և *h₉₀-* և *h₉₁-* և *h₉₂-* և *h₉₃-* և *h₉₄-* և *h₉₅-* և *h₉₆-* և *h₉₇-* և *h₉₈-* և *h₉₉-* և *h₁₀₀-* և *h₁₀₁-* և *h₁₀₂-* և *h₁₀₃-* և *h₁₀₄-* և *h₁₀₅-* և *h₁₀₆-* և *h₁₀₇-* և *h₁₀₈-* և *h₁₀₉-* և *h₁₁₀-* և *h₁₁₁-* և *h₁₁₂-* և *h₁₁₃-* և *h₁₁₄-* և *h₁₁₅-* և *h₁₁₆-* և *h₁₁₇-* և *h₁₁₈-* և *h₁₁₉-* և *h₁₂₀-* և *h₁₂₁-* և *h₁₂₂-* և *h₁₂₃-* և *h₁₂₄-* և *h₁₂₅-* և *h₁₂₆-* և *h₁₂₇-* և *h₁₂₈-* և *h₁₂₉-* և *h₁₃₀-* և *h₁₃₁-* և *h₁₃₂-* և *h₁₃₃-* և *h₁₃₄-* և *h₁₃₅-* և *h₁₃₆-* և *h₁₃₇-* և *h₁₃₈-* և *h₁₃₉-* և *h₁₄₀-* և *h₁₄₁-* և *h₁₄₂-* և *h₁₄₃-* և *h₁₄₄-* և *h₁₄₅-* և *h₁₄₆-* և *h₁₄₇-* և *h₁₄₈-* և *h₁₄₉-* և *h₁₅₀-* և *h₁₅₁-* և *h₁₅₂-* և *h₁₅₃-* և *h₁₅₄-* և *h₁₅₅-* և *h₁₅₆-* և *h₁₅₇-* և *h₁₅₈-* և *h₁₅₉-* և *h₁₆₀-* և *h₁₆₁-* և *h₁₆₂-* և *h₁₆₃-* և *h₁₆₄-* և *h₁₆₅-* և *h₁₆₆-* և *h₁₆₇-* և *h₁₆₈-* և *h₁₆₉-* և *h₁₇₀-* և *h₁₇₁-* և *h₁₇₂-* և *h₁₇₃-* և *h₁₇₄-* և *h₁₇₅-* և *h₁₇₆-* և *h₁₇₇-* և *h₁₇₈-* և *h₁₇₉-* և *h₁₈₀-* և *h₁₈₁-* և *h₁₈₂-* և *h₁₈₃-* և *h₁₈₄-* և *h₁₈₅-* և *h₁₈₆-* և *h₁₈₇-* և *h₁₈₈-* և *h₁₈₉-* և *h₁₉₀-* և *h₁₉₁-* և *h₁₉₂-* և *h₁₉₃-* և *h₁₉₄-* և *h₁₉₅-* և *h₁₉₆-* և *h₁₉₇-* և *h₁₉₈-* և *h₁₉₉-* և *h₂₀₀-* և *h₂₀₁-* և *h₂₀₂-* և *h₂₀₃-* և *h₂₀₄-* և *h₂₀₅-* և *h₂₀₆-* և *h₂₀₇-* և *h₂₀₈-* և *h₂₀₉-* և *h₂₁₀-* և *h₂₁₁-* և *h₂₁₂-* և *h₂₁₃-* և *h₂₁₄-* և *h₂₁₅-* և *h₂₁₆-* և *h₂₁₇-* և *h₂₁₈-* և *h₂₁₉-* և *h₂₂₀-* և *h₂₂₁-* և *h₂₂₂-* և *h₂₂₃-* և *h₂₂₄-* և *h₂₂₅-* և *h₂₂₆-* և *h₂₂₇-* և *h₂₂₈-* և *h₂₂₉-* և *h₂₃₀-* և *h₂₃₁-* և *h₂₃₂-* և *h₂₃₃-* և *h₂₃₄-* և *h₂₃₅-* և *h₂₃₆-* և *h₂₃₇-* և *h₂₃₈-* և *h₂₃₉-* և *h₂₄₀-* և *h₂₄₁-* և *h₂₄₂-* և *h₂₄₃-* և *h₂₄₄-* և *h₂₄₅-* և *h₂₄₆-* և *h₂₄₇-* և *h₂₄₈-* և *h₂₄₉-* և *h₂₅₀-* և *h₂₅₁-* և *h₂₅₂-* և *h₂₅₃-* և *h₂₅₄-* և *h₂₅₅-* և *h₂₅₆-* և *h₂₅₇-* և *h₂₅₈-* և *h₂₅₉-* և *h₂₆₀-* և *h₂₆₁-* և *h₂₆₂-* և *h₂₆₃-* և *h₂₆₄-* և *h₂₆₅-* և *h₂₆₆-* և *h₂₆₇-* և *h₂₆₈-* և *h₂₆₉-* և *h₂₇₀-* և *h₂₇₁-* և *h₂₇₂-* և *h₂₇₃-* և *h₂₇₄-* և *h₂₇₅-* և *h₂₇₆-* և *h₂₇₇-* և *h₂₇₈-* և *h₂₇₉-* և *h₂₈₀-* և *h₂₈₁-* և *h₂₈₂-* և *h₂₈₃-* և *h₂₈₄-* և *h₂₈₅-* և *h₂₈₆-* և *h₂₈₇-* և *h₂₈₈-* և *h₂₈₉-* և *h₂₉₀-* և *h₂₉₁-* և *h₂₉₂-* և *h₂₉₃-* և *h₂₉₄-* և *h₂₉₅-* և *h₂₉₆-* և *h₂₉₇-* և *h₂₉₈-* և *h₂₉₉-* և *h₃₀₀-* և *h₃₀₁-* և *h₃₀₂-* և *h₃₀₃-* և *h₃₀₄-* և *h₃₀₅-* և *h₃₀₆-* և *h₃₀₇-* և *h₃₀₈-* և *h₃₀₉-* և *h₃₁₀-* և *h₃₁₁-* և *h₃₁₂-* և *h₃₁₃-* և *h₃₁₄-* և *h₃₁₅-* և *h₃₁₆-* և *h₃₁₇-* և *h₃₁₈-* և *h₃₁₉-* և *h₃₂₀-* և *h₃₂₁-* և *h₃₂₂-* և *h₃₂₃-* և *h₃₂₄-* և *h₃₂₅-* և *h₃₂₆-* և *h₃₂₇-* և *h₃₂₈-* և *h₃₂₉-* և *h₃₃₀-* և *h₃₃₁-* և *h₃₃₂-* և *h₃₃₃-* և *h₃₃₄-* և *h₃₃₅-* և *h₃₃₆-* և *h₃₃₇-* և *h₃₃₈-* և *h₃₃₉-* և *h₃₄₀-* և *h₃₄₁-* և *h₃₄₂-* և *h₃₄₃-* և *h₃₄₄-* և *h₃₄₅-* և *h₃₄₆-* և *h₃₄₇-* և *h₃₄₈-* և *h₃₄₉-* և *h₃₅₀-* և *h₃₅₁-* և *h₃₅₂-* և *h₃₅₃-* և *h₃₅₄-* և *h₃₅₅-* և *h₃₅₆-* և *h₃₅₇-* և *h₃₅₈-* և *h₃₅₉-* և *h₃₆₀-* և *h₃₆₁-* և *h₃₆₂-* և *h₃₆₃-* և *h₃₆₄-* և *h₃₆₅-* և *h₃₆₆-* և *h₃₆₇-* և *h₃₆₈-* և *h₃₆₉-* և *h₃₇₀-* և *h₃₇₁-* և *h₃₇₂-* և *h₃₇₃-* և *h₃₇₄-* և *h₃₇₅-* և *h₃₇₆-* և *h₃₇₇-* և *h₃₇₈-* և *h₃₇₉-* և *h₃₈₀-* և *h₃₈₁-* և *h₃₈₂-* և *h₃₈₃-* և *h₃₈₄-* և *h₃₈₅-* և *h₃₈₆-* և *h₃₈₇-* և *h₃₈₈-* և *h₃₈₉-* և *h₃₉₀-* և *h₃₉₁-* և *h₃₉₂-* և *h₃₉₃-* և *h₃₉₄-* և *h₃₉₅-* և *h₃₉₆-* և *h₃₉₇-* և *h₃₉₈-* և *h₃₉₉-* և *h₄₀₀-* և *h₄₀₁-* և *h₄₀₂-* և *h₄₀₃-* և *h₄₀₄-* և *h₄₀₅-* և *h₄₀₆-* և *h₄₀₇-* և *h₄₀₈-* և *h₄₀₉-* և *h₄₁₀-* և *h₄₁₁-* և *h₄₁₂-* և *h₄₁₃-* և *h₄₁₄-* և *h₄₁₅-* և *h₄₁₆-* և *h₄₁₇-* և *h₄₁₈-* և *h₄₁₉-* և *h₄₂₀-* և *h₄₂₁-* և *h₄₂₂-* և *h₄₂₃-* և *h₄₂₄-* և *h₄₂₅-* և *h₄₂₆-* և *h₄₂₇-* և *h₄₂₈-* և *h₄₂₉-* և *h₄₃₀-* և *h₄₃₁-* և *h₄₃₂-* և *h₄₃₃-* և *h₄₃₄-* և *h₄₃₅-* և *h₄₃₆-* և *h₄₃₇-* և *h₄₃₈-* և *h₄₃₉-* և *h₄₄₀-* և *h₄₄₁-* և *h₄₄₂-* և *h₄₄₃-* և *h₄₄₄-* և *h₄₄₅-* և *h₄₄₆-* և *h₄₄₇-* և *h₄₄₈-* և *h₄₄₉-* և *h₄₅₀-* և *h₄₅₁-* և *h₄₅₂-* և *h₄₅₃-* և *h₄₅₄-* և *h₄₅₅-* և *h₄₅₆-* և *h₄₅₇-* և *h₄₅₈-* և *h₄₅₉-* և *h₄₆₀-* և *h₄₆₁-* և *h₄₆₂-* և *h₄₆₃-* և *h₄₆₄-* և *h₄₆₅-* և *h₄₆₆-* և *h₄₆₇-* և *h₄₆₈-* և *h₄₆₉-* և *h₄₇₀-* և *h₄₇₁-* և *h₄₇₂-* և *h₄₇₃-* և *h₄₇₄-* և *h₄₇₅-* և *h₄₇₆-* և *h₄₇₇-* և *h₄₇₈-* և *h₄₇₉-* և *h₄₈₀-* և *h₄₈₁-* և *h₄₈₂-* և *h₄₈₃-* և *h₄₈₄-* և *h₄₈₅-* և *h₄₈₆-* և *h₄₈₇-* և *h₄₈₈-* և *h₄₈₉-* և *h₄₉₀-* և *h₄₉₁-* և *h₄₉₂-* և *h₄₉₃-* և *h₄₉₄-* և *h₄₉₅-* և *h₄₉₆-* և *h₄₉₇-* և *h₄₉₈-* և *h₄₉₉-* և *h₅₀₀-* և *h₅₀₁-* և *h₅₀₂-* և *h₅₀₃-* և *h₅₀₄-* և *h₅₀₅-* և *h₅₀₆-* և *h₅₀₇-* և *h₅₀₈-* և *h₅₀₉-* և *h₅₁₀-* և *h₅₁₁-* և *h₅₁₂-* և *h₅₁₃-* և *h₅₁₄-* և *h₅₁₅-* և *h₅₁₆-* և *h₅₁₇-* և *h₅₁₈-* և *h₅₁₉-* և *h₅₂₀-* և *h₅₂₁-* և *h₅₂₂-* և *h₅₂₃-* և *h₅₂₄-* և *h₅₂₅-* և *h₅₂₆-* և *h₅₂₇-* և *h₅₂₈-* և *h₅₂₉-* և *h₅₃₀-* և *h₅₃₁-* և *h₅₃₂-* և *h₅₃₃-* և *h₅₃₄-* և *h₅₃₅-* և *h₅₃₆-* և *h₅₃₇-* և *h₅₃₈-* և *h₅₃₉-* և *h₅₄₀-* և *h₅₄₁-* և *h₅₄₂-* և *h₅₄₃-* և *h₅₄₄-* և *h₅₄₅-* և *h₅₄₆-* և *h₅₄₇-* և *h₅₄₈-* և *h₅₄₉-* և *h₅₅₀-* և *h₅₅₁-* և *h₅₅₂-* և *h₅₅₃-* և *h₅₅₄-* և *h₅₅₅-* և *h₅₅₆-* և *h₅₅₇-* և *h₅₅₈-* և *h₅₅₉-* և *h₅₆₀-* և *h₅₆₁-* և *h₅₆₂-* և *h₅₆₃-* և *h₅₆₄-* և *h₅₆₅-* և *h₅₆₆-* և *h₅₆₇-* և *h₅₆₈-* և *h₅₆₉-* և *h₅₇₀-* և *h₅₇₁-* և *h₅₇₂-* և *h₅₇₃-* և *h₅₇₄-* և *h₅₇₅-* և *h₅₇₆-* և *h₅₇₇-* և *h₅₇₈-* և *h₅₇₉-* և *h₅₈₀-* և *h₅₈₁-* և *h₅₈₂-* և *h₅₈₃-* և *h₅₈₄-* և *h₅₈₅-* և *h₅₈₆-* և *h₅₈₇-* և *h₅₈₈-* և *h₅₈₉-* և *h₅₉₀-* և *h₅₉₁-* և *h₅₉₂-* և *h₅₉₃-* և *h₅₉₄-* և *h₅₉₅-* և *h₅₉₆-* և *h₅₉₇-* և *h₅₉₈-* և *h₅₉₉-* և *h₆₀₀-* և *h₆₀₁-* և *h₆₀₂-* և *h₆₀₃-* և *h₆₀₄-* և *h₆₀₅-* և *h₆₀₆-* և *h₆₀₇-* և *h₆₀₈-* և *h₆₀₉-* և *h₆₁₀-* և *h₆₁₁-* և *h₆₁₂-* և *h₆₁₃-* և *h₆₁₄-* և *h₆₁₅-* և *h₆₁₆-* և *h₆₁₇-* և *h₆₁₈-* և *h₆₁₉-* և *h₆₂₀-* և *h₆₂₁-* և *h₆₂₂-* և *h₆₂₃-* և *h₆₂₄-* և *h₆₂₅-* և *h₆₂₆-* և *h₆₂₇-* և *h₆₂₈-* և *h₆₂₉-* և *h₆₃₀-* և *h₆₃₁-* և *h₆₃₂-* և *h₆₃₃-* և *h₆₃₄-* և *h₆₃₅-* և *h₆₃₆-* և *h₆₃₇-* և *h₆₃₈-* և *h₆₃₉-* և *h₆₄₀-* և *h₆₄₁-* և *h₆₄₂-* և *h₆₄₃-* և *h₆₄₄-* և *h₆₄₅-* և *h₆₄₆-* և *h₆₄₇-* և *h₆₄₈-* և *h₆₄₉-* և *h₆₅₀-* և *h₆₅₁-* և *h₆₅₂-* և *h₆₅₃-* և *h₆₅₄-* և *h₆₅₅-* և *h₆₅₆-* և *h₆₅₇-* և *h₆₅₈-* և *h₆₅₉-* և *h₆₆₀-* և *h₆₆₁*

հնդիրանական, հունարեն, հայերեն և այլ լեզուներ) ունենում ենք k , t , p , իսկ k , t , p -ի դիմաց՝ k^h , t^h , p^h և k^h , t^h , p^h -ի դիմաց՝ g , d , b : Ընդ որում, տվյալ դեպքում ևս հնդեվրոպական լեզուների ընդհանուր ծագումնաբանության դրույթը չի խախտվում: Միևնույն ժամանակ պարզաբանվում է նաև, թե ինչպես է տեղի ունեցել անցումը նոստրատիկ ընդհանրությունից համահնդեվրոպական վիճակին, ապա նաև՝ առանձին լեզվաճյուղերի ու լեզուների ձևավորումը, որի վերջնական արդյունքը արտացոլվում է Ա. Շլայխերի վերը ներկայացված «ծննդաբանական ծառի» պատկերում: Ինչ վերաբերում է նոստրատիկ ընդհանրությունից առաջացած սեմական և կովկասյան լեզուներին, ապա կարծում ենք, որ դրանց հնչյունական համակարգերը ևս բխում են նույն ելակետային համակարգից, սակայն՝ այլ միտումների հիման վրա: Թերևս այդ պատճառով է, որ նոստրատիկ ընդհանրությանը բնորոշ k' կատկային պահպանվել կովկասյան մի շարք լեզուներում, իսկ H_n , H_j , H_w կոկորդայինները՝ սեմական լեզուներում: Հետևաբար, հիշյալ լեզվաընտանիքների մեջ մտնող լեզուների հնագույն կամ դեռ նոստրատիկ շրջանից եկող ձևերը պետք է բխեցնել տվյալ ընդհանրական համակարգից (տե՛ս Գաբրիելյան Յ., 2001, էջ 163-176): Այս տեսակետը հաստատում են նաև Վ. Իլլիչ-Սվիտիչի նոստրատիկ լեզուների բառարանի տվյալները (տե՛ս Иллич-Свитыч В., 1971-1976): Այս ամենի հաշվառումով է, կարելի է ընդունելի համարել լեզուների միածագում տեսակետը՝ հեռավոր ցեղակցության, իսկ բազմածագում տեսակետը՝ առանձին լեզվաընտանիքների և հետնորդ լեզուների առաջացման առումով: Այս վարկածը, ինչպես վերը տեսանք, վիճարկվում է այն պատճառով, որ աշխարհի բոլոր լեզուների միջև կան կառուցվածքային ու գործառական այնպիսի նմանություններ, որոնք, թվում է, թե բացառում են դրանց բազմածագում բնույթը: Նշենք, որ իսկապես այդ նմանություններն առկա են, սակայն, դրանք ավելի շուտ վկայում են մարդու հիշյալ կարողությունների ընդհանրության մասին: Ինչ վերաբերում է այն փաստին, որ բոլոր լեզուներն ունեն հնչյունական ու ձևաբանական կառուցվածքներ կամ ընդհանուր տիպի քերականական արտահայտության միջոցներ, պետք է կարծել, որ դրանք ևս պայմանավորված են մարդու բնախոսական ու մտածողական կարողություններով: Այսպես, օրինակ, այն, որ բոլոր լեզուներում առկա է նախադասությունը՝ որպես հաղորդակցական միավոր, կարելի է բացատրել այն հանգամանքով, որ մարդն իր ճանաչողությամբ բնության մեջ գոյություն ունեցող իրերն ու երևույթներն ա-

ռանձնացնում է ըստ դրանց բնութագրական հատկանիշի, որը հատկացվում է կոնկրետ առարկային կամ երևույթին, իսկ մտածողության օգնությամբ կոնկրետ հատկանիշի վերագրումը կոնկրետ առարկային ստեղծում է նախադասության ընդհանուր կառուցվածքը: Այսինքն՝ հատկանիշի վերագրումը կամ ստորոգումը (պրեդիկացիան) առաջին հերթին տրամաբանական կարգ է: Իսկ ստորոգումը, ինչպես գիտենք, տարբեր լեզուներում իրականացվում է տարբեր միջոցներով՝ սկսած հնչերանգից մինչև օժանդակ բառերի գործածությունը: Ինչ վերաբերում է լեզվի հնչյունական կառուցվածքին, ապա նույնիսկ կենդանիների «լեզուն» ունի նման կառուցվածք, և այն պայմանավորված է մարդկանց բնախոսական ընդհանուր կարողություններով, արտասանական ապարատի նման գործողությամբ և այլն: Այստեղ կարելի է հիշատակել նաև ռուս լեզվաբան Ա. Բառուլինի այն դիտարկումը (տե՛ս Барулин А., 2008), որ տարբեր լեզուներում ձևերի հնչյունական և իմաստային կողմերի համընկնումը սկսվում է տարբեր մակարդակներից: Ընդ որում, այս երևույթը տարբեր աշխարհագրական տարածքներում տարբեր կերպ է տեղի ունենում: Օրինակ՝ հարավարևելյան ասիական լեզուներում (չինարեն, ճապոներեն, բիրմաներեն և այլն) հիշյալ համընկնումը տեղի է ունենում վանկերի և ձևության մակարդակում, իսկ հյուսիսարևելյան ասիական լեզուներում (ինչպես յակուտերեն, նենեցերեն, ինչպես նաև հյուսիս-ամերիկյան բնիկների լեզուներում)՝ միայն նախադասության մակարդակում: Լեզվաբանը կարծում է, որ եթե լեզուները բացարձակապես միաժառանգում լինեին, բոլոր լեզուներում հիմաստի համակցման ձևերը ևս պետք է նույնը լինեին (տե՛ս նույն տեղում, էջ 43-49): Չենք անդրադառնում նաև ոչ ցեղակից լեզուներում տարբեր քերականական ձևերին ու կազմիչներին, իսկ առկա ընդհանրությունների հիմքում կրկին կարծում ենք, որ մտածողությունն է: Այսպիսով, կարելի է խոսել ավելի շուտ մարդկային տեսակի համար ընդհանուր մտածողության մասին, որն էլ իր հերթին պայմանավորված է նրա կենսաբանական տիպով: Մեր կողմից ընդունվող տեսակետի օգտին է խոսում նաև այն փաստը, որ նոստրատիկ շրջանի համար թեև լեզուներում գտնում ենք բույսերի ու կենդանիների ընդհանուր անվանումներ, սակայն այդպիսիք չկան մշակաբույսերի կամ տմային և վայրի կենդանիների տարբերակման համար: Վերջին հանգամանքը նույնիսկ ստիպում է գիտնականներին հանգել այն եզրակացության, որ լեզուն առաջացել է ավելի վաղ՝ մինչև նոստրատիկ ընդհանրության առաջացումը:

Այս առումով վերը նշվեց, որ բազմաթիվ հետազոտողների կողմից ընդունելի է դիտվում նաև մինչ այդ լեզուների պարզագույն հաղորդակցման ձևերի գոյությունը, որոնք «կենդանականից» հիմնականում տարբերվում են իրենց հոդաբաշխ բնույթով: Նշենք նաև, որ ըստ ժամանակակից ուսումնասիրությունների՝ կենդանիները ևս հաղորդակցվում են հնչյունական ձևերով՝ միմյանց փոխանցելով տարբեր բնույթի զգայական իմաստներ: Միևնույն ժամանակ, ինչպես նոստրատիկ ցեղակցության տեսության վաղ շրջանի գիտնականների (Ջ. Գրինբերգ, Վ. Իլլիչ-Սվիտիչ, Վ. Շեվորոշկին, Բ. Դոլգոպոլսկի և այլն), այնպես էլ այստեղ առաջ քաշված դրույթների լիարժեք հիմնավորմանը խանգարում է այն հանգամանքը, որ բավականին մեծ ժամանակային հեռավորության պատճառով դժվար են բացատրվում բոլոր այն շեղումներն ու անկանոնությունները, որոնք ի հայտ են գալիս տարբեր լեզվաընտանիքների և տարբեր լեզուների փաստերը համեմատելիս, քանի որ դրանք հիմնականում պայմանավորված են տարաբնույթ արտալեզվական գործոններով:

Նշվածը նկատի ունենալով նախ փորձենք պարզել, թե վերոհիշյալ գերընտանիքներից որը կարելի է համարել ավելի վաղ առաջացած: Այդ նպատակով արդի մի շարք հետազոտողներ, ելնելով, այսպես կոչված, տարածքային (արեալային) լեզվաբանության սկզբունքներից, գտնում են, որ որքան հեռու է գտնվում լեզուն իր տարածման կենտրոնից, այնքան այն ավելի հին է: Եթե նկատի ունենանք, որ այս առումով լեզուների ծագման կենտրոններ են համարվում կամ Աֆրիկան, կամ Մերձավոր Արևելքը, ապա, բնականաբար, մի կողմից աշխարհագրորեն այդ կենտրոններից բավականաչափ հեռու տարածված ավստրալանեզական, հնդկախաղաղօվկիանոսյան, ամերինդյան ու կովկասյան գերընտանիքները և մյուս կողմից նեոգրակորդոֆանական աֆրիկյան լեզուներն ավելի հին են, քան նոստրատիկ և եվրասիական գերընտանիքների լեզուները: Սակայն ինչպե՞ս բացատրել այն հանգամանքը, որ մոտ 6000 տարվա և ավելի հնության լեզվական փաստերը վկայվում են հենց նոստրատիկ և եվրասիական լեզուներով այն դեպքում, երբ մյուսներից շատերը հիմնականում մինչ այժմ նույնիսկ գիր չունեն: Արդի տիպաբանական լեզվաբանության մի շարք ներկայացուցիչներ (Ջ. Գրինբերգ, Դ. Դոկ, Ռ. Լիբեր, Ք. Շիլդ և այլք), սակայն, գտնում են, որ զրի բացակայությունը կամ առկայությունը, ինչպես նաև վերը նշվեց, կոնկրետ լեզվի ծագման ու զարգացման պատմության հետ ուղղակիորեն

որևէ առնչություն չունի, և անգիր լեզուն կարող է երբեմն ավելի հին լինել, քան գրավոր վկայված լեզուն, քանի որ գրի առաջացումը պայմանավորված է տվյալ լեզվական հանրության մշակութային զարգացմամբ: Բացի դրանից, ըստ տարածքային լեզվաբանության սկզբունքների՝ իր ծագման կենտրոնից ավելի հեռու տեղափոխված լեզուն առավել պահպանողական է և կարող է ներառել ավելի շատ հնաբանություններ, քան կենտրոնական տարածքի լեզուները: Այս մոտեցմամբ կարելի է եզրակացնել, որ մոտ 60.000 տարի առաջ Ավստրալիայում հայտնված բնիկների լեզուն, օրինակ, պետք է իր կառուցվածքով ավելի մոտ լինի լեզուների հնագույն վիճակին: Ասվածը վերաբերում է նաև մոտ 40.000 տարի առաջ ամերիկյան մայրցամաքում հայտնված ամերիկահնդկացիական լեզուներին, ինչպես նաև նույն հնությանը նեոգրադոլիթյան աֆրիկյան լեզուներին: Նշված փաստերին գիտության մեջ առաջին հերթին տրվում են արտալեզվական հիմնավորումներ, ինչպես, օրինակ, հնագիտական, հասարակագիտական, մշակութաբանական, մարդաբանական և այլն: Այս առումով նշենք, որ վերոհիշյալ ժամանակագրավորումներն իրականացվել են նախևառաջ բազմաթիվ հնագիտական փաստերի ուսումնասիրությունների հիման վրա: Հասարակական կացութաձևերի և դրանց փոփոխության տեսանկյունից, ինչպես վերը նշվեց, լիարժեք հաղորդակցական լեզուն ձևավորվում է, երբ մարդն անցնում է նստակյաց ապրելակերպի, իսկ դրան նախորդում է պարզագույն հաղորդակցման լեզուն և այլն: Ամերիկացի գիտնական Կ. Ռենֆրյուն (Renfrew C., 2000, 34) Homo sapiens-ի աշխարհագրական տարածումը բացատրում է ինչպես կացութաձևային, այնպես էլ հասարակական հարաբերությունների ու բնակլիմայական պայմանների փոփոխություններով⁷:

Ամեն դեպքում ակնհայտ է, որ ըստ կառուցվածքի Homo sapiens-ի ծագման ընդունվող կենտրոնից ավելի հեռու տեղափոխված լեզուները հաղորդակցման ավելի պարզագույն ձևեր են ներկայացնում, ինչպես, օրինակ, ամերիկահնդկացիական լեզուներում բառ-նախադասությունների կողքին կիրառվում են նաև ժեստային միջոցներ: Նույնը կարելի է ասել ավստրալանեզական կամ հնդկախաղաղովկիանոսյան լեզուների

⁷ Այս առումով Լ. Կավալի-Սֆորցան գտնում է, որ հավաքությամբ և որսորդությամբ զբաղվող մարդկանց տարեկան տեղաշարժի հեռավորությունը կլինեի 30-50 կմ, հողագործներինը՝ 10-20 կմ, իսկ վերջին հարյուրամյակում եվրոպացի հողագործների տեղաշարժը կազմել է 5-10 կմ (տես Լ. Cavalli-Sforza, 1999, 70):

մասին: Միևնույն ժամանակ խոսքն այստեղ ընդամենը լեզվական տիպերի մասին է, և Homo sapiens-ի աշխարհագրական տարածման ձևերը ուղղակիորեն կապ չունեն համապատասխան հանրությների լեզուների ձևավորման հետ: Այլ կերպ ասած, եթե նոստրատիկ կամ ամերիկոյան գերընտանիքների լեզուների կրողները ծագում են Homo sapiens-ի նույն տեսակից, չի նշանակում, որ նրանց լեզուները ցեղակից են, քանի որ տարբեր լեզուներ ձևավորվել են հասարակական, պատմական, բնակլիմայական տարբեր և այլ պայմաններում: Ինչպես, օրինակ, աֆրիկյան բուշմենական որոշ ներասական լեզուների (երբ հնչյուններն արտաբերվում են ոչ թե թոքերից օդի հոսքի արտաշնչմամբ, այլ ներշնչմամբ) առանձնահատուկ բնույթը բացատրվում է բնակլիմայական պայմաններով, երբ անապատաբնակ ցեղերը ստիպված են խոսել փակ բերանով: Վերջինս առաջացնում է կոնկրետ լեզվի ոչ միայն յուրօրինակ հնչյունական, այլև ձևաբանական ու շարահյուսական կառուցվածք:

Վերադառնալով կրկին լեզուների նախնական աշխարհագրական տարածման վերաբերյալ 4. Ռենֆրյուի դրույթներին՝ նշենք, որ նրա կարծիքով հիշյալ երևույթը պայմանավորված է չորս տիպի գործընթացներով՝ գաղթ դեպի չբնակեցված տարածքներ, տարամիտում (դիվերգենցիա), զուգամիտում (կոնվերգենցիա) և տվյալ տարածքում լեզուների միմյանց փոխարինում: Եթե վերջինս բացակայում է, ապա լեզուների փոխարինման միակ պատճառ է մնում տարամիտումը, որի հետևանքով առաջանում է լեզվական բազմազանությունը՝ առանձին լեզուների մեկուսացմամբ: Այդպիսի գործընթացի արդյունք է Ավստրալիայի հյուսիսի փոքր տարածքներում բազմաթիվ լեզվաընտանիքների առկայությունը: Նման տպավորություն ենք ստանում նաև ամերիկահնդկացիական լեզուների տարածման պատկերն ուսումնասիրելիս: Միևնույն ժամանակ մի շարք լեզվաընտանիքներ, ընդհակառակը, գրավում են բավականաչափ մեծ տարածք, ինչպես, օրինակ, հնդեվրոպական լեզուները, որոնք տարածված են Եվրոպայից մինչև Յնդկաստան, որը պետք է բացատրել լեզուների միմյանց փոխարինմամբ: Այս դեպքում կարևոր դեր ունեն նվաճումները, երբ փոքրաթիվ, սակայն ուժեղ նվաճողները ստիպում են բնիկներին խոսել իրենց լեզվով: Այս երևույթը, իհարկե, ավելի ուշ է տեղի ունեցել, քանի որ տվյալ դեպքում ենթադրվում են նվաճողների մոտ ուժեղ կենտրոնացվածությամբ բնութագրվող հասարակական հարաբերություններ: Այս սկզբունքով են Եվ-

րոպայի մեծ մասում տարածվել լատիներենը կամ մ.թ.ա. 2-րդ հազարամյակում հնդեվրոպական լեզուները՝ դեպի արևելք (Հնդկական թերակղզու հյուսիսային տարածքներ և այլն): Այս ամենով հանդերձ, ըստ Ռենֆրյուի, լեզվաընտանիքների ինտենսիվ տարածումը տեղի է ունեցել 10.000 տարի առաջ՝ վերջին Սառցե դարաշրջանի ավարտից սկսած, քանի որ, նրա կարծիքով, լեզուների միջև ավելի վաղ ցեղակցական կապեր բացահայտել հնարավոր չէ (նույն տեղում, 48-67):

Նշենք, որ 4. Ռենֆրյուն բազմաթիվ գիտնականների նման բացարձակացնում է ժամանակագրությունը, երբ Սառցե դարաշրջանի ավարտին վերագրում է 10.000 տարվա հնություն, եթե նկատի ունենանք նաև, որ մի շարք այլ հետազոտողներ գտնում են, որ այն Աֆրիկայում կամ Մերձավոր Արևելքում կարող էր տեղի ունենալ ավելի վաղ՝ մոտ 15.000 տարի առաջ (տե՛ս Evolution of Human Languages, 1992, 64): Միևնույն ժամանակ ընդունելով լեզուների լիարժեք ձևավորման համար իսկապես կարևոր մարդու նստակյաց ապրելակերպի և հատկապես հողագործական զբաղմունքի անցման դրույթը՝ կարծում ենք, որ այն կիրառելի է ոչ բոլոր լեզուների զարգացման պայմանների բացահայտման համար, քանի որ ոչ համարժեք հիմնական բառաֆոնդերի, ձևաբանական և քերականական կառույցների համեմատության անհնարինությունը բացառում է նույն կամ նման կաղապարների սահմանումը բոլոր լեզուների համար: Ուստի կարծում ենք, որ համեմատաբար ավելի վաղ ձևավորված նոստրատիկ գերընտանիքը թե՛ իր տարածմամբ և թե՛ համապատասխան լեզվաընտանիքների ընդգրկմամբ կարող է հանդիսանալ լեզվական զարգացման այն հիմնական կաղապարը, որը կարելի է գործադրել նաև այլ գերընտանիքների առանձնահատկությունները բացահայտելիս: Այդ պատճառով մեր հետագա վերլուծությունները սահմանափակվելու են հիշյալ գերընտանիքով այն հիմնավորմամբ, որ նախ, ըստ ծագման, այս լեզուների ձևավորման ժամանակաշրջանը համընկնում է վաղ քարի դարի հետ, և տեսանելի են դրանց կապերը նաև միջին քարի դարի շրջանում: Վերջինս, ինչպես նշվեց, համընկնում է մարդու հողագործական զբաղմունքի անցման փուլի հետ, ինչն ապացուցվում է ինչպես հնագիտական, այնպես էլ լեզվաբանական փաստերով: Բացի այդ՝ այն տարածքը (Առաջավոր Ասիան և դրան հարակից տարածքները), որտեղ ձևավորվել է լեզուների նոստրատիկ ընդհանրությունը, բնութագրվում է կենդանի և մեռած լեզուների առատությամբ, ինչպես նաև մարդու հիշյալ կացութաձևը

հաստատող հնագիտական, մշակութաբանական և այլ կարգի փաստերով: Հետևաբար մեր կողմից վերը ներկայացված նոստրատիկ ընդհանրությանը վերագրվող յուրահատկությունները կարող ենք դիտել ելակետային: Ինչ վերաբերում է մյուս գերընտանիքներին, ապա ակնհայտ է, որ դրանք ձևավորվել են ոչ միաժամանակ մարդկային պարզագույն հաղորդակցման ձևերի հիման վրա՝ ըստ տարամիտման ու զուգամիտման տարբեր գործընթացների արդյունքների: Նկատի ունենալով նաև այդ լեզուների կառուցվածքային ու գործառական յուրահատկությունները՝ կարելի է կարծել, որ դրանց միջև ծագումնաբանական կապերը ձևավորվել են ավելի վաղ առաջացած միտումների հիման վրա:

Այսպիսով, ինչպես վերը նշվեց, նոստրատիկ գերընտանիքի կազմում մենք տեսնում ենք հնդեվրոպական, սեմական, կովկասյան և ուրալալթայան լեզուները, որոնք տարածված են եղել Միջագետքում և նրանից հյուսիս գտնվող տարածքներում: Անշուշտ, հիշյալ լեզվաընտանիքների միջև ևս փոխհարաբերությունները նույնական չեն, և կարծում ենք՝ հնդեվրոպական ու սեմական լեզուների միջև առնչություններն ավելի սերտ են, քան, ասենք, հնդեվրոպական և կովկասյան լեզուների միջև: Այս առումով կարելի է նշել, օրինակ, այն համագամանքը, որ թե՛ հնդեվրոպական և թե՛ սեմական լեզուներում «մարդ» հասկացությունը նույնականացվում է «հող» հասկացության հետ: Եբրայերենում adam «մարդ» և adamah «հող» ձևերը սերում են մեկ ընդհանուր արմատից, որը ծագում է նախասեմական ընդհանուր հիմքից: Լատիներեն homo «մարդ» և humus «հող» ծագում են համապատասխան նախահնդեվրոպական ձևից, որը, մեր կարծիքով, պետք է ունենար *H^wəom- (ավանդական՝ *dhegom-) տեսքը (տե՛ս Գաբրիելյան Յ., 2001, 175-178): Բացի դրանից՝ հիշյալ լեզվաընտանիքների առավել սերտ կապի օգտին են խոսում նաև բազմաթիվ փոխադարձ փոխառությունները, ինչպես նաև փոքրասիական տարածքում հայտնաբերված այն մշակութային գտածոները, որոնք դժվար է միանշանակ բնութագրել որպես հնդեվրոպական, սեմական կամ կովկասյան ծագման, քանի որ դրանք ունեն թե՛ մեկին և թե՛ մյուսին յուրահատուկ գծեր: Այդ պատճառով գիտնականները դրանք դիտում են որպես մեկ ընդհանուր մշակութային ժառանգություն և անվանում են ըստ իրենց հայտնաբերման վայրերի, ինչպես՝ հալաֆյան, չատալիույության, քուռարաքսյան և այլն: Եվ ամենակարևորը՝ բազմաթիվ փաստեր վկայում են, որ

վերոհիշյալ տարածքներում են տեղի ունեցել հողագործության զարգացումը և դրանով պայմանավորված մշակութային և հասարակական այլ փոփոխությունները: Այս առումով լեզվաբաններ Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը համապատասխան լեզվական փաստերի վերլուծությամբ ցույց են տվել, որ վերոհիշյալ լեզվական հանրույթներն ակնհայտորեն հողագործական զբաղմունքի կրողներ են եղել (տե՛ս Դամկրელიძე Т., Иванов В., 1981-84, 2, 22-54): Հարկ է նկատել նաև, որ բերված փաստերը բավականաչափ վստահելի են, քանի որ դրանք ընդգրկում են ինչպես լեզուների հիմնական բառաֆոնդերը, որոնք հազարամյակների ընթացքում քիչ են փոխվում և հազվադեպ են փոխարինվում օտար ծագման ձևերով, այնպես էլ հիշյալ զբաղմունքին վերաբերող բազմաթիվ ձևերը: Հետաքրքիր է, որ որոշ այլ գերընտանիքների լեզուների համար ևս (ինչպես, օրինակ, ավստրալանեզական կամ չինոիթեթական) նույն հողագործության զարգացման են առնչվում համապատասխան լեզվական զարգացումները (տե՛ս Renfrew C., 2000, 28-39): Ինչ վերաբերում է համապատասխան հնագիտական գտածոների ժամանակագրավորմանը, ապա ռադիոածխածնային մեթոդը վաղուց է ապացուցել իր վերլուծության լայն հնարավորությունները: Միևնույն ժամանակ, ինչպես վերը նշվեց, առանձին խնդիր է մշակութային փաստերի և համապատասխան լեզվական հանրույթների նույնականացումը, եթե նկատի ունենանք՝ այս դեպքում հնագիտական և լեզվաբանական տվյալները հաճախ հակասում են միմյանց: Կարծում ենք՝ պատճառն այն է, որ հնագետների կողմից որպես տեսական ընդհանրույթ ընդունվող «մշակույթ» հասկացությունը դժվար է նույնականացվում տարբեր լեզվական հանրույթների հետ:

Այս առումով հարկ է նշել, որ հիշյալ նույնականացման ընդհանուր հիմքը լեզուն է, որն իր հերթին ամենակարևոր համամարդկային մշակութային արժեքն է: Ուստի մշակութային մյուս փաստերը պետք է դիտել որպես օժանդակ միջոցներ կոնկրետ հանրույթի բնութագրման համար, թեև, ինչպես վերը նշվեց, որոշ դեպքերում առանց այդ փաստերի ներգրավման մի շարք խնդիրների լիարժեք պարզաբանումն անհնար է:

Հետևաբար, մեր վերը կատարած վերլուծությունները կարծես հաստատում են առանձին լեզուների բազմածագման դրույթը, որը հակադրվում է Մ. Ռահլենի և նրա տեսությանը հարող գիտնականների տեսակետներին: Վերջիններս շարունակում են իրենց հետազոտությունները լեզուների բացառապես միածագման տեսակետի հիմնավոր-

ման նպատակով: Ուստի անհրաժեշտ է դառնում նաև այդ տեսակետի հանգամանակից քննությունը:

Այսպիսով, ելնելով հիշյալ լեզվաբանների տեսակետից՝ տարբեր լեզուների միջև նմանությունների պատճառ կարող են լինել՝ ա) զուգամիտումը (երբ հանգամանքների բերումով դրանք հայտնվում են միևնույն աշխարհագրական տարածքում), բ) փոխառությունները (որոնք բավական հեշտ են տարբերակվում) և գ) լեզվական ցեղակցությունը: Ընդ որում, նրանց կողմից չի հիշատակվում ևս մեկ այլ չորրորդ պատճառ՝ պատահական նմանությունները:

Այստեղ պետք է հիշել դասական համեմատաբանության այն դրույթը, որ լեզվական ձևերի լիակատար նույնությունը տարբեր լեզուներում ցեղակցության ապացույց չի կարող լինել, եթե նկատի ունենանք, որ նույնիսկ մեկ լեզվի սահմաններում գրական լեզվի, ինչպես նաև բարբառային ձևերի միջև լիակատար նմանություն գոյություն չունի: Յետևաբար երկարատև պատմական զարգացում անցած տարբեր լեզուների նույն ձևերի միջև պետք է փնտրել օրինաչափ տարբերություններ, ինչպես, օրինակ, սնսկ. *dhura*, հայ. *durn*, զենդ. *dvara*, զերմ. *Tür*, ռուս. *dver* և այլն: Բացի դրանից՝ հարց է առաջանում, թե բերված ձևերից, որն է ավելի վաղ առաջացած: Ինչպես վերը նշվեց, ավանդաբար ենթադրում էին, որ եթե սանսկրիտի գրավոր հուշարձաններն ավելի վաղ են վկայված, քան մյուս լեզուներինը, ապա սանսկրիտի *dhura*-ն էլ ամենահինն է: Սակայն, ինչպես համոզվեցինք, գրի զարգացումն ուղղակիորեն չի առնչվում լեզվի ծագմանը, և այսօր էլ կան լեզուներ, որոնք դեռ գիր չունեն, սակայն ենթադրաբար ծագում են շատ վաղ ժամանակաշրջաններից: Միևնույն ժամանակ դժվար է գտնել այն նախնական ձևը, որից առաջացել են, օրինակ, հունարենի *dyo* և հայերենի *erku* (երկու) կամ անգլերենի *whul* և սանսկրիտի *cakra* «անիվ» ձևերը: Յեշտ չէ, ինչպես կարծում է Մ. Ռահլենը, նաև կոնկրետ լեզվում փոխառյալ ձևերի առանձնացումը, եթե նկատի ունենանք, որ դրանք հաճախ նաև միջնորդավորված փոխառություններ կարող են լինել, և փոխատու լեզուն մնում է անհայտ: Եվ վերջապես, եթե նույնիսկ աշխարհի լեզուները բացառապես միաժագում լինեին, ապա հազարավոր տարիների ընթացքում նրանք այնքան են փոխվել, որ նույն լեզվի տարբեր շրջաններից եկող փաստերը հաճախ դժվար են համադրվում:

Այսպիսով, լեզուների միաժագում տեսության վեճն ավանդական լեզվաբանական ուղղությունների հետ հանգում է նրան, թե որ դրույթ-

ներն են առավել գիտականորեն հիմնավորված: Ըստ ավանդական պատկերացումների՝ բոլոր լեզուները հարաբերականորեն կարճ ժամանակաշրջանում անճանաչելիորեն փոխվում են, և եթե որևէ մեկը պնդում է, թե x և y լեզուները ցեղակից են, դժվար է այն միանշանակ մերժել, քանի որ դրանց միջև նմանությունները հաստատվում են հնչյունական ու քերականական որոշակի օրինաչափություններով: Ասվածը չի նշանակում նաև, որ ավանդական լեզվաբանությունը բացառում է լեզուների միածագում տեսությունը, սակայն, վերոհիշյալից ելնելով՝ գտնում է, որ անհնար է պնդել, թե Kuan «շուն», Teku «ոտք, ազդր», Tik «մատ» և Tika «հող, գետին» ձևերը հնագույն ձևեր են եղել: Ավելացնենք նաև, որ լեզվի բնականության տեսության դիրքերից ոչ իրական են թվում նշված չորս ձևերից երեքի՝ տարբեր նշանակությունների պարագայում համարյա նույնական հնչյունական ձևերը, քանի որ լեզվի ծագման վաղ շրջանում դրանք ակնհայտ տարբերություններ պետք է ունենային, եթե նկատի ունենանք բնական լեզվաբանության այն դրույթը, որ ավելի վաղ առաջացած ձևերը բնութագրվել են ձևի և բովանդակության պատճառական կապով, որը աղոտանում է լեզվի զարգացման ավելի ուշ փուլերում: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ մարդու լեզվաունակության զարգացման տեսանկյունից պարզագույն լեզվական ձևերն իրոք միածագում պետք է լինեին, իսկ լիարժեք հաղորդակցման լեզուները բազմածագում են:

Միևնույն ժամանակ, անկախ այս եզրակացություններից, վերջնականապես ճշգրտված կարելի է համարել վերոհիշյալ այն տեսակետը, որ սկզբում զարգացել է մարդկային մտածողությունը, հետո՝ միայն լեզուն: Ինչ վերաբերում է ավանդական այն դրույթին, որ լեզուն և մտածողությունն առաջանում են միաժամանակ, կարծում ենք՝ իրական չէ, եթե նկատի ունենանք լեզվի վերը նշված փուլային զարգացման տարբեր տեսությունները: Հետևաբար վերոհիշյալ «Սկզբումն էր Բանը» արտահայտությունը պետք է վերծանել՝ «Սկզբումն էր միտքը (բանականությունը)»:

Լեզվի էությունն ու գործառնությունը

Ինչպես նշվեց սույն աշխատության նախորդ գլխում, լեզուն գոյություն ունի միայն մարդկային հասարակության մեջ և ծառայում է այդ հասարակության անդամների միջև հաղորդակցմանը: Ընդ որում, հիշյալ հաղորդակցումն ունի նախևառաջ անհատական բնույթ, եթե նկատի ունենանք, որ թե՛ խոսողը և թե՛ լսողը առանձին անհատներ են: Ինչ վերաբերում է լեզվի հասարակական էությանը, ապա այդ դեպքում նկատի է առնվում, որ կոնկրետ լեզուն ապահովում է նաև համապատասխան հանրույթի լեզվական հաղորդակցումը, քանի որ հասարակությունը մարդկային անհատների ամբողջությունն է: Բնականաբար, հարց է առաջանում, թե ինչպես է ընթանում հաղորդակցման գործընթացն առանձին անհատների միջև: Սույն հարցի վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ տեսակետներ ու դրույթներ, որոնք, սակայն, հաճախ հակասում են միմյանց: Տվյալ դեպքում հատկապես կարևոր է այն խնդրի պարզաբանումը, թե ինչպես է ձևավորվում անհատի խոսքը: Այդ նպատակով նախ անհրաժեշտ է ճշտել, թե ինչ համապարփակ առանձնահատկություններ կարելի է առանձնացնել, որոնք բնորոշ են մարդկային լեզվին ընդհանրապես: Ամերիկացի լեզվաբան Չարլզ Ջոքիտը, համադրելով հիշյալ լեզուն կենդանական այլ հաղորդակցական համակարգերի հետ, առանձնացնում է այդպիսի մեկ տասնյակից ավելի յուրահատկություններ (տե՛ս Hockett Ch., 2005), ինչպես՝ **իմաստայնությունը**, երբ լեզվի մի շարք տարրեր արտացոլում են շրջապատող աշխարհի առանձին տարրերը (ինչպես, օրինակ, *կաղույսն* արտահայտում է որոշակի գույն, *լսել* բառը արտահայտում է ընկալման որոշակի ձև և այլն): Որոշ վերջավորություններ, ինչպես -ել-ը *երգել* ձևում, ոչ մի կապ չունեն շրջապատող իրականության հետ: Այս առանձնահատկությանը սերտորեն առնչվում է լեզվական նշանների **կամայական** բնույթը, երբ կոնկրետ լեզվական ձևի և իմաստի միջև պարտադիր բնական կապ չկա: Կարևոր հատկանիշ է նաև համապատասխան ձևերի **արդյունքայնությունը**, երբ ելակետային սահմանափակ քանակով միավորներից կարելի է կազմել անսահմանափակ քանակով հաղորդակցական նոր միավորներ: Ասվածը հնարավոր է դառնում կամ գոյություն ունեցող միավորների զուգակցմամբ, կամ էլ հին ձևերին նոր իմաստներ հաղորդելով: Լեզվի այլ առանձնահատկություններից է **մշակութային փոխանցելիությունը**, երբ նկատի է առնվում, որ ցանկացած երե-

խա կարող է սովորել ցանկացած լեզու, քանի որ այն բնածին կարողություն է, սակայն այդպիսին չէ կոնկրետ բառերի, քերականական կանոնների և այլ երևույթների իմացությունը: Լեզվի ոչ պակաս կարևոր յուրահատկություններից են նաև նրա **տեղափոխելիությունը ժամանակի մեջ և ընդհատությունը**, երբ առաջին դեպքում կարելի է խոսել ոչ միայն «այստեղ և հիմա» կաղապարի հիման վրա, այլև ներկայացնել այն, ինչ արդեն տեղի է ունեցել կամ տեղի է ունենալու ապագայում: Ինչ վերաբերում է **ընդհատությանը**, ապա այստեղ հարկ է նկատել, որ ցանկացած լեզվում երկու ցանկացած արտահայտություններ միմյանցից տարբերվում են առնվազն մեկ հատկանիշով, օրինակ՝ *նրա գիրքը* և *նրա կիրքը* արտահայտությունները միմյանցից տարբերվում են միայն նրանց երկրորդ բաղադրիչների նախահար դիրքում **գ**-ի ձայնեղ և **կ**-ի խուլ արտաբերմամբ: Հետաքրքիր է նաև, որ լեզվում չկան մեկ միավորից մյուսի անցման սահուն և աննկատ ձևեր: Մարդկային լեզուն տարբերվում է կենդանականից նաև նրանով, որ դրանով կարելի է հորինել ոչ իրական կամ կեղծ տեղեկությ: Այդ հատկանիշի միջոցով կարելի է ստեղծել գեղեցիկ հեքիաթներ, գրել մտացածին պատմություններ և այլն: Նույն կերպ համարյա բոլոր գիտական վարկածները ձևակերպվում են լեզվի տվյալ հատկանիշի հիման վրա: Կառուցվածքի տեսանկյունից լեզվի կարևոր հատկանիշներից է նրա միավորների ստորակարգությունը, երբ նվազագույն իմաստակիր միավորներից կազմվում են ավելի բարդ միավորները, ինչպես՝ ձևույթներից կազմվում են բառերը, բառերից՝ բառակապակցությունները, բառակապակցություններից՝ նախադասությունները, իսկ վերջինները միանալով կազմում են տեքստ: Մյուս կողմից ձևույթներն իրենց հերթին տրոհվում են ավելի փոքր միավորների՝ հնչույթների, որոնք ինքնուրույն իմաստ չեն արտահայտում:

Միևնույն ժամանակ, ինչպես նշում է Հոբսիտը, լեզվի ոչ բոլոր բառերն են արտահայտում շրջապատող աշխարհի առարկաների, հատկանիշների և գործողությունների հասկացություններ: Այսպես, օրինակ, լեզուներում առկա հատուկ անուններն արտահայտում են եզակի առարկաներ, իսկ երկու անվանումների պատահական համընկումները ոչինչ չեն նշանակում: Ասվածն ակնհայտ է այն առումով, որ հեշտ է տարբերել ցանկացած «*գրիչ*» ցանկացած «ոչ *գրիչ*»-ից, քանի որ «գրիչ» բառն արտահայտում է առարկաների որոշակի դաս, սակայն հնարավոր չէ առանձնացնել ցանկացած «*Սոնս*»-ին ցանկացած «ոչ

Ա՜ոոս»-ից կամ ցանկացած «Արմավիր»-ին ցանկացած «ոչ Արմավիր»-ից տարբերող հատկանիշները:

Այս ամենով հանդերձ հարց է առաջանում, թե իսկապես վերը թվարկված հատկանիշները բնորոշ են միայն մարդկային լեզվին, և արդյոք կենդանիների մոտ ևս չի կարելի դրանք տեսնել թեկուզ մարդու կողմից ստեղծված որոշակի փորձառական իրավիճակում: Տվյալ խնդրի պարզաբանման նպատակով կարելի է դիմել բազմաթիվ այն փորձառական ուսումնասիրությունների արդյունքներին, որոնք նպատակ են ունեցել մարդանման կապիկներին սովորեցնելու մարդկային կամ, ինչպես զգուշորեն արտահայտվում են որոշ հետազոտողներ, այսպես կոչված, «միջնորդ» լեզուներ: Նման ձևակերպումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կապիկների ծայնաստեղծման ապարատը գործում է այլ կերպ, իսկ ուղեղում համապատասխան կառուցվածքների բացակայությունը, որի օգնությամբ հնարավոր կլիներ հնչարտաբերման կամային կարգավորումը, բացառում է մարդկային հնչյունային լեզվի տիրապետումը և դրա փոխարեն փորձ է արվում կապիկներին սովորեցնելու ոչ հնչյունային «միջնորդ» լեզուներ: Այս առումով հիշատակման են արժանի ամերիկացի գիտնականներ Ֆ. Պատերսոնի (Patterson F., 1986), Ջ. Մայլսի (Miles H., 1990) և այլոց հետազոտությունները, որոնք փորձել են տարբեր տեսակի մարդանման մի քանի կապիկների (գորիլլաներ, օրանգուտաններ և շիմպանզեներ) սովորեցնել խուլ-համրերի համար ստեղծված ամերիկյան «ամսլեն» (AmSLan - American Sign Language) լեզվի փոքր-ինչ ձևափոխված տարբերակը: Ընդ որում, այս տարբերակում «ամսլենի» քերականությունը կրճատված է և մոտեցված խոսակցական անգլերենին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համապատասխան լեզվական միջավայրի ստեղծման դեպքում կապիկները յուրացնում են հիշյալ «միջնորդ» լեզուն տարերայնորեն, ինչպես մանկահասակ երեխաները, սակայն նրանց մոտ առաջընթացը բավականաչափ երկար է տևում, քան երեխաներինը: «Ամսլեն» սովորող կապիկները կարողանում են կազմել նույնիսկ երկբաղադրիչ միավորներ և կիրառելով անգլերեն բանավոր խոսքի տարրեր՝ դրանց հատկացնել համապատասխան ժեստային նշաններ և այլն: Ընդհանուր առմամբ կոնկրետ փաստերի վերլուծությունները հաստատում են, որ կապիկների լեզվական կարողությունները կարող են հասնել մինչև 2-2.5 տարեկան երեխաների կարողությունների մակարդակին: Ըստ արդի մանկալեզվաբանա-

կան հետազոտությունների՝ հիշյալ տարիքում երեխան կատարելագործում է խոսքի գործադրման համար անհրաժեշտ մեխանիզմները՝ ճշգրտելով հնչման ու արտաբերման համապատասխանությունները և ակտիվացնելով շարժողական ու լսողական պատկերացումները (տե՛ս Bloom L., 2001, 47-64): Դրան նախորդում են, այսպես կոչված, «գղզղանքի» (3-7 ամսեականում) և «թթովանքի» (մոտ 1 տարեկանում) փուլերը, երբ երեխան նախ արտաբերում է զգացական տիպի ամբողջական սակայն կարճ բառեր, իսկ հետո փորձում է նաև համադրել առանձին հնչյուններ՝ համապատասխան ձևեր կազմելու նպատակով, ինչը տեսնում ենք նաև կապիկների լեզվական կարողության զարգացման ընթացքում: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ մտածողության առաջնայնության դրույթի պարագայում երեխայի և կապիկի լեզվական կարողությունների զարգացման պայմանները չեն կարող նման լինել: Յետևաբար կարևոր է դառնում երեխայի լեզվում հիշյալ պայմանների յուրահատկությունների բացահայտումը, որն ունի համապարփակ նշանակություն: Մինչ այդ նշենք, որ դեռ է. Յեկելից սկսած (տե՛ս Геккел Э., 1940)՝ բազմաթիվ գիտնականներ այն կարծիքն են հայտնում, որ երեխայի լեզվի ձևավորման ու զարգացման կաղապարը համընկնում է ընդհանրապես մարդկային լեզվի ծագման ու զարգացման կաղապարին: Միևնույն ժամանակ կարևոր է համարվում այն հանգամանքը, որ երեխայի ճանաչողության զարգացումը տեղի է ունենում հիմնականում լեզվի, իսկ կապիկներինը՝ իրենց կենսաբանական պահանջմունքների բավարարմանն ուղղված համապատասխան փորձի շնորհիվ: Ենթադրվում է նաև, որ վաղ շրջանում նախամարդը ևս իրեն շրջապատող աշխարհի ընկալումը իրականացրել է հիշյալ պահանջմունքների բավարարման գտիչի միջոցով, իսկ նրա գոյատևման ընթացքում տարբեր իրավիճակների մեջ հայտնվելը (հատկապես որսորդության շրջանում) նպաստել է անհրաժեշտ փորձի արագ ձեռքբերմանը: Այդպիսով մարդու մոտ կարելի է առանձնացնել առաջնային (քաղցի, ծարավի, ճանաչողության և այլն) և երկրորդային կամ հոգևոր (գերիշխողական, պատվախնդրական, բարոյական, էսթետիկական և այլն) պահանջմունքներ, որոնցից առաջինը անհատական, իսկ երկրորդը հասարակական պահանջմունքներ են: Բացի դրանից՝ մարդու հասարակական պահանջմունքները ձևավորվում են նրա այլ անհատների հետ շփման կամ հասարակական հաղորդակցման մեջ, որտեղ ի հայտ է գալիս այդ պահանջմունքների տեղեկատվական էությունը: Այս առումով նշենք, որ

կենդանի համակարգերի գոյատևման համար տեղեկության հոսքի դերն ավելի փոքր չէ, քան իրերի և երևույթների էներգետիկ հոսքը, քանի որ մարդու հոգևոր պահանջմունքները, ըստ էության, տեղեկատվական բնույթ ունեն։ Ասվածը մասամբ վերաբերում է նաև կենդանիներին, եթե նկատի ունենանք, որ առաջնային պահանջմունքների բավարարումը ապահովում է նրանց տեսակի պահպանման ու զարգացման պայմանները։

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ մարդու նույնիսկ առաջնային պահանջմունքների բավարարման գործընթացում կարևոր դեր ունի լեզուն՝ որպես հիմնական հաղորդակցման միջոց։ Ըստ ամերիկացի լեզվաբան Տ. Գիվոնիի (տե՛ս Givon T., 2009), մարդու և կապիկի հաղորդակցական համակարգերի տարբերության հիմնական պատճառը հաղորդակցման պայմանների տարբերության մեջ է։ Ժամանակակից մարդանման կապիկներն ապրում են ազգակիցների ոչ մեծ խմբերով, և իրենց բարդությամբ նրանց կապկային կառույցները զիջում են մարդկայինին։ Նրանք բոլորն էլ ամեն օր կատարում են համարյա նույն բանը, այդ պատճառով աշխարհի մասին նրանց պատկերացումները և նաև, թե ինչ է տեղի ունենում իրենց խմբում, առավելապես համընկնում են։ Հետևաբար, նման իրավիճակում հաղորդակցական ավելի բարդ համակարգի անհրաժեշտություն չկա։ Թերևս այդ պատճառով է, որ նրանց մոտ բացակայում է քերականությունը, թեև, ինչպես վերը նշվեց, կապիկներն ի զորու են տարբերել առարկաներ, հատկանիշներ կամ գործողություններ, ինչպես նաև այն, որ շնչավոր առարկաները կարող են առաջացնել գործողություն, իսկ անշունչները՝ ոչ։ Մինչդեռ, ինչպես կարծում է Տ. Գիվոնը, քերականության օգնությամբ մարդը արտահայտում է այն, ինչին տեղյակ է նաև խոսակիցը, իսկ երեխայի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քերականությունը նրա մոտ առաջանում է ոչ անմիջապես, այլ աստիճանաբար։ Այս է պատճառը, որ թե՛ երեխաների և թե՛ նախամարդկանց համար հաղորդակցման նախնական ձևը բառ-նախադասությունն է։ Ըստ Գիվոնի՝ հաղորդակցման պարզագույն միջոցները ցուցական ժեստերն ու հնչյունակազմություններն են, որոնք հետագայում վերածվում են ցուցական դերանունների (տե՛ս նույն տեղում, էջ 42-54)։

Այսպիսով, առաջին հերթին առաջանում է այն բնական հարցադրումը, թե մարդու մոտ ինչպես են ձևավորվում հաղորդակցման համար ելակետային հնչյունակազմությունները կամ լեզվական ձևերը։

Վերը նշվեց, որ մարդանման կապիկը, չնայած իր տարատեսակ կարողություններին, չի կարող արտաբերել հոդաբաշխ խոսք: Պատճառը, ինչպես ասվեց, այն է, որ մարդու քմային վարագույրն (լեզվակը) ու կոկորդի վերին մասը (մակկոկորդը) միմյանցից հեռու են գտնվում, և այդպիսով հնարավորություն է ստեղծվում լեզվակի օգնությամբ կարգավորելու թոքերից արտամղվող օդի հոսքը: Տվյալ դեպքում հարկ է նկատել, որ մարդու մոտ լեզվակը բարձրանալով և իջնելով փակում ու բացում է կա՛մ սնվելու, կա՛մ շնչելու ուղին: Մինչդեռ կապիկի կոշտ քիմքի հետին մասն ու ընկանը կազմում են փակվածք, որի շնորհիվ կենդանին կարող է միաժամանակ սնվել և շնչել, սակայն չի կարող կարգավորել օդի հոսքը: Հարկ է նշել նաև, որ նորածին երեխան նույնպես մեծանալով փակվածք է ունենում, և միայն մոտ 3 տարեկանում է նրա ընկանը իջնում, ինչը համարյա համապատասխանում է երեխայի կողմից լեզվի հնչյունական կողմի լիակատար յուրացման շրջանին: Մինչ այսօր գիտնականներն այս երևույթի վերաբերյալ տարբեր կարծիքներ են հայտնում, որոնցից մի մասը ենթադրում է, որ այն կենսաբանական հիմք ունի, իսկ մյուսները դրան հաղորդակցական նշանակություն են վերագրում: Ընդ որում, առաջին տեսակետի կողմնակիցները հիշյալ երևույթը բացատրում են մարդու կազմաբանական զարգացմամբ, իսկ մյուսները՝ արտահայտվելու կամ խոսելու կարողության ձևավորման անհրաժեշտությամբ: Որպես կարևոր փաստարկ առաջին մոտեցման կողմնակիցները նշում են այն համոզմանքը, որ կապիկների մոտ ևս իրենց կյանքի ընթացքում ընկանն իջնում է, սակայն ոչ այն չափով, ինչպես մարդու մոտ, ինչը պայմանավորված է մարդու և կապիկի գանգերի տարբեր կառուցվածքներով, նաև պետք է որպես ընդհանուր միտում դիտել: Երկրորդ մոտեցման կողմնակիցները պնդում են, որ մարդու ընկանի հիշյալ իջեցումը պայմանավորված է միայն հոդաբաշխ խոսքի ստեղծման անհրաժեշտությամբ, քանի որ այդպիսով լեզուն կարողանում է բերանի խոռոչում ազատ շարժվել ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց կերպով: Ինչ վերաբերում է կապիկների մոտ մեծանալով երևույթի առկայությանը, ապա դա նույնպես բացատրվում է հնչարտաբերական պատճառներով, եթե նկատի ունենանք, որ կենդանիները ևս որոշակի իրավիճակներում օգտագործում են ձայնային նշաններ: Երկրորդ տեսակետը ընդունելով հանդերձ՝ նշենք, որ ընկանի ցածր դիրքը լեզվաստեղծման միակ միջոցը չէ: Դրանում կարևոր նշանակություն ունեն նաև լեզվանկանի ճշգրիտ շարժումները, որոնք

կարգավորվում են համապատասխան նյարդային գործունեությամբ: Նույն կերպ ոչ պակաս կարևորություն ունի մարդու կողմից շնչառության գիտակցված կարգավորման կարողությունը, երբ, ի տարբերություն ոչ հոդաբաշխ ձայնարտաբերման, օդի հոսքը թոքերից բաց է թողնվում փոքր բաժիններով, որի արդյունքը վանկն է: Այս կարողությամբ մարդն ի վիճակի է կազմել բավական երկար արտահայտություններ, և այդպիսով մեկ արտահայտության սահմաններում կարելի է արտաբերել բազմաթիվ վանկեր, իսկ մեկ շնչով ամբողջական արտաբերման դեպքում հիշյալ արտահայտությունը ավելի կարճ է ստացվում: Այդ պարագայում լեզվի բառային կազմը ավելի փոքր կարող է լինել: Կազմաբանական առումով մարդու լեզվատակի ոսկորը ավելի ցածր դիրքում է գտնվում, քան բարձրակարգ կենդանիներինը, որը շնչափողի, ըմպանի և լեզվի տարբեր դիրքային հարաբերությունների հնարավորություն է ստեղծում, և այդպիսով ավելի բազմատեսակ են դառնում արտաբերվող հնչյուններն ու հնչյունախմբերը: Այս հանգամանքը նաև արտաբերման դիրքի արագ փոփոխության հնարավորություն է տալիս: Բացի այս յուրահատկություններից՝ նկատելի տարբերություններ գոյություն ունեն նաև մարդու և կապիկի լսողական կարողությունների և համապատասխան օրգանների գործունեության միջև: Երկարամյա փորձառական հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդուն առավել հստակ ընկալելի են 2-4 կիլոհերց հաճախականությամբ հնչյունները, և հենց այդ միջակայքում են իրացվում լեզվի հիմնական հնչյութային հատկանիշները: Մինչդեռ, օրինակ, շիմպանզեն համապատասխան հնչյուններն ընկալում է մոտ 1 կիլոհերց հաճախականության սահմաններում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրա հաղորդակցական նշանակությամբ երկար ճիչերը իրացվում են այդ հաճախականությամբ: Հետևաբար վերը հիշատակված բոլոր կարողությունների համար անհրաժեշտ է բավականաչափ բարդ ուղեղային գործունեություն, եթե նկատի ունենանք նաև, որ մարդկային հաղորդակցությունը ենթակա է նրա կամքին և ոչ թե զգացմունքներին: Այսինքն՝ մարդկային խոսքի ձևավորման համար հոգեկան գրգռված վիճակը պարտադիր չէ, այլ կարևոր է միայն խոսելու ցանկությունը, որը ղեկավարվում է ուղեղի մեծ կիսագնդերի կեղևային կառուցվածքների կողմից: Բարձրակարգ կենդանիների մոտ հակառակն է. նրանց ձայնարտաբերման համար անհրաժեշտ է արտաքին հանգամանքներով պայմանավորված գրգռվածություն, որը ղեկավարվում է արդեն ուղեղի ենթա-

կեղևային կառուցվածքների կողմից: Մինչև վերջերս գիտնականները կարծում էին, թե մարդու խոսքային գործունեությունը ղեկավարվում է նրա ուղեղի ծախ կիսագնդում տեղակայված Բրոկայի և Վեռնիկեի կենտրոնների կողմից, որոնք միասին կազմում են մարդու, այսպես կոչված, «լեզվական ուղիորդ»: Ընդ որում, Բրոկայի կենտրոնը պատասխանատու է խոսքի ձևավորման համար, իսկ Վեռնիկեի կենտրոնը՝ հիշողության: Սույն տեսակետի համար որպես փաստարկներ էին բերվում այն հանգամանքները, որ Բրոկայի կենտրոնի վնասման դեպքում մարդկանց մոտ խոսողական խնդիրներ են առաջանում, ինչպես, օրինակ, նրանք խոսելիս դժվար են անցնում ոչ միայն մեկ բառից մյուսին, այլև՝ նույնիսկ մեկ հնչյունից մյուսին: Նման հիվանդների խոսքը դանդաղ է, հնչարտաբերումը՝ ոչ հստակ, կազմվող արտահայտություններում բացակայում է տարրերի ճիշտ դասավորությունը, ինչպես նաև քերականական համապատասխան ձևավորումը: Հարկ է նշել, որ ոչ լեզվական գործունեության ժամանակ, ինչպես՝ ծամելու, սուլելու, գոռալու, երգելու և այլն, Բրոկայի կենտրոնի ոչ լիարժեք գործունեությունը որևէ հետևանք չի առաջացնում: Ինչ վերաբերում է Վեռնիկեի կենտրոնի գործունեության խաթարմանը, ապա այս դեպքում մարդու խոսքը արագացված է, քերականորեն ճիշտ, սակայն, բնութագրում է աղքատ բառապաշարով, ոչ ճիշտ բառագործածությամբ, ինչպես նաև սպասարկու բառերի առավել և անվանական ու բայական ձևերի նվազ կիրառությամբ (տե՛ս Gardner R., 1974, 117-169): Հետաքրքիր է, որ նույն երևույթը նկատվում է նաև խուլ-համրերի լեզվում:

Վերջին տասնամյակներում բժշկության, ինչպես նաև տեխնոլոգիական զարգացումները, սակայն, մարդու լեզվագործունեության վերաբերյալ նոր դրույթներ են առաջ քաշում, որոնք վերանայում են հիշյալ խնդրի վերաբերյալ ավանդական պատկերացումները: Դեռ նախորդ դարի 70-ական թվերին վիրաբույժ-բժիշկների կողմից կիրառվեց ընկնավորության (էպիլեպսիայի) բուժման մի նոր մեթոդ, ըստ որի՝ հիվանդի ուղեղի աջ և ձախ կիսագնդերը վիրաբուժական եղանակով առանձնացվում էին՝ այդպիսով վերացնելով ուղղակի կապը վնասված և առողջ կիսագնդերի միջև: Արդյունքում պարզվեց, որ մարդու լեզվական գործունեությանը մասնակցում են ոչ միայն Բրոկայի և Վեռնիկեի հիշյալ կենտրոնները, այլև ուղեղի բազմաթիվ այլ հատվածներ: Ընդհանուր եզրակացությունն այն էր, որ նշված լեզվագործունեությանը մասնակցում է մարդու ոչ միայն ձախ, այլև աջ կիսագնդերը. ձախ կի-

սագունդն ապահովում է լեզվի բառային և քերականական գործառնությունը, ինչպես նաև հնչյունական կողմի ձևավորումը, իսկ աջ կիսագունդը՝ լեզվի զգայական կողմը: Եվ ամենակարևորը՝ «լեզվական ոլորտը» կարող է տեղակայված լինել ուղեղի ոչ միայն ձախ, այլև աջ կիսագնդում: Վերջինս էլ պայմանավորում է առանձին անհատների ձախիկությունը: Այդպիսով աջլիկների 95-97 %-ի մոտ խոսքը ղեկավարվում է ձախ կիսագնդի, իսկ ձախիկների 70 %-ի մոտ՝ աջ կիսագնդի, մոտավորապես 13-15 %-ի մոտ՝ երկու կիսագնդերի կողմից (տե՛ս Невская А., Лейшина Л., 1990): Համապատասխան ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ երկու լեզուների իմացության պարագայում մարդու մոտ առաջանում է երկրորդ «լեզվական ոլորտը», քանի որ տարբեր լեզուները տեղակայվում են ուղեղի կամ նույն կիսագնդի տարբեր հատվածներում կամ տարբեր կիսագնդերում: Ընդ որում, նշված իրավիճակը կախված է այն բանից, թե ինչ հանգամանքներում է երկրորդ լեզուն յուրացվել՝ դպրոցում, թե՞ նախադպրոցական տարիքում՝ որպես մայրենի լեզու: Ըստ ամերիկացի գիտնական Ս. Պինկերի (տե՛ս Pinker S., 2003)՝ մարդու ուղեղի ձախ կիսագնդում տեղակայվում է այն լեզուն, որը վերջին շրջանում նրա հիմնական հաղորդակցման միջոցն է հանդիսանում, իսկ աջ կիսագնդում՝ այն լեզուն, որն ավելի քիչ է գործածվում: Եթե երկու լեզուներն էլ մարդու կողմից գործածվում են հավասարապես, ապա նրանք տեղակայվում են ուղեղի նույն հատվածում: Ընդ որում, Պինկերը չի բացառում, որ տարբեր մարդկանց մոտ հիշյալ տեղակայումները կարող են նաև տարբեր կերպ իրացվել (նույն տեղում, 67-85): Պարզվում է նաև, որ Բրոկայի կենտրոնի գործունեության խանգարման ժամանակ մարդու խոսքի խաթարումներն առավել ակնհայտ են վերլուծական (ինչպես անգլերենի, չինարենի և այլն), քան համադրական տիպի լեզուների կրողների մոտ: Ըստ Պ. Գրինֆիլդի դիտարկումների (տե՛ս Greenfield P., 1991)՝ լեզվի վերլուծական ձևերը (օրինակ՝ անգլ. have received «ստացավ» Present Perfect ձևը) խոսքում կազմվում են առանձին բաղադրիչներից որոշակի լեզվական կաղապարի հիման վրա, իսկ համադրական ձևերը հիշողության մեջ պահպանվում և վերարտադրվում են որպես մեկ ամբողջություն: Այդ պատճառով համադրական լեզուների կրողների խոսքի ձևավորման վրա ազդում են առավելապես Վեռնիկեի կենտրոնի գործունեության խաթարումները:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ լեզվական մեխանիզմն լիարժեք գործունեությանը մասնակցում են մարդու ուղեղի երկու կիսագնդերը միաժամանակ. ձախ կիսագնդում տեղի է ունենում հնչույթների, բառերի և նախադասությունների շարահյուսական կառուցվածքների վերլուծություն, իսկ աջ կիսագնդը ապահովում է տեքստի հաջորդականության ամբողջությունը, ինչպես նաև նրա հնչերանգային ձևավորումը: Այսպես, օրինակ, առանձին հնչույթներից կոնկրետ բառեր կազմելու համար (ինչպես նաև դրանք միմյանցից տարբերվեն) անհրաժեշտ է մտապատկերում ունենալ կոնկրետ հնչույթի իմաստատարբերակիչ հատկանիշները, որոնք, ըստ Ն. Տրուբեցկոյի, տարբերում են դրանք նրա մյուս՝ ոչ էական հատկանիշներից: Նույն կերպ առանձնացվում են նաև բառերի էական (ոչ տարբերակիչ) հատկանիշները, ինչը իրականացվում է ուղեղի ձախ կիսագնդի կողմից: Տեքստի ձևավորման տեսանկյունից բավական բարդ գործունեություն է կատարում ուղեղի աջ կիսագնդը, եթե նկատի ունենանք, որ միևնույն տեքստը կարելի է խոսքում իրացնել տարբեր երանգավորումներով՝ որպես հրաման, խնդրանք, պահանջ, չեզոք երանգավորմամբ տեղեկույթ և այլն: Այսինքն՝ այն, ըստ էության, հոգեկան գործունեություն է, որն ուղեղի ձախ կիսագնդի կողմից չի իրացվում: Այս առումով նշենք, որ գոյություն ունեցող, այսպես կոչված, «համակարգչային թարգմանիչները» կատարում են միայն մարդու ուղեղի ձախ կիսագնդի գործառնությունը և հիմնականում կարողանում են թարգմանել (այն էլ ոչ միշտ ճշգրիտ) առանձին բառեր, իսկ ամբողջական տեքստի լիարժեք թարգմանությունը հնարավոր չէ:

Ընդհանուր առմամբ նշենք, որ լեզվական նշանը մարդու ուղեղում պահպանվում է որպես շրջապատող իրականության տարրերի միջև համակարգային կապերի մտապատկեր, որն օժտված է իմաստային և ձևական կողմերով: Հաղորդակցվել կարողանալու համար երեխան պետք է իր լսածը համադրի տեսանելի իրականության հետ: Ըստ Է. Սպելկեի (Spelke E., 1996, 75-79) դիտարկումների, երբ մանկահասակ երեխային միաժամանակ ցուցադրում են երկու տարբեր և երկխոսություններով հագեցած ֆիլմեր, իսկ բարձրախոսով հնչվում է դրանցից միայն մեկը, ապա նա իր ուշադրությունը կենտրոնացնում է հենց հնչվող ֆիլմի վրա: Այս փորձը խոսում է այն մասին, որ մարդն իր ուղեղային գործունեությամբ համապատասխանեցնում է իրողության հնչողական կողմը նրա բովանդակությանը: Տվյալ դեպքում երկխոսության

մեջ ձայնի տարբեր ելևէջումները, նրա էներգետիկ ուժեղացումներն ու թուլացումները, ինչպես նաև հաճախականության փոփոխությունները ուղեղում ստեղծում են տեսամեղի իրողության հնչողական պատկերը: Այս ունակության շնորհիվ մարդը կարող է տարբերել հնչարտաբերմամբ շատ նման հնչյուններ, ինչպես, օրինակ, **բ** և **ա** հնչյունները, եթե նկատի ունենանք, որ այս հնչյունների ֆիզիկական բնութագրերը տարբերվում են միայն ձայնալարերի թրթռման տարբեր աստիճաններով: Հնչյունների նման ընկալումը լեզվաբանության մեջ կոչվում է «կարգային ընկալում», որը հիմնված է դրանց հակադրությունների վրա և բացառում է որևէ սահուն անցում մեկից մյուսին: Հետաքրքիր է, որ նման ունակությամբ օժտված են նաև կենդանիները (տես Kuhl P., 1995, 47-69): Հիշյալ «կարգային ընկալումը» հետևանք է, այսպես կոչված, «ձգողական գործողության», երբ ցանկացած լսվող հնչյուն, որը մոտ է խոսքի հնչյուններին, ընկալման ժամանակ ձգտում է նմանվել մտապատկերում գոյություն ունեցողին: Թերևս այս մեխանիզմն է գործում լեզվում փոխառյալ բառերի հնչյունական կողմի փոփոխության ժամանակ, երբ փոխատու լեզվի համապատասխան հնչյունը փոխառու լեզվում բացակայում է, ինչպես, օրինակ, լատ. sexta «վեցերորդ», ռուս. sexta, հայ. սեքստա և այլն:

Հարկ է նկատել, որ հիշյալ «կարգային ընկալման» գործընթացում որոշակի դեր կարող է կատարել նաև տեսողական վերլուծիչը, և եթե հնչեցնենք, օրինակ, *ba* վանկույթը՝ զուգահեռ ցուցադրելով *ga*-ի արտասանությունը, ապա խոսակիցը, ելնելով այն փաստից, որ բաց շուրթերով հնարավոր չէ արտաբերել *ba*-ն, այն ընկալում է որպես *da* (Mc Gurk H., 1976, 97):

Շատ կարևոր է այն հանգամանքի գիտակցումը, որ խոսքի արտաբերումը և ընկալումը տեղի են ունենում ավելի բարդ միավորների միջոցով, որոնցում ներառվում են հիշյալ նվազագույն ձևերը, ինչպես, օրինակ, երաժիշտների համար ցանկացած մեղեդի բաղկացած է ոչ թե առանձին նոտաներից, այլ երաժշտական դարձվածներից, կամ շախմատիստների համար խաղաքարերի տախտակի վրայի դիրքը ներկայացնում է ոչ թե առանձին խաղաքարեր, այլ դրանցից կազմված որոշակի խաղային իրավիճակ: Այստեղից հետևում է նաև, որ ինչպես նշված դեպքերում, այնպես էլ լեզվական հաղորդակցման ժամանակ հստակ ճանաչողական կաղապար կամ լեզվական օրգան գոյություն չունի, և իրականության ոչ լեզվական ու լեզվական ընկալման համար գործում

են նույն մեխանիզմները: Այդպիսով, լեզուն ոչ թե «իմքն իր մեջ» է, այլ փորձի ձեռքբերման ևս մեկ միջոց: Ինչպես ցույց են տալիս հոգեբանական ուսումնասիրությունները, եթե մարդուն ստիպենք անգիր անել առանձին նախադասություններ կամ փոքրածավալ տեքստեր, ապա նա այդ գործողությունը չի կատարի մեքենայաբար՝ առանց հասկանալու լսածը, չի կատարի, այլ դրանք կկապի որոշակի իրական կամ ոչ իրական իրավիճակի հետ և համապատասխան նյութի վերարտադրումը կիրականացնի ըստ այդ պատկերացման: Այստեղ ի հայտ է գալիս լեզվի և մտածողության փոխադարձ սերտ կապը և հատկապես այն, որ լեզվի տիրապետմամբ զգալիորեն շահում է մտածողությունը: Ինչպես նշում են Ս. Պինկերը և Ռ. Ջակենդոֆը (Pinker S., Jackendoff R., 2005), գոյություն ունեն մարդկային պատկերացումների այնպիսի ոլորտներ, որոնք կարելի է ընկալել միայն լեզվի օգնությամբ, ինչպես, օրինակ, *Շաբաթ* հասկացությունը հիմնված է ժամանակի հաշվարկի վրա և միաժամանակյա իրավիճակ չի ներկայացնում, ուստի դրա ընկալումը և ձևակերպումն առանց լեզվի հնարավոր չեն (նույն տեղում, էջ 217): Ընդհանրապես թվերի ընկալումը և վերարտադրումը (բացառությամբ աչքաչափով բնութագրվող քանակների) իրականացվում են միայն լեզվի միջոցով դրանց հաջորդականության յուրացման պայմաններում: Բացի դրանից՝ գոյություն ունեն մարդկային մտածողության այնպիսի յուրահատկություններ, որոնք հավանաբար ձևավորվել են այդ մտածողության զարգացման ընթացքում: Ասվածը առաջին հերթին վերաբերում է երեխայի լեզվի ձևավորման համար անհրաժեշտ յուրահատկություններին: Աշխարհ գալով երեխան ձգտում է բացահայտել լեզվի բառերը՝ որպես նշաններ վերծանելով իրեն շրջապատողների կողմից արտաբերվող հնչյունները: Մարդն ընդհանրապես ձգտում է ամենուր տեսնել նշաններ ու վերծանել դրանք, և, ինչպես նշում է Է. Բարբերը (Barber E., 2002, 79), մարդն ուժեղ է այն բանում, որ նա կարող է ելակետային փաստերի հիման վրա կատարել վերջնական եզրակացություններ՝ ելնելով փոքրածավալ տեղեկատվական նյութից: Մտածողության նման յուրահատկությունը թույլ է տալիս նրան վաղ հասակում յուրացնել մեծաքանակ բառեր՝ առանց պայմանական ազդակների, եթե նկատի ունենանք, որ կենդանիների մոտ նման երևույթի վարժեցումը իրականացվում է նրան ինչ-որ ձևով «պարզևատրելու» միջոցով: Մարդու մոտ խոսք լսելու ցանկությունն այնքան մեծ է, որ նա հաճախ փորձում է բնության մեջ հնչվող աղմուկից առանձնացնել բառեր: Ընդ

որում, նույն այդ ցանկությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ բառերի «փնտրտուքի» ժամանակ կարող է հաշվի չառնել դրանց ոչ հստակ ու ճշգրիտ արտաբերումը, քերականական ձևերից շեղումները և նույնիսկ ոչ ճիշտ բառագործածությունը: Նշված բոլոր իրողությունները, ըստ Մ. Տոմասելլոյի (Tomasello M., 2008), բխում են մարդկանց՝ միմյանց հետ համագործակցման ձգտումից: Նրա դիտարկումներով մարդիկ ավելի շատ են ձգտում համագործակցության, քան բարձրակարգ կենդանիները. նրանք կարող են ունենալ ընդհանուր նպատակներ, ընդհանուր գիտելիքներ ու համոզմունքներ և այլն: Անհատը, դիմելով մեկ այլ անհատի, ենթադրում է, որ խոսակիցը իր հետ համագործակցելու է. կարող է օգնել, եթե նրան խնդրում են, կընդունի իրեն հաղորդվող տեղեկությոնը և կփորձի կիսել ու հասկանալ խոսակցի պատկերացումները: Այդ պատճառով, օրինակ, *ծառավ եմ* արտահայտությունը, փաստորեն, հավասարազոր է *ջուր եմ ուզում* խնդրանքին, քանի որ մարդն իրեն ուղղված հաղորդակցական ակտը (ինչյունային կամ ժեստային ձևերով) ընկալում է խոսողի պատկերացումների հիման վրա (նույն տեղում, էջ 141-149): Հետաքրքիր է նաև այն փաստը, որ, այսպես կոչված, «կենդանական հաղորդակցման» ժամանակ առավելապես գերակշռում է խնդրանքը, մինչդեռ դեռ վաղ հասակից մարդու արտահայտությունների նպատակադրման ոլորտները բազմաբնույթ են, և երեխայի առաջին բառերն ու նույնիսկ ժեստերը կարող են խնդրանք չլինել: Մարդու կողմից վարժեցված կապիկների մոտ գերակայում են ցուցական ժեստերը, որոնց միջոցով նրանք արտահայտում են միայն իրենց ցանկությունները, բայց ոչ մի դեպքում այն, ինչ անհրաժեշտ է մարդուն, թեև ինչպես նշում է Տոմասելլոն, երբեմն սեփական մախածեռությամբ կապիկներն օգնում են մարդուն բարձրացնել «պատահականորեն» ընկած առարկաները:

Հարկ է նշել նաև, որ ի տարբերություն կենդանիների՝ մարդու մոտ առկա է այն հանգամանքի գիտակցումը, որ առարկաներն ունեն անվանումներ, և նա ձգտում է իմանալ դրանք, որպեսզի հետագայում կարողանա գործածել այդ անվանումները համապատասխան առարկաների բացակայության պայմաններում: Գիտնականների մեծ մասը այն դասում է մարդու բնածին կարողությունների թվին: Ենթադրվում է նաև, որ, երեխայի կարճիքով, բոլոր մարդիկ խոսում են նույն լեզվով, և հետևաբար բոլոր առարկաներն անվանվում են նույն ձևով: Միևնույն ժամանակ փաստերի իմացության անհրաժեշտությունը տարբերվում է անվա-

նունների իմացությունից, ինչպես, օրինակ, եթե մանկահասակ երեխային խնդրում են տալ տիկնիկը, որի անվանումն ինքն արդեն գիտի, ապա նա փնտրում և գտնում է այն, իսկ եթե խնդրում են տալ այն առարկան, որը սիրում են շները, ապա նա կարող է տալ ցանկացած պատահական առարկա: Այս պարագայում գիտնականները քննարկում են այն խնդիրը, թե գոյություն ունի արդյոք մարդու մոտ կոնկրետ լեզվի տիրապետումից անկախ, ընդհանուր մտածողական բառապաշար, որը լեզուներում տարբերվում է միայն ձևական կողմով, իսկ իր բնույթով ընդհանրական է: Ոմանք այդ բառապաշարն անվանում են «հասկացություններ», մյուսները՝ «պատկերացումներ» կամ «մտապատկերներ» և այլն: Նշենք, որ հիշյալ խնդրի պարզաբանումը կարևոր նշանակություն ունի թե՛ լեզվաբանության, թե՛ հոգեբանության և թե՛ մարդաբանության համար ընդհանրապես:


Սկսենք այն բանից, թե ինչպիսի բառապաշար է գործածում դեռ նոր խոսել սովորող երեխան: Ըստ համապատասխան ուսումնասիրությունների՝ 1-2 տարեկան երեխաներն անվանում են անձեր, ինչպես՝ *մամա, տատա, sasa*, կենդանիներ, ինչպես՝ *չուն, կասու, հավ, ծիս, կով* և այլն, խաղալիքներ, ինչպես՝ *սիկնիկ, գնդակ, մեֆենա, գիրք* և այլն, ուտելիք, ինչպես՝ *հաց, տանիր, կաթ, թեյ, ձու* և այլն, մարմնի մասեր, ինչպես՝ *գլուխ, nsf, ձեռք, աչք, փթ* և այլն, հագուստ, ինչպես՝ *գլխարկ, Շառիկ, ձեռնոց, վերարկու*, այդ թվում՝ նաև առօրյա գործածության *գդալ, ափսե, ուտել, խմել, քնել* և նմանատիպ այլ բառեր: Առաջին հայացքից էլ ակնհայտ է, որ այդ բառապաշարն արտահայտում է երեխային շրջապատող անձեր, առարկաներ ու երևույթներ, և այստեղ չկան վերացական մտածողությամբ ձեռք բերված հասկացություններ: Հիշյալ բառապաշարում, բացի անվանումներից, հիմնականում գերակայում են գործողության կերպ ցույց տվող բայերը, ինչպես՝ *ուտել, խմել, կծել, գնալ, վազել, թռչել* և այլն, իսկ վիճակ ցույց տվող բայերը համարյա բացակայում են: Վերջիններս ի հայտ են գալիս երեխայի բառապաշարում միայն 2-3 տարեկանում, ինչպես՝ *փոքր, մեծ, քաց, չոր, սափ, սառը* և այլն (տես Clark E., 1993): Նույն դիտարկումների համաձայն՝ միայն 3 տարեկանից երեխան սկսում է գործածել ներքին վիճակ արտահայտող բառեր, ինչպես՝ *ուրախ, տխուր, ցանկանալ, զայրանալ* և այլն, որոնք արտացոլում են նրա հոգեկան վիճակի վերաբերյալ իր պատկերացումները: Նկատելի է նաև այն հանգամանքը, որ երեխաները բառերն ավելի շուտ են հասկանում, քան դրանք արտաբերել կարողանալը, ինչը

կարծես վկայում է այն մասին, որ նրանց մոտ մտածողական բառերն ավելի շուտ են առաջանում, քան նրանց ձևական կողմը: Մի շարք հետազոտողներ, սակայն, կարծում են, որ երեխաների մոտ արտասանական կարողությունների համեմատաբար ուշ զարգացումը պայմանավորված է նրանց կազմախոսական հնարավորությունների ոչ լիարժեք ձևավորմամբ: Այլ կերպ ասած՝ երեխան հասկանում է, սակայն չի կարողանում խոսել, քանի որ նրա արտասանական օրգանները դեռ անհրաժեշտ չափով զարգացած չեն հնչարտաբերման համար: Գիտնականների մեկ այլ խումբ կարծում է, որ վաղ հասակում երեխան հասկանում է ոչ թե բառերի իմաստն ամբողջությամբ, այլ միայն կոնկրետ հասկացության տարբերակիչ հատկանիշը, որն էլ հիշյալ արտաբերական կարողության համեմատաբար ուշ ձևավորման պատճառ է: Ամեն դեպքում խնդիրը բավականաչափ բարդ է այն առումով, որ չկա որևէ հնարավորություն հիշյալ տեսակետները գործնականում ինչ-որ կերպ հիմնավորելու համար: Այդ պատճառով հրապարակում հիմնականում տեսական բնույթի վարկածներ ու եզրակացություններ են, որոնցից մի քանիսին կցանկանայինք այստեղ անդրադառնալ: Հիշյալ հետազոտողներից ամերիկացի է. Քլարկը (տե՛ս Clark E., նույն տեղում) ենթադրում է, որ բառային իմաստը բաղկացած է առանձին մասերից, որոնք ներկայացնում են իմաստային առանձին հատկանիշներ: Ըստ նրա տեսության, որը կոչվում էր «իմաստային հատկանիշների վարկած» (semantic features hypothesis), երբ երեխան սկսում է գործածել բառեր, ապա դրանք նրա մոտ դեռ չունեն այն իմաստը, ինչն առկա է մեծահասակների լեզվում, քանի որ, ի տարբերություն մեծահասակների, երեխան յուրաքանչյուր նոր բառ սովորելիս ընկալում է միայն դրա որոշ իմաստային հատկանիշները, որոնց օգնությամբ էլ պատկերացում է կազմում համապատասխան նշանակության մասին: Այսպես, օրինակ, երեխան սովորում է «շուն» բառը, որը նրա մոտ կարող է զուգորդվել կենդանու չորքոտանիության հատկանիշի հետ: Ըստ այդ հատկանիշի՝ նա կարող է «շուն» անվանել բոլոր չորքոտանի կենդանիներին, քանի որ «շուն» հասկացության մյուս հատկանիշները նա դեռ չի յուրացրել: Հետագայում նա աստիճանաբար սովորում է նաև այդ հասկացության այլ հատկանիշները, ինչպես այն, որ շունը, ի տարբերություն չորքոտանի և պոզավոր կովի, կարող է նաև հաչել, և այդպես շարունակ՝ մինչև կիսանի տվյալ կենդանուն բնորոշ բոլոր հատկանիշների յուրացմանը: Ըստ է. Քլարկի՝ վերջինս նախ տեղի է ունենում զգայարաններով ձեռք բերված հաս-

կացությունների հիման վրա, որոնք մարդկանց համար ընդհանրական են, իսկ հետո յուրացվում են նաև այլ մասնավոր հատկանիշներ, որոնք կախված են կոնկրետ լեզվական հանրության լեզվամտածողական առանձնահատկություններից (տե՛ս Clark E., 1995, 27-32): Այս առումով կարելի է նշել, օրինակ, որ «փիղ» հասկացության համար հնդիկների մոտ կարևոր է նրա կնճիթի առկայությունը, պարսիկների մոտ՝ նրա չափերի մեծությունը, իսկ արաբների մոտ՝ նրա շատ ջուր խմելը, կամ «ոչ-խար» հասկացության որպես մասնավոր հատկանիշ անգլիացիները դիտում են այդ կենդանու բրդատվությունը, ղազախները՝ կաթնատվությունը և այլն: Կարծում ենք, որ Է. Քլարկի և մի շարք այլ հետազոտողների կողմից առաջ քաշված վերոհիշյալ վարկածը հետաքրքիր է այն առումով, որ դրա հիման վրա կարելի է փորձել բացատրել ինչպես ածանցյալ բառային իմաստների, այնպես էլ հակառակ իմաստների առաջացման հանգամանքները: Ասվածը վերաբերում է հատկապես այն իրավիճակներին, երբ անհրաժեշտ է իմաստայնորեն տարբերակել միևնույն ընդհանուր հատկանիշներով բնութագրվող առարկաները, ինչպես, օրինակ, «ավտոմեքենա» հասկացությունը երեխայի մոտ նախապես տարածվում է ինչպես բուն ավտոմեքենայի, այնպես էլ տրամվայի, տրոլեյբուսի և նման այլ փոխադրամիջոցների վրա: Այս դեպքում գործում է, այսպես կոչված, «բառային առձգման» միտումը, երբ մեկ անվանումը տրվում է ընդհանուր որևէ հատկանիշով բնութագրվող, սակայն իրականում տարբեր առարկաներին: Ընդ որում, ինչպես նշում են հետազոտողները, հիշյալ առձգման երևույթը առկա է 1-3 տարեկան երեխաների մոտ, իսկ համապատասխան միտման տևողությունը նրանց մոտ տարբեր է և անհատական: Բացի դրանից՝ այդ երևույթը վերաբերում է լեզվի ոչ բոլոր բառերին, և այն ընդգրկում է հիմնականում զգայական ընկալման հասկացություններ, ինչպես՝ *սարժում*, *ծն*, *չափ*, *ծայն*, *համ* և այլն: Նկատենք նաև, որ թեև այդ հասկացություններն ընդհանրական են, սակայն ձևական առումով լեզուներում տարբեր են, ինչպես, օրինակ, եթե անգլախոս երեխայի համար շան հաչոցն արտահայտում է wau-wau, հայախոսի համար՝ հաֆ-հաֆ ձևը, կամ «թռչուն» ընդհանրական հասկացությունը հայախոս երեխան կարող է արտահայտել «ծիտ» ձևով, որը այլ լեզուներում, բնականաբար, նման ընկալման պարագայում այլ ձևերով է արտահայտվում: Ասվածը վերաբերում է նաև վերացականությամբ բնութագրող ընդհանուր ճանաչողական հասկացություններին, ինչպես, օրինակ, ժամանակի հասկա-

ցության հետ հարաբերակցվող «մինչև» և «հետո» ձևերին: Ըստ է. Քլարկի՝ այն կարելի է պատկերացնել հետևյալ կերպ (տե՛ս Clark E., նույն տեղում).

(+ժամանակ)



Այստեղ (+) և (-) նշանները ցույց են տալիս համապատասխան հատկանիշի առկայությունը կամ բացակայությունը: Հիշյալ երկու բառերի համար ընդհանուր են այսպիսով (+ժամանակ) և (-համընթացություն) հատկանիշները՝ անկախ կոնկրետ լեզվական իրացումից: Համապատասխան դիտարկումները ցույց են տալիս, որ երեխան մինչ «մինչև» և «հետո» ձևերի յուրացումը նախ սովորում է, որ բառերը ժամանակի հետ կապ ունեն (+ժամանակ), իսկ այնուհետև յուրացնում է (-համընթացություն) հատկանիշը՝ ենթադրելով, որ բառերը համընթացություն չեն արտահայտում: Դրան հաջորդում է (նախընթացություն) հատկանիշների յուրացումը, և այդպիսով նաև դրական և բացասական հատկանիշների տարբերակումը: Է. Քլարկի փորձառական ուսումնասիրություններից մեկում 3-5 տարեկան երեխաները խաղալիքների օգնությամբ նկարագրել են անգլերենի before (մինչև) և after (հետո) բառերի միջոցով արտահայտվող իրադարձությունների հաջորդականությունը: Արդյունքները հետևյալն են. սկզբում երեխաները չեն տարբերում այդ երկու բառերը միմյանցից և իրադարձությունները ներկայացնում են ըստ առարկաների գործադրման պատահական հաջորդականության, ինչպես՝ «Տղան ընկավ, հետո շոյեց տիկնիկին»: Այնուհետև նրանք սկսում են ճիշտ կիրառել «մինչև»-ը (before), իսկ «հետո»-ն (after) հաճախ շփոթում են «մինչև»-ի հետ, որը, մեր կարծիքով, վերոհիշյալ բառային առձգման հետևանք է, քանի որ որոշ ժամանակ այդ երկու բառերը երեխաների կողմից դիտվում են որպես հոմանիշ ձևեր: Ըստ է. Քլարկի վարկածի՝ միայն այն բանից հետո, երբ երեխաները

ըմբռնում են (-նախընթացություն) հատկանիշը կարող են արդեն գործածել «հետո»-ն:

Մի շարք գիտնականների կարծիքով, սակայն, Է. Քլարկի տեսությունը ճիշտ է թվում միայն այն բառերի համար, որոնք ներկայացնում են իրերի հատկանիշներ, իսկ վերացական հասկացություն արտահայտող բառերի դեպքում, ինչպես, օրինակ, *կենդանի, ընկերություն* և այլն, այն չի գործում: Ա. Բրաունի կարծիքով (Braun A., 2007) որոշ իրավիճակներում նույն *մինչև* և *հետո* բառերի գործածությունը կախված է նրանից, թե երեխան կոնկրետ իրավիճակների հաջորդականությունը դիտում է տրամաբանական, թե կամայական, ինչը կախված է համապատասխան արտահայտությունների բնույթից: Այսպես, օրինակ, եթե դիտարկենք «Ամնան կաթ է լցնում շիշը մինչև երեխային կերակրելը» նախադասությունը, որտեղ տրամաբանորեն մեկ իրադարձությունը հաջորդում է մյուսին (շիշը լցվում է կերակրելու համար), ապա «Երեխան գնում է քնելու, մինչև շունը փախչում է» նախադասությամբ արտահայտվող իրադարձությունների միջև որևէ տրամաբանական կապ չկա: Այդ նպատակով Ա. Բրաունը կատարել է համապատասխան փորձառական հետազոտություն՝ պարզելու, թե ինչպես են ընկալում 3-5 տարեկան երեխաները այն նախադասությունները, որտեղ իրադարձություններն ունեն տրամաբանական հաջորդականություն, և այնպիսիք, որտեղ դրանք կամայական են: Ընդ որում, ինչպես Է. Քլարկի մոտ, նրանք պետք է այդ իրավիճակները ներկայացնեին խաղալիքների օգնությամբ: Դիտարկումները ցույց են տվել, որ երեխաները ավելի հեշտ և արագ են յուրացնում և նկարագրում տրամաբանական հաջորդականություն ներկայացնող իրադարձությունները:

Հիշյալ խնդիրների պարզաբանման առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում մի շարք գիտնականների կողմից առաջ քաշված, այսպես կոչված, «գործառական միջուկի կաղապարի» տեսությունը (տե՛ս Nelson K., 1988, 2001): Այստեղ կարևոր է համարվում այն դրույթը, որ կոնկրետ հասկացությունները երեխան ձեռք է բերում համապատասխան փորձի շնորհիվ, քանի որ խոսքային գործունեության նախնական փուլում որոշակի հասկացությունները երեխայի մոտ դեռ անվանումներ չունեն: Այդպիսով, հիմնական գիտելիքը, որը նախապես ունենում է երեխան, թե ինչ կարելի է անել կոնկրետ առարկաների հետ, կամ ինչ կարող է անել երեխան, և երբ նա առարկային անուն է տալիս, բխում է այդ հատկանիշներից: Մեր դիտարկմամբ այս

պարագայում երեխան կարող է տալ անվանումներ, որոնք տվյալ լեզվում օրինաչափ չեն, ինչպես, օրինակ, քանդող, ջարդող հատկանիշով ընկալվող առարկան երեխան կարող է անվանել հայերենի բառապաշարին ոչ բնորոշ «քանդիչ» կամ «խփիչ» ձևերով: Այսինքն՝ երեխայի լեզվում իմաստային կառույցները մինչև նրա կողմից համապատասխան լեզվական ձևերի յուրացումը, ձևական ճշգրտությամբ դեռ չեն բնութագրվում: Այն աստիճանաբար է տեղի ունենում հասկացությունների անհատական և հասարակական ընկալումների համապատասխանեցմամբ: Այս պարագայում Կ. Նելսոնը խոսում է իմաստային նշանակությունների և հասկացական կառույցների տարբերակման անհրաժեշտության մասին՝ գտնելով, որ երեխան նախ յուրացնում է առաջինները և հետո միայն երկրորդները, քանի որ բառիմաստն ինքը հասկացական կառույց է: Բացի դրանից՝ ճանաչողական գիտելիքների տարբերության պատճառով երեխայի մոտ բառիմաստը ևս տարբերվում է մեծահասակների կողմից ընկալվող իմաստից: Ընդհանուր առմամբ վերոհիշյալ տեսության հետևորդների հիմնական դրույթն այն է, որ երեխաները նախապես ճանաչում են առարկաները՝ հիմնականում ըստ դրանց գործառնության հատկանիշների, իսկ հետո՝ այդ առարկաների հարաբերությունները այլ առարկաների կամ անձերի հետ: Ինչ վերաբերում է առարկաների կայուն կամ արտաքին հատկանիշների ընկալմանը, ինչպես, օրինակ, այն, որ գնդակը կլոր է, պինդ և այլն, ապա, նրանց կարծիքով, դրանց յուրացումը տեղի է ունենում գործառնության հատկանիշների յուրացմանը զուգահեռ (տես նաև Bloom L., 2001): Անդրադառնալով վերը նշված լեզվական շեղումներին ու բառերի ոչ ճիշտ գործածությանը՝ նշենք, որ այդ իրողությունը վկայում է այն մասին, որ բառիմաստը երեխայի մոտ ձևավորվում է սեփական փորձի հիման վրա և լեզվի համակարգից չի բխում, քանի որ երեխան դեռ այն չի գիտակցում: Հետևաբար կարելի է ասել, որ երեխան, օրինակ, «գնդակ» հասկացությամբ տիրապետում է իր ամբողջ ծավալով, եթե նա կարող է գործածել տվյալ առարկան անվանող բառը դրա բացակայության պայմաններում: Այսինքն՝ այդպիսով նույնականացվում են բառիմաստն ու հասկացությունը, և բառիմաստի միջուկը նույնականացվում է հասկացության միջուկի հետ:

Ընդհանուր առմամբ ներկայացված, «գործառնական միջուկի կադապարի» տեսությունը միանշանակորեն չի ընդունվում հատկապես հոգեբանների կողմից, քանի որ, նրանց կարծիքով, հոգեբանո-

րեն իրական չէ գործառական և ընկալողական գիտելիքների տարանջատումը, ինչպես, օրինակ, ինչպես՝ կարող է մանկահասակ երեխան գնդակը գլորել և միաժամանակ գիտակցել այդ գործողության էությունը՝ առանց գնդակի կլորավուն ձևի պատկերացման: Մինչդեռ, ինչպես նշում է Ս. Կարեյը (տե՛ս Carey S., 1998, 64), մոտ մեկ տարեկան երեխայի մոտ հիշյալ երկու կարողությունները միահյուսված են: Բացի դրանից՝ ինչպես վերը նշվեց, այդ երևույթները տեղի են ունենում երեխայի ուղեղում, և առայժմ դրանց էության բացահայտման համար համապատասխան միջոցներ ու ձևեր գոյություն չունեն: Մեր կարծիքով չնայած այս հանգամանքին, տվյալ տեսությունը, այնուամենայնիվ, որոշակի տեսական եզրակացությունների հնարավորություն է ընձեռում:

Քանի որ այստեղ մենք ելակետային ենք դիտում մտածողության առաջնայնության դրույթը, հարկ ենք համարում անդրադառնալ, այսպես կոչված, «հասկացական իմաստների» զարգացման վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետներին: Այս առումով հիշատակման են արժանի Է. Քլարկի, Ս. Կարեյի, Դ. Գենտների, Թ. Ջեյլերի և այլոց ուսումնասիրությունները, որտեղ հիմնական քննարկման նյութը բառիմաստների զարգացման հանգամանքների պարզաբանումն է: Ընդ որում, համապատասխան փորձառական հետազոտություններում այդ նպատակով ընդգրկվում են ավելի մեծ տարիքի երեխաները, որոնք սկսում են արդեն գործածել վերացական իմաստով բառեր, ինչպես՝ *ամրել*, *առխաճել*, *գնել*, *վաճառել* և այլն: Այս պարագայում հարկ է նկատել նաև, որ երեխայի մոտ ինչպես աշխարհի մասին պատկերացումներն են ազդում նրա լեզվի վրա, այնպես էլ լեզվական համակարգն է ազդում այդ պատկերացումների ձևավորման վրա: Վերջինս իր հերթին առանց մտածողության ու ճանաչողության հնարավոր չէ, և այդպիսով կարևոր է դառնում լեզվի և ճանաչողության փոխադարձ կապի բնույթի պարզաբանումը: Ինչպես նշում է շվեյցարացի հոգելեզվաբան Ժան Պիաժեն, մտածողությունը մարդկային ճանաչողության գլխավոր գործիքն է, որը մարդու կյանքի ընթացքում աստիճանաբար դառնում է առավել տրամաբանական և արդյունավետ (տե՛ս Piaget J., 1983, 27): Այստեղ կարևոր դեր ունի մտածողության վերընթաց բնույթը, որի ժամանակ մտածողությունն աստիճանաբար հեռանում է մարդու անմիջական զգայական ընկալումներից: Ասվածը Ժ. Պիաժեն հիմնավորում է հետևյալ փորձի միջոցով. երբ երկու նման բաժակները լցնում ենք հավասար քանակությամբ ջրով, ապա չորսամյա երեխան ճիշտ նկատում է

դա, իսկ երբ այդ բաժակներից մեկը փոխարինում ենք ավելի նեղ բաժակով, որտեղ նույն քանակի ջուրը ավելի բարձր է կանգնում, ապա երեխան կարծում է, որ այդ բաժակում ավելի շատ ջուր կա (նույն տեղում, 49): Երեխայի նման դատողությունը բացատրվում է այն բանով, որ նրա մտածողությունը դեռևս չի կտրվել անմիջական զգայական ընկալումից, և տվյալ դեպքում նա չի կարողանում բաժակների բարձրության և լայնության չափումների հարաբերությունը տարբերել: Իսկ երբ նույն փորձը կատարում ենք արդեն յոթ տարեկան երեխայի հետ, ապա նա կարող է բացատրել, որ բաժակներից մեկում ջուրը ավելի բարձր է կանգնում, քանի որ այն ավելի նեղ է: Հետևաբար կարող ենք ասել, որ այդ տարիքի երեխան արդեն ընկալում է լայնության և բարձրության չափումների փոխհարաբերությունը:

Ելնելով բոլոր այս տեսակետներից ու դրույթներից՝ ակնհայտ է, որ լեզվական ձևերի յուրացումը պայմանավորված է մարդկային ճանաչողությամբ, քանի որ առարկաների ու երևույթների կարգայնացումը կատարվում է ճանաչողության օգնությամբ:

Ինչպես վերը նշվեց, պարզ ձևակերպմամբ լեզուն բառերի ամբողջություն է, սակայն բառն ինքնին հաղորդակցական նշանակություն չունի, և այդ գործառույթը վերապահված է նախադասությանը, որը, ըստ էության, քերականական կառուցվածք է: Նույնիսկ այն լեզուներում, որտեղ կարող ենք առանձնացնել, այսպես կոչված, բառ-նախադասություններ, առկա է համապատասխան քերականական ձևավորում հնչերանգի և օժանդակ տարբեր միջոցների (ինչպես ժեստերի) օգնությամբ: Խնդրի բարդությունն այն է, որ առանձին բառերից կազմվող նախադասությունը արտահայտում է իրերի ու երևույթների տարաբնույթ հարաբերություններ, որոնց գիտակցումն ու արտահայտումը բավականաչափ բարդ գործընթացներ են: Այս առումով կարևոր է այն հայտնի դրույթը, որ նախադասությունն ունի ստորակարգային կառուցվածք, և նրա որոշ տարրեր իմաստաբանորեն ու ձևականորեն կախված են մյուս տարրերից: Եթե մի կողմ թողնենք բոլորիս հայտնի նախադասության գլխավոր և երկրորդական անդամների առանձնացման սկզբունքը, ապա ակնհայտ է, որ նախադասության մեջ որոշ տարրերի միջև առկա է ավելի սերտ ձևաիմաստային կապ, քան դրանց և մյուս տարրերի միջև: Այսպես, օրինակ, եթե դիտարկենք «Երիտասարդ ֆուտբոլիստի գեղեցիկ խաղը հիացրեց բոլորին» նախադասությունը, ապա տեսնում ենք, որ ըստ վերոհիշյալ կապի սերտության՝ առանձնանում են «երի-

տասարդ ֆուտբոլիստի» և «գեղեցիկ խաղը» բառակապակցությունները, որոնցից երկրորդն իր հերթին ավելի սերտ կապի մեջ է «հիացրեց բոլորին» արտահայտության հետ, քան առաջինը: Ընդհանուր առմամբ որպես տվյալ նախադասության գերակայող կապակցություն է հանդես գալիս «գեղեցիկ խաղը», որին ստորադասվում են «երիտասարդ ֆուտբոլիստի» և «հիացրեց բոլորին» արտահայտությունները: Բացի դրանից, ինչպես նշում է Ն. Խոմսկին (տե՛ս Chomsky N., 1995, 36), նախադասության ստորակարգայնությունն արտահայտվում է նրա ոչ միայն մակերեսային, այլև խորքային կառուցվածքով: Օրինակ, եթե դիտարկենք «Որոշ մարդկանց դժվար է հասկանալ» և «Որոշ մարդիկ անկարող են հասկանալ» նախադասությունները, ապա ըստ մակերեսային կառուցվածքի դրանք տարբեր են, իսկ խորքային կառուցվածքում, այնուամենայնիվ, նույնական են: Այստեղից հետևում է, որ լեզուները միմյանցից տարբերվում են իրենց նախադասության կազմության մակերեսային կառուցվածքով, իսկ խորքային կառուցվածքում նրանք համընկնում են: Ասվածը վերաբերում է նաև կոնկրետ լեզվին տիրապետող անհատների կողմից կազմվող նախադասություններին, որոնք նույն խորքային կառուցվածքի պայմաններում կարող են կազմել տարբեր մակերեսային կառուցվածքներ: Նկատենք նաև, որ խորքային կառուցվածքներում ընդհանուր առմամբ ունենք ինչպես համամարդկային, այնպես էլ համահանրության ճանաչողությունը, որի հիման վրա էլ ձևավորվում է համապատասխան լեզվամտածողությունը, իսկ նախադասությունը, ինչպես գիտենք, մտածողության նյութական ձևն է:

Թե ինչպես է կազմվում նախադասությունը, և ինչպես է այն կիրառվում հաղորդակցման մեջ, գիտնականներին հետաքրքրել է դեռ անտիկ շրջանից: Այդ ընթացքում առաջ են քաշվել տարաբնույթ տեսակետներ ու դրույթներ, որոնք այսօր էլ դեռ քննարկման առարկա են, քանի որ լեզվում քերականական երևույթները բազմաշերտ են և բազմատեսակ: Թերևս այդ պատճառով է, որ հետազոտողները կրկին դիմում են երեխայի լեզվի ուսումնասիրությանը: Նախորդ դարի վերջերին մի շարք ամերիկացի գիտնականներ (Մ. Բրայն, Վ. Միլլեր, Ս. Էրվին, Ռ. Բրաուն) իրականացրին փորձառական հետազոտություններ՝ պարզելու, թե նախադպրոցական տարիքի երեխան ինչպես է կազմում նախադասությունը, և այդպիսով ինչպես է դրսևորվում նրա լեզվական իրազեկությունը: Ստացված արդյունքները հակասական են, քանի որ, ըստ հիշյալ հետազոտությունների արդյունքների, տարբեր լեզվակիր-

ների մոտ նվազագույն շարահյուսական կառուցվածքները տարբեր կերպ են կազմվում: Պետք է ենթադրել, որ պատճառը լեզվամտածողությունների տարբերության մեջ է, եթե հիշենք, որ նախադասությունը մտածողության նյութական ձևն է: Այս առումով կարելի է հիշել վերը ներկայացված այն դրույթը, որ ինչպես լեզվի ծագման վաղ շրջանում, այնպես էլ երեխայի լեզվի ձևավորման նախնական փուլում անհատը նախապես տարբերում է առարկան և նրա տարբերակիչ հատկանիշը: Ոմանք նույնիսկ կարծում են, որ առարկայի անվանման հիմքում ևս նրա որևէ հատկանիշն է: Ֆրանսիացի լեզվաբան L. Տենիերը գտնում է, որ շարահյուսական նվազագույն կաղապարն ունի S+A (առարկա+հատկանիշ) կառուցվածքը, իսկ հատկանիշի վերագրումն առարկային տարբեր քերականական արտահայտության միջոցներով (կախված կոնկրետ լեզվից) ստեղծում է նախադասության քերականական կառուցվածքը, ինչպես, օրինակ, *հաջ զինվոր* կապակցությունը դեռևս նախադասություն չէ, քանի որ այստեղ հատկանիշի վերագրում (կամ ստորոգում) չկա, մինչդեռ *«Ձինվորը հաջ է»* կազմությունն արդեն ունի նախադասության արժեք: Այստեղ խնդիրը միայն այն է, թե ինչպես պետք է բացատրել այն հանգամանքը, որ նախադասությունն առավելապես կազմվում է բայ-ստորոգյալի միջոցով, իսկ Տենիերի կաղապարում ունենք հիմնականում ածական բաղադրիչ: Այս առումով նշենք, որ արդի լեզվաբանությունը բայերը ևս համարում է առարկայի հատկանիշ ցույց տվող բառեր, և ի տարբերություն ածականների, որոնք ցույց են տալիս առարկայի անփոփոխ հատկանիշ, բայերը ցույց են տալիս առարկայի փոփոխվող հատկանիշը ժամանակի մեջ (տե՛ս Գաբրիելյան Յ., 2006, 42): Այսպիսով, ըստ Տենիերի, նվազագույն շարահյուսական կառուցվածքները լեզուներում երկուսն են՝ A+S և S+A, և կախված է նրանից, թե կոնկրետ լեզվում համապատասխան լեզվամտածողությամբ տվյալ կազմություններից որն է առաջնային դիտվում, ձևավորվում է նաև համապատասխան շարահյուսական կառուցվածքը: Այսինքն, եթե այդ առումով առաջնային է դիտվում առարկան, ապա սովորական նախադասությունն ունենում է SVO (ենթակա-ստորոգյալ-խնդիր) կառուցվածքը, իսկ եթե առաջնային է դիտվում հատկանիշը, ապա՝ VSO (ստորոգյալ-ենթակա-խնդիր) կառուցվածքը: Այսպես, օրինակ, համապատասխան հետազոտությունները ցույց են տալիս, որ հին հայերենին բնորոշ է եղել VSO կաղապարը (տե՛ս Ջահուկյան Գ., 2003, 97), ինչպես՝ *«Դեծաւ արի արհայն Արսաւես...»*, կամ *«Ծանեաւ Դայկ*

գիտումը վառելոյ ջոկասին...» և այլն: Հետևաբար կարող ենք եզրակացնել, որ այդ շրջանում հայերենի լեզվամտածողությամբ առաջնային է դիտվել առարկայի հատկանիշը, իսկ ժամանակակից հայերենում, քանի որ առավելապես գերակայում է SVO կառույցը, առաջնային պետք է համարել առարկան: Ըստ ամերիկացի լեզվաբան Ջ. Գրինբերգի ուսումնասիրությունների՝ լեզուներում, բացի SVO և VSO կաղապարներից, հանդիպում են նաև SOV, VOS և շատ հազվադեպ OSV և OVS կաղապարները (տե՛ս Greenberg J., 1974, 111-132): Միևնույն ժամանակ, ինչպես վերը նշվեց, լեզուների զարգացման վաղ փուլում հատկանիշային ձևերի առաջնայնության պարագայում նախադասությանը պետք է բնորոշ համարել VSO կաղապարը: Ասվածը կարծես հաստատում են թե՛ լեզուների պատմական ուսումնասիրության և թե՛ երեխայի լեզվի փորձառական հետազոտությունների տվյալները: Միևնույն ժամանակ մի շարք գիտնականներ (Դ. Սլոբին, Տ. Բեվեր, Մ. Բովերման և այլք) գտնում են, որ ասվածը ճիշտ է միայն պատմական առումով, իսկ երեխայի լեզվում նման օրինաչափություն չենք կարող տեսնել, քանի որ երեխաներն ընդօրինակում են մեծահասակների խոսքը և նախադասությունները կազմում են այնպես, ինչպես մեծահասակները: Ավստրիացի գիտնական Վ. Մայերթալերը խնդիրը լուծում է այլ կերպ՝ գտնելով, որ երեխայի լեզվում կարող ենք տեսնել այնպիսի «բնական» կազմություններ, որոնք երեխան ստեղծում է ինքնուրույնաբար և մեծահասակների կողմից կիրառվող շարահյուսական կաղապարներից տարբեր են, իսկ քանի որ երեխան լեզվի յուրացման վաղ փուլում դեռ չի տիրապետում կոնկրետ լեզվում ստորոգման կանոններին, բնականաբար, չի կարող նախադասությունը մեծահասակների նման կազմել (Meyershaler W., 2007, 95): Այս դեպքում, սակայն, երեխան կարող է կազմել թե՛ A+S և թե՛ S+A նվազագույն կաղապարները: Այսինքն՝ առարկայի և նրա հատկանիշի գիտակցումը երեխայի մոտ համաժամանակյա բնույթ ունի, հետևաբար երեխան կարող է կազմել նախադասություններ ինչպես SVO, այնպես էլ VSO կաղապարի հիման վրա: Մեր կարծիքով լեզվաստեղծման և երեխայի կողմից լեզվի յուրացման գործընթացները տարբեր են, քանի որ առաջին դեպքում ելակետային է մարդու լեզվաուսմանությունը, իսկ երկրորդում՝ լեզվի կուտակիչ գործառույթը, որի հիմքում, անշուշտ, կրկին լեզվաուսմանությունն է: Ասվածը նշանակում է, որ երեխայի կողմից շարահյուսական կազմությունների ձևավորման գործում կարևոր դեր ունի փորձը, որը նրա տարիքի հետ աճում է: Ինչ

վերաբերում է Վ. Մայերթալերի կողմից հիշատակված, այսպես կոչված, «բնական կառույցներին», ապա դրանք արտացոլում են իսկապես երեխայի մտածողությունը, ինչպես նաև նրա փորձի պակասը, որը լրացվում է հետագայում: Հարկ ենք համարում նաև ճշտել, թե ինչ նկատի ունի Մայերթալերը՝ բնական կազմություններ ասելով: Այսպես, օրինակ, ըստ Մայերթալերի՝ նախադարձական տարիքի երեխաները, անկախ իրենց լեզվական պատկանելությունից, գոյականների եզակի և հոգնակի թվերը տարբերում են մեկ սկզբունքով՝ քիչ առարկաներ-քիչ հնչույթներ և շատ առարկաներ-շատ հնչույթներ՝ չնայած նրան, որ կոնկրետ լեզվում կարող են գործել նաև հոգնակի թվի կազմության այլ սկզբունքներ: Վերջիններս Մայերթալերը անվանում է «ոչ բնական» (կամ նշույթավորված) կազմություններ, իսկ առաջինը՝ «բնական»: Նույն կերպ նա բնական (կամ ոչ նշույթավորված) է համարում S+A և A+S մվազագույն կաղապարներն ու դրացից բխող SVO և VSO շարահյուսական կառուցվածքները, իսկ մյուս՝ SOV, VOS, OSV և OVS կաղապարները՝ ոչ բնական (կամ նշույթավորված): Մենք ևս համակարծիք ենք և գտնում ենք, որ պարզ պատմողական նախադասության համար SVO և VSO կաղապարները բոլոր լեզուների համար պետք է դիտել ընդհանրական, քանի որ հաղորդակցման գործընթացը, ըստ էության, արտացոլում է *ինչ-որ մեկը (S) ասում է (V) ինչ-որ բան կամ ինչ-որ բանի մասին (O)* կաղապարը: Ինչ վերաբերում է շարահյուսական մյուս կաղապարներին ու կառուցվածքներին, ապա դրանք իրերի ու երևույթների ավելի բարդ հարաբերությունների գիտակցման արդյունք են և ձեռք են բերվում ինչպես հանրույթի ճանաչողության զարգացման, այնպես էլ անհատի կողմից դրանց աստիճանական յուրացման ընթացքում: Այսուհանդերձ հաղորդակցման գործընթացն ինքնին բավականաչափ լեզվահոգեբանական բարդերևույթ է, և միայն նախադասություն կազմելու ունակությունը մարդու կողմից բավարար չէ այդ գործընթացը լիարժեքորեն ըմբռնելու համար: Այս առումով հատկապես կարևոր է այն խնդրի պարզաբանումը, թե ինչպես է ձևավորվում երկխոսությունը: Վերջինս այն չէ, երբ երեխան խոսում է միայն «այժմ և հիմա» կաղապարի հիման վրա իրերի և երևույթների մասին, քանի որ մեծահասակները հաճախ խոսում են դրանցից վերացարկված՝ գործածելով համապատասխան լեզվական ձևեր ու միջոցներ: Հետևաբար հարց է առաջանում, թե երեխայի մոտ ինչպես է զարգանում լեզվական միջոցներով տեղեկույթի ընկալման և նույն կերպ դրա արտահայտման կարողությո-

յունը: Ըստ ամերիկացի հոգեվեգվաբան Լ. Բլումի (տե՛ս Bloom Լ., 1991) ուսումնասիրությունների՝ մոտ երկու տարեկան երեխան ընդօրինակում է մեծահասակների խոսքը, որը չի նշանակում, անշուշտ, երկխոսության թեմայի նույնություն: Այսպես, օրինակ (տե՛ս նույն տեղում, 45-47).

Մ. (մեծահասակ) – Where are the children?

(Որտե՞ղ են երեխաները):

Ե. (երեխա) – want get down

(ուզում եմ իջնել)

Երբեմն երեխան գործածում է նույն թեմայի վերաբերյալ արտահայտություններ՝ մասամբ ընդօրինակելով մեծահասակների խոսքը, ինչպես՝

Մ. – She might pinch her fingers.

(Նա կարող էր մատը ծակել):

Ե. – pinch her fingers

(մատը ծակել)

Հետագայում երեխաների խոսքը զարգանում է այն աստիճանի, որ թե՛ բովանդակային և թե՛ լեզվական առումով այն լիարժեք կարող է հաճախել մեծահասակների խոսքին և նույնիսկ ընդլայնել այն, ինչպես՝

Մ. – I see two.

(Ես տեսնում եմ երկուսը):

Ե. – I see two buses come here.

(Ես տեսնում եմ՝ երկու ավտոբուսներ են գալիս):

Բլումի կարծիքով նախնական փուլում երեխայի խոսքը տարերային է, քանի որ այն վերաբերում է մեծահասակի տեղեկության միայն արտաքին կողմին, իսկ հետագայում՝ նրա ճանաչողության զարգացմանը զուգահեռ, նրա խոսքը դառնում է կանոնակարգված և վերացարկված մտածողությամբ ձևավորված:

Մի շարք այլ հետազոտողներ (տե՛ս Chapman K., Kaye K., Johnston J., և ուրիշներ) երեխայի երկխոսական լեզվում տարբերում են արտահայտությունների հետևյալ տիպերը.

ա) «արձագանքային», երբ երեխան պատասխանում է խոսողի արտահայտությանը,

բ) «ընդօրինակող», երբ երեխան կազմում է իր խոսքը խոսակցին ընդօրինակելով,

գ) «հարցուպատասխանային», երբ երեխան պատասխանում է խոսակցին և միաժամանակ հարցնում է նրան (տե՛ս Chapman K., 2007, 65-67):

Սրանով հանդերձ՝ որոշ հետազոտողներ այն կարծիքն են հայտնում, որ հաղորդակցման բնական էությունը առավելապես դրսևորվում է նույն տարիքի երեխաների լեզվում: Ընդ որում, ինչպես նկատում է Ժ. Պիաժեն, վաղ հասակում երեխաներին բնորոշ է, այսպես կոչված, «եսակենտրոն լեզուն», երբ խոսակիցները չեն կարողանում մշտապես նույն թեմայի սահմաններում մնալ և շեղվելով դրանից՝ ներկայացնում են իրենց արտահայտությունները: Բացի դրանից, լինելով նաև քերականորեն ոչ ճիշտ ձևավորված՝ նրանց խոսքը հաշվի չի առնում խոսակցի տեսակետը: Այս իրողությունը Պիաժեն բացատրում է երեխայի եսակենտրոն մտածողությամբ, երբ չի տարբերակվում սեփական փորձը ուրիշի փորձից, իսկ իրական երկխոսությունը հասարակայնացված է և ելնում է խոսակիցների ընդհանուր փորձից ու գիտելիքներից: Յետևաբար լիարժեք լեզվական հաղորդակցումը ենթադրում է նաև խոսակիցների հասարակական փորձի և լեզվական գիտելիքների ընդհանրություն, որն էլ թույլ է տալիս եզրակացնել, որ շարահյուսական ընդհանուր կառուցվածքների տիրապետումը հնարավոր է միայն ոչ եսակենտրոն մտածողության զարգացման դեպքում: Նույն մոտեցմամբ կարելի է բացատրել նաև տարբեր լեզուներում այս կամ այն շարահյուսական կաղապարի գերակայությունը, եթե նկատի ունենանք տարբեր հանրույթներում տարբեր լեզվամտածողությունների ձևավորման հանգամանքները: Այսինքն, եթե բառաստեղծման գործընթացում լեզուների միջև կարելի է տեսնել շատ նմանություններ, ապա շարահյուսության մեջ այդ նմանությունները նվազում են հասարակական փորձի ավելի մեծ տարբերությունների պատճառով: Այս դեպքում պետք է նկատի ունենալ այն արտալեզվական գործոնները (հասարակական հարաբերություններ, բնակլիմայական պայմաններ և այլն), որոնք նպաստում են հիշյալ փորձի ձևավորմանը: Ինչ վերաբերում է լեզուներում սահմանափակ քանակով շարահյուսական կաղապարների գոյությանը, ապա այն պետք է բացատրել, ինչպես վերը նշվեց, մարդկային ճանաչողության ընդհանրությամբ:

Ամփոփելով վերը կատարված ուսումնասիրությունները՝ կարող ենք ասել, որ լեզուն մարդկային օնտոգենեզի արդյունք է, և երեխայի լիարժեք հաղորդակցական կարողությունը ձևավորվում է արդեն վաղ

տարիքում (մինչև 6 տարեկան): Այդ շրջանում երեխան ձեռք է բերում հենքային գիտելիքներ մայրենի լեզվի հնչյունական, շարահյուսական և իմաստաբանական յուրահատկությունների մասին: Բառապաշարի մեծ ծավալի, ինչպես նաև քերականական կանոնների բարդության պայմաններում լեզվի յուրացումը մարդու մտավոր բարձր կարողություններից է: Դեռ այսօր էլ քննարկվում է հիշյալ կարողության՝ թե՛ բնածին, թե՛ ձեռքբերովի լինելու խնդիրը: Առաջին տեսակետի կողմնակիցները գտնում են, որ լեզվաուսակությունը մարդու մոտ գենետիկորեն է ամրագրված, մյուսները կարծում են, թե այն ձեռք է բերվում աստիճանաբար՝ հասարակական փորձի աստիճանական զարգացման արդյունքում: Գոյություն ունի նաև, այսպես կոչված, «վարքային» (կամ բիհևիորիստական) տեսությունը, ըստ որի՝ երեխան աշխարհ է գալիս որպես «մաքուր տախտակ» (*tabula rasa*), և նրա մոտ ինչպես լեզվական, այնպես էլ ճանաչողական կարողությունները նախապես բացակայում են: Իսկ դրանց զարգացման համար կարևոր դեր ունի խթան→արձագանք վարքային կանոնը, երբ արտաքին գործոնների ազդեցությունը մարդու մոտ առաջացնում է մտավոր և լեզվական արձագանքներ: Այսինքն՝ լեզվական կարողության ձևավորման համար առաջնային դեր ունի արտաքին աշխարհը: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս փորձառական հետազոտությունները, երեխան վաղ հասակում ճշգրիտ բառեր և կառուցվածքներ չի կարողանում գործածել, իսկ մեծահասակները չեն ուղղում նրանց սխալները, քանի որ կարևոր են համարում արտահայտությունների բովանդակությունը և նպատակադրումը: Չնայած հասարակական և անձնական տարբեր հանգամանքներին՝ լեզվի յուրացումը, այնուհանդերձ, ընդհանրական բնույթի է, եթե նկատի ունենանք նաև այն իրողությունը, որ երեխան հաճախ գործածում է լեզվական օրինաչափ կառուցվածքներ, որոնք իրեն շրջապատողների կողմից չեն կիրառվում: Այս փաստը կարծես խոսում է մարդու լեզվաուսակության նախապես գենետիկորեն ամրագրված լինելու տեսակետի օգտին: Ընդ որում, ինչպես նկատել են հետազոտողները, ասվածը վերաբերում է ոչ միայն հնչյունական, այլև ժեստային (կամ խուլ-համրերի) լեզվին: Հաշվի առնելով վերը կատարված վերլուծությունները՝ կարող ենք նաև ճշտել, որ մարդու լեզվաուսակությունը իրացվում է նրա ուղեղի ձախ կիսագնդի գործունեության շնորհիվ:

Միևնույն ժամանակ վերջին տարիներին կատարված փորձառական հետազոտությունների հիման վրա գիտնականները կարծում են,

որ հիշյալ գործունեությունը իրականացվում է մարդու, այսպես կոչված, «լեզվական գենի» շնորհիվ, որը, ըստ Ս. Պինկերի, ղեկավարում է ուղեղի նշված հատվածի գործունեությունը (տե՛ս Pinker S., 2003, 49): Ընդ որում, այդ գենը պատասխանատու է ոչ միայն լեզվական հաղորդակցման համար, այլև դրանից է կախված մարդու լեզվաունակության իրացումը և այդպիսով ձեռք բերված տեղեկության վերլուծությունը: Գերմանացի հետազոտող Յ. Յամայստերը նույնիսկ գտնում է, որ հիշյալ գենը, ժառանգաբար փոխանցվելով սերունդներին, ենթարկվում է որոշակի փոփոխությունների և տարբեր լեզվական հանրությներում կամ էթնիկական խմբերում իրացվում է տարբեր կերպ՝ պահպանելով, իհարկե, իր ելակետային բնութագրերը:

Լեզուներ և Ժողովուրդներ

Այսօր աշխարհում խոսում են ավելի քան 6000 լեզուներով, որոնք միմյանցից տարբերվում են ինչպես խոսողների քանակով ու տարածվածությամբ, այնպես էլ բուն լեզվական յուրահատկություններով: Այս դեպքում նկատի ունենք դրանց տիպաբանական առանձնահատկությունները, որոնցով դրանք նմանվում կամ տարբերվում են միմյանցից: Ասենք նաև, որ պատմական ժամանակաշրջանում մի շարք լեզուներ անհետացել են, իսկ մյուսներն անճանաչելիորեն փոխվել են և վերածվել նոր լեզվավիճակների: Բայց քանի որ կոնկրետ լեզուն կապվում է կոնկրետ լեզվական հանրության կամ ժողովրդի հետ, ապա դժվար է պնդել, թե այդպիսով առաջանում են նոր լեզուներ, քանի որ դրանցով խոսող ժողովուրդները դեռ շարունակում են գոյատևել: Հետևաբար կարող ենք ասել, որ լեզուն «մահանում է», երբ անհետանում է տվյալ լեզվով խոսող ժողովուրդը: Ասվածը, սակայն, չպետք է պատկերացնել որպես կոնկրետ լեզվով խոսողների ֆիզիկական անհետացում, այլ այն, որ տարբեր պատճառներով տվյալ լեզվական հանրությանը դադարում է խոսել իր լեզվով, և նրա համար հաղորդակցման միջոց է դառնում մեկ այլ լեզու: Ինչպես, օրինակ, եթե միայն պատմականորեն վկայված խեթերեն, փյուլգերեն, լուվիերեն և այլ լեզուներն այլևս չեն կիրառվում, ապա ենթադրվում է, որ դրանցով խոսող ժողովուրդները տարբեր պատճառներով հրաժարվել են իրենց լեզուներից և սկսել են խոսել այլ լեզուներով, և այդպիսով պատմության թատերաբեմից անհետացել են նաև խեթերը, փյուլգիացիները և մյուս ժողովուրդները: Այս ամենից հետևում է, որ կոնկրետ ժողովրդին բնորոշ հիմնական չափանիշը, կարծես, նրա լեզուն է, իսկ մշակութային, մարդաբանական, կրոնական կամ այլ կարգի հատկանիշները պետք է դիտել եթե ոչ երկրորդային, ապա՝ ոչ հիմնական: Այս տեսակետը, սակայն, գիտնականների կողմից միանշանակորեն չի ընդունվում, և, ինչպես աշխատության մախորդ գլխում նշվեց, այսօր էլ մի շարք հետազոտողներ ուղղակի կապ են տեսնում լեզվի և հանրության կենսաբանական տիպի միջև: Ինչպես մախորդ գլխում նշվեց, Ա. Շլայխերի մոտեցմամբ կենսաբանության մեջ առաջ քաշված տեսակների ծագման ու զարգացման դարվինիստական կադապարը համընկնում է լեզուների փոխհարաբերության վերաբերյալ ծագումնաբանական կադապարին, որը նրա կողմից ներկայացվում էր «ծննդաբանական ծառի» տեսքով: Ընդ որում, նա լեզուն

ևս համարում էր բնական օրգանիզմ: Եթե նկատի ունենանք լեզվական պարզագույն ձևերից ավելի բարդ հաղորդակցական ձևերի զարգացման վերաբերյալ վերը հիշատակված տեսությունները, թվում է, թե Շլայխերի մոտեցումն իսկապես հիմնավորված է: Սակայն, ինչպես տեսանք, ծագումնաբանորեն աշխարհի լեզուները մեկ ընդհանուր հիմքից բխեցնելը խնդրահարույց է, և այդ պատճառով լեզվաբանության մեջ առաջ է քաշվել «գերընտանիքներ» հասկացությունը: Բացի դրանից՝ լեզուների պարզագույն ձևերից բարդերի անցման տեսակետը նույնպես բոլոր լեզուների համար գործադրելի չէ, քանի որ այժմ էլ կան «պարզագույն» հաղորդակցման լեզուներ (ինչպես ամերիկահնդկացիական կամ պոլինեզյան լեզուները)՝ ոչ մեծ բառապաշարով և աղքատ քերականական ձևերով: Չի հիմնավորվում նաև Ա. Շլայխերի այն տեսակետը, որ ձևաբանորեն անջատական համարվող լեզուները (ինչպես անգլերենը կամ չինարենը) ավելի պարզ լեզվական տիպեր են, քան թեքական և կցական համարվող լեզուները: Նույնիսկ որոշ լեզվաբաններ, ելնելով ժամանակակից հաղորդակցական տեսություններից, գտնում են, որ արդյունավետ հաղորդակցում ապահովում են լեզվական առավել պարզ ձևերը: Նշենք սակայն, որ ձևաբանական պարզությունը չի նշանակում նաև լեզվի պարզություն, ինչպես, օրինակ, անգլերենում ձևաբանական պարզությունն ուղեկցվում է իմաստաբանական բարդությամբ՝ արտահայտված համանուն ձևերի, ձևույթների բազմիմաստության, դարձվածային յուրահատուկ կազմությունների և այլ տարաբնույթ երևույթների առկայությամբ:

Աշխատության առաջին գլխում նշվեց, որ մարդու լեզվաունակության զարգացման տեսանկյունից լեզուները կարելի է համարել միաժառանգ, և այդ մոտեցմամբ բնութագրվող լեզուն որոշ լեզվաբաններ համարում են ոչ թե լիարժեք հաղորդակցման լեզու, այլ նախալեզվային վիճակ կամ «նախալեզու» (ոչ հայտնի իմաստով): Վերջինս, սակայն, նշանների համակարգ չէ, քանի որ ընդհանուր համաձայնության նշանների (հատկապես ժեստերի ու բնաձայնական արտահայտությունների) առկայության պայմաններում քերականորեն ձևավորված նախադասության կազմությունը և այդպիսով նաև լիարժեք լեզվական հաղորդակցումը բացառվում են: Ուստի կարծում ենք, որ բուն լեզվական առանձնահատկությունների բացահայտումը հնարավոր է առավելապես շարահյուսական մակարդակում կամ նախադասության կազմության վերլուծությամբ: Բացի դրանից՝ նախադասության մեջ է, որ խա-

չաձևում են լեզուն ու մտածողությունը, և հենց այստեղ է, որ լեզուները հիմնականում նմանվում են կամ տարբերվում միմյանցից: Պատմահամեմատական լեզվաբանությունը, սակայն, ի զորու չէ ճշգրտորեն մեկնաբանելու դրանք, քանի որ պատմական փաստերի ոչ բավարար հնությունը (առավելագույնը մ.թ.ա. 4-րդ հազարամյակ) նախապատմական շրջանում լեզուների շարահյուսական կառուցվածքների մասին պատկերացում կազմելու հնարավորություն չի ընձեռում:

Հիշյալ հանգամանքներով պայմանավորված՝ արդի գիտությունը կրկին փորձում է պարզել մարդու կենսաբանական տիպի և նրա լեզվի միջև առկա փոխհարաբերությունները, կամ, ինչպես Ս. Պինկերն է նշում, արդյո՞ք յուրաքանչյուր հանրույթ օժտված է որոշակի «լեզվական գենով»: Տվյալ դեպքում կենսաբանական տիպ ասելով՝ հասկանում ենք, ըստ էության, գիտության մեջ ավանդաբար ընդունված մարդկային տիպ (մարդացեղ, ռասա) հասկացությունը, որի տակ նկատի է առնվել պատմականորեն կազմավորված և ընդհանուր ժառանգական հատկանիշներով ծագման (սերման) միասնականությամբ բնութագրվող մարդկանց տարածքային խումբը: Մարդաբանության մեջ տարրորոշվել է երեք հիմնական կամ մեծ ռասա՝ նեգրոիդ (սև), եվրոպոիդ (սպիտակ) և մոնղոլոիդ (դեղին): Սակայն մարդկության ոչ բոլոր տիպերն են հնարավոր հատկացնել այս երեք խմբերից մեկին: Այդ պատճառով որոշ գիտնականներ մի շարք տիպերին, ինչպես, օրինակ, ավստրալացիներին, մելանեզացիներին, բուշմեններին և այլն, դիտում են որպես միջանկյալ ձևեր վերոհիշյալ երեք խմբերի միջև կամ էլ որպես դրանցից որևէ մեկից ինքնուրույն զարգացած տիպ: Ընդ որում, նման դասակարգումների համար հիմք են ընդունվում հիմնականում արտաքին (ինչպես՝ մաշկի գույնը, գանգի ու դեմքի կառուցվածքը և այլն) չափանիշները, որոնց հիման վրա դեռ նախորդ դարերում առանձնացվել են, օրինակ, նորդիկ, բալթյան, արմենոիդ, միջերկրածովյան և այլ մարդաբանական տիպերը: Այստեղ չենք անդրադառնում նաև այդ հատկանիշներին, քանի որ դրանք հիմնականում ձևավորվում են տվյալ մարդաբանական տիպի տարածման վայրերի բնակլիմայական պայմանների ազդեցությամբ, ինչպես, օրինակ, նեգրոիդ և ավստրոլիդ ռասաներին բնորոշ առանձնահատկությունները ձևավորվել են Աֆրիկայի և Հարավային Ասիայի շոգ, խոնավ կլիմայի պայմաններում արևի ուժեղ ճառագայթմամբ, որի վնասակար ազդեցությամբ կարող էին դիմագրավել մաշկի մուգ գույնը, ինչպես նաև գանգուր մազերը և այլն:

Բացի դրանից՝ պատմական ժամանակաշրջանում հիշյալ արտաքին հատկանիշները կարող էին նաև փոխվել՝ ինչպես տարաբնույթ աշխարհագրական տեղաշարժերի, այնպես էլ տարբեր տեսակների խառնման հետևանքով: Ամեն դեպքում այսօր տարածված մարդկային տիպերի նման յուրահատկությունները ևս կարելի է բացատրել համապատասխան բնակլիմայական պայմանների ազդեցությամբ:

Մարդու ժառանգական հատկանիշների, դրանց և հետագա սերունդներին փոխանցման հանգամանքների պարզաբանման տեսանկյունից, բնականաբար, կարևոր դեր է հատկացվում նրա կենսաբանական կամ գենետիկական առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Ի՞նչ կարող է տալ մարդու գենոմի կառուցվածքի ուսումնասիրությունը լեզուների ձևավորման խնդրի պարզաբանմանը, եթե նկատի ունենանք, որ գիտնականների մի մեծ խումբ մարդու ժառանգական հատկանիշների մեջ ներառում է նաև լեզուն կամ ուղղակի կապ է տեսնում հանրույթի ծագումնաբանության և նրա լեզվական յուրահատկությունների միջև: Միևնույն ժամանակ որոշակի էթնիկական խմբերի մտավոր ժառանգության մասին պատկերացումները, հատկապես ոչ գիտական աշխարհում, խեղաթյուրվում են ռասիստական գաղափարներով: Ռասիզմը, ըստ Կ. Լեվի-Շտրաուսի, որևէ էթնիկական խմբի համոզմունքն է, որ ինքն իր գենային հատկանիշների կատարելությամբ կենսաբանորեն առավել է մյուսներից: Այստեղից հետևում է նաև այն եզրակացությունը, որ տվյալ էթնիկ խումբն իր մտավոր կարողություններով գերազանցում է այլ խմբերին: Լեզվաբանության մեջ այս երևույթն արտահայտվում է այս կամ այն լեզվի վերաբերյալ տարբեր գնահատականներով, ինչպես, օրինակ, նախկինում կարծում էին, որ ոչ բարդ քերականությամբ, նվազ բառապաշարով և պարզ բառակազմությամբ բնութագրվող լեզուները պետք է համարել ոչ լիարժեք և պրիմիտիվ լեզուներ: Վերջինս էլ իր հերթին բերում էր այն համոզմանը, որ այդ լեզուներով խոսող ժողովուրդները ևս ունեն պրիմիտիվ մտածողություն և ընդհանուր առմամբ իրենց զարգացվածությամբ զիջում են ավելի բարդ քերականական կառուցվածքով ու հարուստ բառապաշարով օժտված լեզուներով խոսողներին: Այս առումով նշենք, օրինակ, որ եթե պապուասական որևէ լեզու չունի բարդ քերականություն, մանավանդ հարուստ բառապաշար, ապա, ելնելով համապատասխան բնակլիմայական և այլ պայմաններից, այդ լեզվում չէին կարող լինել հա-

գուստի և առօրյա գործածության այլ առարկաների վերաբերյալ այնպիսի հասկացություններ, որոնք առկա են այլ պայմաններում ապրող եվրոպացիների լեզուներում: Հետևաբար այս կամ այն լեզվական տիպի ձևավորումը պայմանավորված է հաղորդակցական անհրաժեշտությամբ, իսկ մտածողության զարգացումը՝ համապատասխան հասարակական հարաբերությունների, ինչպես նաև աշխարհաճանաչողության փոփոխություններով:

Գիտական առումով դեռ այսօր էլ վիճարկվում է լեզվի զարգացման և փոփոխության խնդիրները: Ընդ որում, ելնելով լեզվի հաղորդակցական պարզագույն ձևերից ավելի բարդերի անցման վերոհիշյալ դրույթից՝ գիտնականների մի մասը կարծում է, որ տվյալ դեպքում ճիշտ է խոսել լեզվի կամ լեզուների վերընթաց զարգացման մասին: Մյուսները, սկսած դեռ Յ. Գրիմից, գտնում են, որ լեզուն չի զարգանում, այլ փոխվում է՝ ժամանակի ընթացքում անցնելով լեզվական մեկ տիպից մյուսին: Ժամանակակից բնական լեզվաբանությունը սահմանում է, որ լեզուն հարաժամանակայնորեն փոփոխվող երևույթ է, իսկ փոփոխությունների բնույթն ու արագությունը կախված են ինչպես նախապես գոյություն ունեցող ներլեզվական միտումներից, այնպես էլ արտալեզվական գործոններից, ինչպիսիք աշխարհընկալումն ու մտածողությունն են, որոնք մշտապես փոխվում են մարդկային բոլոր հասարակություններում՝ անկախ դրանց ծագումնաբանությունից: Այս ամենը նկատի ունենալով՝ կարող ենք նշել, որ ցանկացած ժողովուրդ առանձնանում է իրեն բնորոշ լեզվական և ժառանգական հատկանիշներով, որոնք, ժամանակի ընթացքում փոփոխվելով, այնուամենայնիվ, պահպանում են իրենց ելակետային առանձնահատկությունները և փոխանցվում սերունդներին: Հետևաբար համապատասխան էթնիկական խմբի ծագումնաբանության և նրա լեզվի միջև կապի գենետիկորեն ամրագրված լիներու հանգամանքի պարզաբանումն իսկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում: Այս առումով նշենք, որ ժամանակակից մոլեկուլային գենետիկայի ներկայացուցիչները հնարավոր են համարում ժողովուրդների պատմության վերականգնումը՝ կիրառելով, այսպես կոչված, հայրագծային (Y-քրոմոսոմային), մայրագծային (միտոքոնդրիալ ՌԹ-ների) կամ երկկողմանի ժառանգվող և սերնդեսերունդ փոխանցվող գենետիկական հատկանիշների ուսումնասիրությունը: Ընդ որում, նկատի ունենալով, որ արական սեռին բնորոշ Y-քրոմոսոմը գենային կառուցվածքի այլ տարրերի հետ չի փոխանակվում և միշտ միայնակ է հանդես


գալիս, ապա կարելի է որոշել այն մուտացիաները, որոնք տեղի են ունեցել բոլոր նախորդ սերունդների մոտ՝ մինչև «գենետիկական Ադամը»: Այդպիսով՝ արական սեռի յուրաքանչյուր անհատի Y-քրոմոսոմի մուտացիաների ամբողջությունը կոչվում է «հապլոտիպ», իսկ նախնիներից ժառանգած և մուտացիաների ենթարկված հետնորդ սերունդների Y-քրոմոսոմները կազմում են «հապլոխումբ»: Այսինքն՝ կոնկրետ հապլոխմբին պատկանելությունը որոշվում է նախնիներից ժառանգած նույն մուտացիայով, որը պահպանվում է հետնորդների մոտ և այդպես շարունակ: Ելնելով ասվածից՝ Y-քրոմոսոմի բոլոր մուտացիաները կարելի է պատկերացնել «ծննդաբանական ծառի» տեսքով, որտեղ հաստ ճյուղերն առավել հին, համեմատաբար բարակ ճյուղերը ոչ վաղուց առաջացած հապլոխմբերն են, իսկ տերևները՝ անհատական հապլոխմբեր: Ուստի արական սեռի ցանկացած անհատի հապլոտիպի հիման վրա հնարավոր է պարզել հայրագծային ժառանգական հատկանիշների փոխանցման ընթացքը ժամանակի և տարածության մեջ: Իսկ եթե ձեռքի տակ ունենք նաև աշխարհի ժողովուրդների գենոֆոնդերի ուսումնասիրության արդյունքները, ապա, ըստ համապատասխան հապլոխմբերի կառուցվածքային առանձնահատկությունների, կարելի է ճշտել տվյալ հապլոխմբի առաջացման նախնական տարածքը:

Ավելացնենք նաև, որ նման ուսումնասիրության կարելի է կատարել նաև մայրագծային կամ միտոքոնդրիալ ԴՆԹ ժառանգական հատկանիշների փոխանցման առումով: Այս դեպքում արդեն սահմանվում են մայրագծային հապլոխմբեր՝ ըստ միտոքոնդրիալ ԴՆԹ մուտացիաների: Սակայն կոնկրետ էթնիկական խմբի գենետիկական առանձնահատկությունների ուսումնասիրության տեսանկյունից ոմանք առավելությունը տալիս են հայրագծային հապլոխմբերին, քանի որ իգական սեռի անհատները ժառանգում են միայն մայրագծային գեները, իսկ արական սեռին բնորոշ է և՛ Y-քրոմոսոմը, և՛ միտոքոնդրիալ ԴՆԹ-ն, թեև վերջինս հայրական գծով չի փոխանցվում սերունդներին: Մյուսներն էլ կարծում են, որ միտոքոնդրիալ ԴՆԹ-ն ժամանակի մեջ ավելի կայուն է, և որոշակի փոփոխություններ այստեղ կարող են տեղի ունենալ միայն 3000 տարին մեկ անգամ, ուստի ավելի արդյունավետ է մայրագծային հապլոխմբերի ուսումնասիրությանը: Հետագա սերունդներին առավել հստակ է և ժամանակի մեջ տեսանելի: Երրորդ մոտեցմամբ կարևոր են համարվում թե՛ հայրագծային, թե՛ մայրագծային հապլոխմբերի յուրահատկությունները, որոնք կոնկրետ խնդրի պարզաբանման նպատակով

նաև համադրվում են: Մինչ այդ համապատասխան լատինական տառային և տառաթվային ծածկագրերով նշանակվում են ինչպես Y-քրոմոսոմային, այնպես էլ միտոքոնդրիալ ԴՆԹ հապլոխմբերը, որտեղ առայժմ բացարձակ միասնականություն չունի: Այսպես, օրինակ, մինչև 2002 թվականը գենետիկական միջազգային ընկերության կողմից Y-քրոմոսոմի համար օգտագործվում էին HG1, HG2, HG3 և այլ հապլոխմբերի ծածկագրումները, իսկ ժամանակակից գենետիկական հետազոտություններում դրանց փոխարեն առաջարկվում են համապատասխանաբար R, b, I, R1a և այլ նշանակումները: Ամեն դեպքում դրանց մոլեկուլային-գենետիկական յուրահատկությունների բացահայտման ընթացքը մեր ուսումնասիրության նպատակադրումներից դուրս է, և այստեղ կսահմանափակվենք գոյություն ունեցող առավել տարածված դրույթների մեկնաբանություններով: Այս առումով նշենք, որ զուտ գենետիկական փաստերի հիման վրա ժողովուրդների և առավել ևս լեզուների յուրահատկությունների վերաբերյալ միանշանակ եզրակացություններ կատարել հնարավոր չէ: Ինչպես, օրինակ, եթե գիտնականները մարդու ժառանգական հատկանիշների փոխանցման առումով առավելությունը տալիս են կամ հայրագծային, կամ մայրագծային գենետիկական հատկանիշներին, ապա նրանք պետք է հաշվի առնեն նաև այն հանգամանքը, որ եթե տղամարդը՝ որպես Y-քրոմոսոմի կրող, արական սեռի հետնորդներ չի թողնում, ապա հայրագծային կապը հետագա սերունդների միջև կտրվում է, իսկ եթե կինը չի թողնում իգական սեռի հետնորդ, ապա մույնը տեղի է ունենում մայրագծայինի հետ: Այսինքն՝ համապատասխան կենսաբանական տիպի կայուն քանակի դեպքում մույնիսկ յուրաքանչյուր սերունդ տեսականորեն հնարավոր է, որ թե՛ հայրական և թե՛ մայրական կողմի գենային հատկանիշների մոտ մեկ երրորդը կորցնի: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև պատահական գենետիկական մուտացիաները, որոնք կարող են տեղի ունենալ որոշակի պատմական ժամանակամիջոցում: Ուստի համապատասխան եզրակացությունների համար արդյունավետ է հիշյալ երկու կարգի հապլոխմբերի համադրական վերլուծությունը կամ Y-քրոմոսոմների և միտոքոնդրիալ ԴՆԹ-ների, այսպես կոչված, «միջուկային» հատկանիշների բացահայտումը՝ նկատի ունենալով, որ կոնկրետ հապլոխմբի կառուցվածքում մեկ նուկլեոտիդի փոխարինումը կամ անկումը կարող է տեղի ունենալ յուրաքանչյուր 100 սերունդը կամ 2500 տարին մեկ անգամ (տե՛ս Jobling M., 1995, 445): Միևնույն ժամանակ, ինչպես

վերը նշվեց, թեև դժվար է ուղղակի կապ տեսնել մարդու գենետիկական հատկանիշների ու նրա էթնիկական պատկանելության միջև, այդուհանդերձ նշված հատկանիշների և դրանց աշխարհագրական տարածման, ինչպես նաև վերջինիս ու համապատասխան էթնիկական խմբերի ծագման միջև որոշակի հարաբերություններ կարելի է սահմանել: Ուստի գենետիկական հետազոտությունների արդյունքները որոշակիորեն կարող են նպաստել ինչպես մարդկային խմբերի, այնպես էլ տարբեր ժողովուրդների ձևավորման հանգամանքների ճշգրտմանը՝ ներգրավելով նաև հնագիտական, պատմագիտական, ժողովրդագրական, մշակութաբանական, իսկ տվյալ դեպքում՝ հատկապես լեզվական ու լեզվաբանական տվյալներ:

Վերադառնալով կրկին քննարկվող խնդրին՝ նշենք, որ գիտնականների կարծիքով այժմ որքան հեռու է իր ծագման կենտրոնից տեղափոխված համապատասխան մարդաբանական տիպը, այնքան շատ են նաև գենետիկական փոփոխությունները՝ նկատի ունենալով, որ պատմական ժամանակամիջոցում մարդու ԴՆԹ-ի կառուցվածքը ենթակա է փոփոխությունների՝ պահպանելով, իհարկե, հիմնական քրոմոսոմային հատկանիշները: Այդ նպատակով կարելի է ելնել դեռ Ք. Ռենֆրյուի և մյուսների կողմից առաջարկված մարդու աշխարհագրական տարածման պատկերից, որտեղ հաստ գծերով նշվում է այդ տարածման վերջնական վիճակը, իսկ բարակ սլաքները ցույց են տալիս դրա ընթացքը և ժամանակագրությունը:



Անդրադառնալով նաև տվյալ տարածման հանգամանքներին՝ նշենք, որ այն մարդու ծագման պահից տարբեր արագությամբ է տեղի ունեցել, և ըստ գիտության նորագույն տվյալների՝ մարդկային խմբերի համեմատաբար ինտենսիվ տեղաշարժ սկսվել է միայն 60-70 հազար տարի առաջ՝ նեոլիթի շրջանում, որին նպաստել է նաև մարդկության քանակական աճը: Ըստ Կավալի-Սֆորցայի հաշվարկների՝ այդ շրջանում յուրաքանչյուր քսան տարվա ընթացքում երկրագնդի բնակչության թիվը կրկնապատկվել է, որը նա բնութագրում է որպես «ժողովրդագրական պայթյուն» (Cavalli-Sforza L, 1999, 106): Ենթադրվում է նաև, որ մարդու տարածման հիշյալ արագությունը պայմանավորված է եղել նրա որսորդական և հավաքչական կացութաձևերով, որը կրկին դանդաղել է մոտ 10.000 տարի առաջ երկրագործական զբաղմունքի անցնելու պատճառներով, ինչն էլ իր հերթին հանգեցրել է գենային բազմազանության կրճատմանը: Որոշ գիտնականներ էլ կարծում են, որ երկրագնդի վրա մարդու արագ տարածմանը նպաստել է ոչ միայն ժողովրդագրական աճը, այլև նրա մշակույթի և հատկապես լեզվի զարգացումը, քանի որ լեզուն մեծապես նպաստել է մարդկային խմբերի կազմակերպմանը և այդպիսով նաև տարածության մեջ նրանց տեղաշարժին: Այդպիսով՝ կարող ենք ենթադրել, որ վերոհիշյալ ընդհանուր նախալեզվային կամ պարզագույն լեզվական հաղորդակցման վիճակը ձևավորվել է մոտ 60.000 տարի առաջ: Ինչպես վերը նշվեց, այն իր պարզությամբ ընդհանրական բնույթ է ունեցել, ուստի այս շրջանում դեռ առանձին ժողովուրդների, ինչպես նաև առանձին լիարժեք հաղորդակցման լեզուների մասին չենք կարող խոսել: Վերջիններիս ձևավորմանը, ինչպես ասվեց, նպաստել է մարդու հողագործական և անասնապահական զբաղմունքներին անցումը: Այս առումով հետաքրքիր է նշել, որ այսօր էլ ոչ բարդ հաղորդակցման լեզուները բնորոշ են այն ժողովուրդներին, որոնց հիմնական զբաղմունքը որսորդությունն է: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ լեզվական ձևերի զարգացմանը մեծապես նպաստել է նախևառաջ մարդու կացութաձևերի փոփոխությունը, որն իր հերթին առաջացրել է նաև աշխարհաճանաչողական փոփոխություններ՝ իր բոլոր հետևանքներով:

Ինչ վերաբերում է երկրագնդի վրա հողագործության տարածմանը, ապա գիտնականների մեծ մասը համակարծիք է, որ այն նախապես կարող էր ձևավորվել այնպիսի տարածքներում, որտեղ առկա են եղել համապատասխան բնակլիմայական պայմաններ: Ոմանք այդպիսին են

համարում Մերձավոր Արևելքը (հատկապես Տիգրիս և Եփրատ գետերի միջև ընկած տարածքը կամ Միջագետքը), մյուսները դրան ավելացնում են նաև ներկայիս Չինաստանի, Մեքսիկայի և այլ տարածքներ: Ընդ որում, վերջիններիս կարծիքով հողագործությունը հիշյալ երեք տարածքներում զարգացել է միաժամանակ. Մերձավոր Արևելքում զարգացել է զարու և հացահատիկի, Ասիայում՝ կորեկի և բրնձի, իսկ Ամերիկայում՝ եգիպտացորենի մշակումը: Այս մոտեցմամբ նկատի են առնվում այդ բույսերի տարածման համար անհրաժեշտ բնակլիմայական յուրահատկությունները: Սակայն, եթե ելնում ենք վերոհիշյալ դրույթներից, կարծում ենք, որ, այնուամենայնիվ, հողագործությունը Միջագետքում փոքր-ինչ վաղ է զարգացել, քան Ասիայում և Ամերիկայում: Տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ նաև տնային կենդանիների վարժեցումը (ծի, շուն, կով և այլն), որը, ըստ համապատասխան հնագիտական և լեզվական փաստերի, ավելի վաղ սկսվել է այդ տարածքում: Նույնը վերաբերում է նաև խեցեգործական մշակույթի զարգացմանը և այլ իրողություններին: Միաժամանակ հարց է առաջանում, թե ինչպես է տարածվել հողագործությունը. դրանով արդեն զբաղվող մարդկանց այլ վայրեր տեղափոխությամբ, թե՞ մարդկային մի խմբից մյուսին փոխանցվել է միայն համապատասխան մշակույթը: Ինչպես նկատում են որոշ հետազոտողներ, ընդհանուր առմամբ ժողովուրդների գաղթն ավելի դանդաղ է ընթանում, քան մշակութային փոխանցումները: Վերջինս իր հերթին համարյա չի հանգեցնում ժողովրդագրական փոփոխությունների, և քանի որ այդ փոփոխությունները, ինչպես ցույց են տալիս համապատասխան փաստերը, դանդաղ են տեղի ունենում, ուստի ենթադրվում է, որ հողագործությունը տարածվել է մարդկանց խմբերի տեղաշարժի միջոցով: Այդ դեպքում մեկ այլ խնդիր է դառնում այդ տեղաշարժը ժողովրդագրական փոփոխությամբ կամ այդ խմբերի գաղթով պայմանավորված լինելու հանգամանքների պարզաբանումը: Այս առումով ամերիկացի գիտնական Ռ. Ֆիշերը (Fisher R., 1973) առաջ է քաշել իր «ծագումնաբանական տեսությունը», ըստ որի՝ մարդկությունը տարածվել է իր ծագման կենտրոնից կենտրոնախույս ալիքների տեսքով, որոնք հեռանալով աստիճանաբար թուլանում են: Ընդ որում, այդ տեղաշարժը Ֆիշերը պայմանավորում է երկու գործոններով՝ ժողովրդագրական աճի և գաղթի արագությամբ: Ըստ հնագիտական տվյալների՝ հողագործության տարածումը գաղթի միջոցով տեղի է ունեցել տարեկան մեկ կիլոմետր արագությամբ: Ընդ որում, եթե տար-

բեր պատճառներով (բնական պայմաններ, ջրային կամ լեռնային խոչընդոտներ և այլն) գաղթի արագությունը դանդաղում է, ապա դրան խթան է հաղորդում ժողովրդագրական աճը: Լ. Կավալի-Սֆորցան հիշյալ գործոններին ավելացնում է նաև հողագործության վաղ շրջանի պրիմիտիվությունը և կարծում, որ համապատասխան եզրահանգումների համար կարևոր դեր պետք է հատկացնել նաև մարդու գենետիկական փոփոխությունների ուսումնասիրությամբ: Ընդ որում, մեկ գենը մշտապես փոփոխությունների պայմաններում բավարար չէ ճշգրիտ արդյունքների ստացման համար և կարող է տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տալ: Ինչպես, օրինակ, արյան ռեզուս գործոնը $Rh(-)$ գենը համարվում է հիմնականում եվրոպական, որն առաջացել է արևմտաեվրոպական ծագման համապատասխան ազդեցությամբ: Այս ենթադրության համար հիմք է այն պնդումը, որ մոտ 35.000 տարի առաջ եվրոպայում հայտնված մարդուն բնորոշ է եղել միայն $Rh(+)$ գենը: Այսօր, սակայն, $Rh(-)$ գենի՝ նախապես եվրոպական տարածքում գտնվելու վարկածը դժվար է բացատրվում: Այս առումով հնէաբան-կենսաբանները կարծում են, որ հողագործական փուլից առաջ երկրագնդի վրա բնակչության խտությունը ցածր է եղել, որի պատճառով գենետիկական հեռավորությունն էլ տարբեր տարածքներում բնակվողների միջև մեծ է եղել: Հետագայում տեղի է ունեցել հսկառակ գործընթացը, և որոշակի տարածքներում հիշյալ խտության աճը հանգեցրել է գենային ընդհանրությունների: Ամեն դեպքում, ըստ Կավալի Սֆորցայի, որքան մեծ է ուսումնասիրվող գեների քանակը, այնքան ճշգրիտ կլինեն արդյունքները: Այդ նպատակով նա իր հետազոտություններում ներառել է 95 գեն և իր վիճակագրական հաշվարկներով փորձել է պարզել, թե ինչ հաճախականությամբ է այս կամ այն գենը հանդիպում տարբեր աշխարհագրական տարածքներում: Ընդ որում, համապատասխան հաշվարկների վերջնական նպատակը, ըստ գենետիկական հեռավորության, առանձին էթնիկական խմբերի առանձնացումն է՝ իրենց լեզվական յուրահատկություններով: Նշենք նաև, որ նրա կողմից իրականացված հետազոտության արդյունքները համադրելի են Ա. Սուրանտի, Վ. Շտիգլերի, Հ. Հիրցվելդի, Ա. Ֆիշերի, ինչպես նաև Ժամանակակից կենսալեզվաբաններ Պ. Մենոցիի, Զ. Քիդի, Ռ. Վիլսոնի և այլոց՝ մինչ այդ տարբեր մոտեցումների հիման վրա ձեռք բերված արդյունքների հետ:

Այսպիսով, եթե նկատի ունենաք մարդու գենային ժառանգականության համար կարևոր ABO արյունային համակարգը, ապա, ըստ A, B, O իզոհակածինների տարածման տոկոսային հարաբերության, տարբեր աշխարհագրական տարածքներում ունենում ենք հետևյալ պատկերը (տե՛ս Cavalli-Sforza L., 2000, 81):

Մայրցամաքներ	A	B	O
Եվրոպա	27	8	65
Ասիա	20	19	61
Աֆրիկա	18	13	69
Ամերիկա (բնիկներ)	1,4	0,3	98
Ավստրալիա (բնիկներ)	22	2	76

Նշենք նաև, որ բացի այս ցուցանիշներից՝ տարբեր մայրցամաքների ժողովուրդների միջև գենետիկական հեռավորության սահմանման նպատակով ներգրավվում են նաև տարբեր հապլոխմբերի աշխարհագրական տարածման վերաբերյալ առավել ընդունված մի շարք չափանիշներ, ինչպես, օրինակ՝

- Y-քրոմոսոմային K հապլոխումբը (ներառյալ L, T, M, NO, P և S ենթախմբերը) ենթադրվում է, որ առաջացել է Առաջավոր Ասիայում մոտ 40-50 հազար տարի առաջ,
- L հապլոխումբը՝ Հնդկական թերակղզում 25-30 հազար տարի առաջ,
- M և S խմբերը՝ Հարավարևմտյան Ասիայում և Օվկիանիայում 32-47 հազար տարի առաջ,
- T խումբը՝ Արևմտյան Ասիայում և հարակից տարածքներում 19-34 հազար տարի առաջ,
- N և O խմբերը՝ Կենտրոնական և Հյուսիսարևմտյան Ասիայում 28-41 հազար տարի առաջ,
- P խումբը ներկայացնում է սիբիրյան, հեռավորարևելյան, ինչպես նաև հյուսիսային և հարավամերիկյան տարածքները մոտ

32 հազար տարի առաջ, որտեղ հանդես է գալիս նաև Q խումբը,

- R խումբը (R_1 և R_2 ենթախմբերով)՝ Եվրոպայում և Արևմտյան Եվրասիայում 25-30 հազար տարի առաջ և այլն (տե՛ս Semino O. et al., 2004):

Որոշ հետազոտողներ էլ, ելնելով կոնկրետ ժողովուրդների աշխարհագրական տարածման համապատասխան պատկերացումներից, կոնկրետ տարածքում այս կամ այն հապլոխմբի գերակայությունից, գտնում են, օրինակ, որ R հապլոխումբը բնութագրական է հնդեվրոպական ժողովուրդներին, որտեղ էլ առանձնացվում են R_{1a} (արևելաեվրոպական) և R_{1b} (արևմտաեվրոպական) ենթախմբերը կամ հապլոտիպերը: Նույն կերպ E խումբը բնորոշ է հարավային, J-ն՝ հյուսիսային սեմական ժողովուրդներին, G-ն՝ կովկասյան ժողովուրդներին և այլն: Նկատի ունենալով, որ ժամանակի ընթացքում հիշյալ հապլոխմբերի հարաբերակցությունը կարող է նաև փոխվել, Կավալի-Սֆորցան առաջնային է համարում վերոհիշյալ «միջուկային հատկանիշների» հիման վրա տարբեր մայրցամաքների ժողովուրդների միջև զենետիկական հեռավորության սահմանումը և ելնելով մարդու աֆրիկյան ծագման դրույթից՝ ներկայացնում է նշված հեռավորությունը, ըստ այդ տարածքի նկատմամբ փոխհարաբերության, հետևյալ կերպ (նույն տեղում, 97)։

Աֆրիկա - Եվրոպա՝ 16.6,

Աֆրիկա - Ասիա՝ 20.6,

Աֆրիկա - Ամերիկա՝ 22.6,

Աֆրիկա - Օվկիանիա (նաև Ավստրալիա)՝ 24.7:

Ինչպես տեսնում ենք, նվազագույն զենետիկական հեռավորությունն առկա է Աֆրիկայի և Եվրոպայի միջև, մինչդեռ մարդկության համաչափ տարածման դեպքում թերևս այն առավել փոքր պետք է լիներ Աֆրիկայի և Ասիայի միջև: Այստեղից էլ հետևում են երկրագնդի վրա մարդկային խմբերի տարածման վերաբերյալ տարակարծիք մեկնաբանությունները: Ելնելով Ռ. Ֆիշերի՝ այս խնդրին առնչվող վերոհիշյալ դրույթից՝ որոշ հետազոտողներ փորձում են պարզել, թե ինչպիսին կարող էր լինել նշված տեղաշարժի արագությունը դրա համաչափության պարագայում: Ընդ որում, նկատի են առնվում ինչպես հնագիտական փաստերը, այնպես էլ ժամանակակից քոչվոր ցեղերի օրեկան տեղաշարժի, բնակության վայրերի փոփոխության և այլ հանգամանքներ: Աշխատության առաջին գլխում ներկայացվեցին Կավալի-Սֆորցայի հաշ-

վարկները մարդկային խմբերի տարբեր կացութաձևային պայմաններում տարածման արագության վերաբերյալ, որտեղից հետևում էր, որ այն ավելի մեծ է եղել հավաքչության և որսորդության և ավելի փոքր հողագործության շրջանում: Համադրելով այս փաստերը՝ տարբեր մայրցամաքների ժողովուրդների միջև գենետիկական հեռավորության և նրանց տարածման ժամանակագրության համար ունենում ենք հետևյալ պատկերը.

Մայրցամաքներ	ընդհանուր գենետիկական հեռավորությունը	աշխարհագրական տարածման ժամանակը (հազարամյակներով)	հարաբերությունը
Աֆրիկա-Ասիա	206	100	2.06
Ասիա-Ավստրալիա	101	55	1.84
Ասիա-Եվրոպա	97	43	2.26
Ասիա-Ամերիկա	89	15-50	5.9-1.8

Այս տվյալներից հետևում է, որ որքան մեծ է մեկ մայրցամաքից դեպի մյուսը գաղթի ժամանակը, այնքան մեծ է նաև դրանց բնակչության միջև գենետիկական հեռավորությունը: Այստեղ հիմք է ընդունված նաև Ք. Ռենֆրյուի կողմից առաջարկված վերոհիշյալ քարտեզը, որի հիման վրա ենթադրվում է, որ մերձավորարևելյան տարածքներից ասիական խմբերն ավելի վաղ են տեղափոխվել իրենց ներկայիս բնակության վայրեր և ապա նաև Ավստրալիա և Ամերիկա, քան եվրոպացիները: Այդ պատճառով էլ գենետիկական հեռավորությունն աֆրիկացիների և եվրոպացիների միջև ամենափոքրն է: Բացի դրանից՝ նկատում ենք նաև, որ առաջին երեք տարածքային փոխհարաբերություններում համապատասխան գենետիկական հեռավորության և ժամանակագրության միջև կապը համարյա կրկնակի է, և միջինը կազմում է 2.05: Այսինքն՝ կրկնակի գենետիկական հեռավորությունը ենթադրում է նաև մույնպիսի ժամանակային հեռավորություն կամ հակառակը: Այստեղ խնդրահարույց է միայն ամերիկյան տարածքը, եթե նկատի ունենանք, որ տվյալ դեպքում ունենք ոչ հստակ ժամանակագրություն, քանի որ ասիական տարբեր ժողովուրդների և հետագայում Ամերիկա տեղափոխված բնակիչների միջև գենետիկական տարբերությունները (թերևս առաջին և երկրորդ աշխարհագրական տարածումներով պայմանավորված) տարբեր են: Այդ պատճառով Կավալի-Սֆորցան որպես համեմատության եզր է

ների և նրանց լեզուների միջև փոխհարաբերությունների պարզաբանումը: Վերջինիս իրականացման համար նախևառաջ հարկ է պարզել, թե արդյոք գոյություն ունի համաբանական ընդհանրություն կենսաբանական և լեզվական տիպերի ձևավորման միջև: Այս առումով հիշենք, որ ըստ ժամանակակից պատկերացումների՝ մարդու գենոմը, անկախ տարաբնույթ փոփոխություններից, իր հիմնական կազմությունը միլիոնավոր տարիների ընթացքում կարող է չփոխել, մինչդեռ լեզվական փոփոխություններն ավելի արագ են տեղի ունենում, և ըստ ամերիկացի Մ. Սվոդեշի հաշվարկների՝ յուրաքանչյուր հազար տարվա ընթացքում լեզուն իր հիմնական բառաֆոնդի տասնհինգ տոկոսը կորցնում է: Բադրամից՝ մարդու կողմից այս կամ այն լեզվի յուրացումը, ինչպես վերը նշվեց, գենային կախվածություն չունի, և նա իր բնատուր ընդունակությամբ կարող է յուրացնել ցանկացած լեզու: Այդ դեպքում վերոհիշյալ խնդիրը հանգում է այն բանին, թե ի՞նչ զուգահեռականություն կարելի է տեսնել մարդու կենսաբանական և լեզվական զարգացումների միջև, եթե նկատի ունենաք, որ մարդաբանական տիպերը միմյանցից առանձնանում են ըստ գենների և լեզուների:

Մինչ այդ կարող ենք նշել, որ թե՛ գենետիկական և թե՛ լեզվական փոփոխությունները տեղի են ունենում մյուսներից տարբեր պատճառներով առանձնացված մարդկային խմբերի ինքնուրույն զարգացման պայմաններում: Ընդ որում, ժամանակի ընթացքում հիշյալ երկու կարգի փոփոխությունների արդյունքում այդ խմբերի միջև տարբերությունները մեծանում են: Այդ առումով ոմանք մարդու գենոմի հետ համադրելի են համարում լեզվի նվազագույն տարրերը կամ հնչույթները, որոնք բնորոշ են մարդկային լեզվին ընդհանրապես և առանձին լեզուներին մասնավորապես: Առաջին դեպքում հակադրվում են մարդու կողմից արտաբերվող հնչյունները կենդանականի հետ, և ցույց է տրվում, որ դրանք միայն մարդկային լեզվում ունեն իմաստատարբերակիչ նշանակություն, իսկ երկրորդում՝ առանձին լեզուների հնչույթային համակարգերը, երբ մի լեզվի կրողներին ընկալելի չեն մեկ այլ լեզվի հնչյունաբանական յուրահատկությունները, ինչպես, օրինակ, հայերենի ծ, ջ, չ հնչույթները խորթ են ռուսներին, կամ չինացիներն ու ճապոնացիները չեն տարբերակում R և L հնչույթները և այլն: Որոշ հետազոտողներ էլ կարծում են, որ հիշյալ գենոմի հետ համադրելի է, այսպես կոչված, «նախալեզուն» կամ նախալեզվային վիճակը՝ ելնելով նրանից, որ մարդու լեզվաունակությունը բնածին է, և լեզուները տարբերվում են այդ

վիճակից իրենց առավել լիարժեք հաղորդակցականությամբ, իսկ գենային փոփոխությունները հանգեցնում են առանձին էթնիկական խմբերի ձևավորմանը: Պատմական ժամանակամիջոցում, ինչպես վերը նշվեց, որոշ լեզուներ կարող են, տարբեր հանգամանքներով պայմանավորված, հաղորդակցումից դուրս մղվել և իրենց տեղը զիջել այլ լեզուների, որը, բնականաբար, տվյալ խմբում գենետիկական փոփոխությունների չի հանգեցնում: Վերջին հանգամանքը կարող է օգնել պարզելու, թե վերոհիշյալ ժամանակամիջոցում, որ ժողովուրդն է իր լեզուն փոխարինել մեկ այլ լեզվով: Այսպես, օրինակ, ինչպես ստորև կտեսնենք, մի շարք գիտնականների կարծիքով, խեթերը, որոնք այլևս գոյություն չունեն, հայկական ցեղեր են եղել, իսկ նրանց լեզուն ներկայացնում է հայերենի հնագույն վիճակը: Այդ դեպքում, եթե հաջողվի ձեռք բերել հնագիտական վստահելի փաստեր (ինչպես, օրինակ, տվյալ խմբին պատկանող մարդկանց ոսկրանյութ), ապա գենետիկական հետազոտությամբ կարելի է հաստատել կամ մերժել այս վարկածը: Կամ, ինչպես ցույց են տալիս համապատասխան հետազոտությունները, բասկերի մոտ գերակայում է վերոհիշյալ (Rh-) գենը, որի հիման վրա պարզաբանվում է, թե ինչու բասկերենը ոչ մի կերպ չի առնչվում մյուս եվրոպական լեզուներին և ենթադրվում է, որ բասկերը, ի տարբերություն եվրոպական մյուս ժողովուրդների, ավելի վաղ են տեղափոխվել եվրոպա, և իրենց մոտ ավելի շուտ են սկսվել գենային փոփոխությունները (տե՛ս Cavalli-Sforza L., նույն տեղում, 173): Նույնիսկ կարծիք է հայտնվում, որ եթե ընդունում ենք երկրագնդի վրա հասարակությունների հերթագայության դրույթը, ապա բասկերը նախորդ մարդկային հասարակության կամ կրոմանյոնյան տիպի մարդու մնացորդներն են (տե՛ս Spektrum der Wissenschaften, 2000, 1, 19-21): Մեկ այլ պատկեր ունենք, օրինակ, հունգարերենի դեպքում, որը, ըստ ծագումնաբանական դասակարգման, ներառվում է ուգրաֆիննական լեզուների ընտանիքում, որոնք էլ իրենց հերթին ուրալալթայական լեզուների հետ կազմում են գերընտանիք: Այսինքն՝ նրանց նախնիները (մաջարները), որոնք քոչվորներ են եղել, մ.թ.ա. 9-րդ դարում Կենտրոնական Ասիայի տարածքներից գաղթել են եվրոպա, որտեղ էլ նրանց լեզուն հաղորդակցումից դուրս է մղել տեղաբնիկ ռոմանական (վաղ լատիներեն) լեզվին: Համապատասխան գենետիկական հետազոտությունները ցույց են տալիս, որ հունգարացիների գեների միայն 10%-ն է համընկնում ուրալալթայական լեզուներով խոսողների գեների հետ, որոնց համար բնու-

թագրական է N հապլոխումբը, մինչդեռ հունգարացիների մոտ գերակայում են R_{1a} և R_{1b} հապլոխումբը: Այստեղից էլ հետևում է այն եզրակացությունը, որ հիշյալ գաղթից հետո այդ ցեղերը կազմել են տվյալ տարածքում բնակվողների միայն 20%-ը: Այս փաստը ևս խոսում է այն մասին, որ թեև լեզվական և գենետիկական փոփոխությունների միջև ուղղակի կապ գոյություն չունի, սակայն դրանց համադրմամբ կարելի է ճշգրտել ինչ-պես լեզվական, այնպես էլ ժողովրդագրական իրավիճակներ: Ինչպես պարզել են հետազոտողները, գեները ևս լեզուների նման կարող են կոնկրետ տարածքում դուրս մղվել և իրենց տեղը զիջել գենային այլ կառուցվածքների, որը, բնականաբար, ենթադրում է նաև դրանց կրողների տարածական տեղաշարժեր կամ հարևան ժողովուրդների միջև գենետիկական փոխազդեցություններ: Այս և այլ բազմաթիվ երևույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անկախ փոփոխությունների ձևից ու արագությունից՝ գենային և լեզվական զարգացումների միջև համաբանական ընդհանրություններ, այնուամենայնիվ, կարելի է տեսնել: Միևնույն ժամանակ տարբեր ժողովուրդների գենետիկական հատկանիշների ուսումնասիրությամբ բացահայտվում է նաև նրանց գենոֆոնդերի բազմազանությունը, որը, կարծում ենք, հետևանք է՝ վերը նշված զուգամիտման և տարամիտման գործընթացների: Հայ գիտնական L. Եպիսկոպոսյանի կարծիքով, օրինակ, նման իրողություն առկա է հայերի գենոֆոնդում, որը նա բացատրում է մեր ժողովրդի լեռնային և նախալեռնային տարածքներում բնակությամբ, որի հետևանքով էլ նրա առանձին խմբերը միմյանցից մեկուսի են գոյատևել: Այն արտահայտվում է նաև հայկական բարբառների բազմազանությամբ, որոնց միջև տարբերությունները գենետիկական փոփոխությունների նման ձևավորվել են որոշակի արագությամբ, ինչն էլ մեզ հնարավորություն է ընձեռում որոշելու երկու տարբեր հարակից բարբառների առաջացման ժամանակը (տե՛ս Епископосян Л., Генетическая история этноса с позиции современной науки, ips.ras.ru): Այս խնդրին դեռ կանդրադառնանք ստորև, իսկ այստեղ նշենք, որ առանց ճշգրիտ լեզվաբանական ուսումնասիրությունների միայն մոլեկուլային գենետիկայի կողմից ձեռք բերված արդյունքները բավարար չեն նման եզրակացությունների համար: Նշված խնդրի լուծմանը մեծապես կարող են նպաստել նաև հնագիտական փաստերը: Այս առումով նշենք, որ Կավալի-Սֆորցայի և մյուսների կողմից ներկայացված գեների տարածման աշխարհագրական պատկերը Եվրոպայում հետագայում համա-

դրվեց Պ. Մենոցիի և Ա. Պիացայի կողմից իրականացված հնէաբանական վերլուծությունների հետ, որոնք ռադիոածխածնային մեթոդի գործադրմամբ ցույց տվեցին հացահատիկի մշակության տարածման ընթացքը նույն տարածքում (տե՛ս Menozzi P., Piazza A., 2002): Արդյունքում առաջ քաշվեց այն դրույթը, որ հողագործությունն ավելի վաղ սկսվել է արևելաեվրոպական տարածքներում, որտեղ էլ գերակշռում են գենային փոփոխությունները, որը բնակչության նստակյացության և այդ պատճառով նաև ժողովրդագրական խտության աճի հետևանք է: Այն արտահայտվում է նաև հիշյալ տարածքում լեզուների և հետևաբար նաև ժողովուրդների բազմազանությամբ:

Հետազոտողների կողմից հնագիտական և կենսաբանական փաստերի համադրումը միանշանակ եզրակացությունների հնարավորություն չի ընձեռում թերևս այն պատճառով, որ հաճախ հնագետների մոտեցումները նույն փաստի նկատմամբ տարբեր են: Այսպես, օրինակ, հնագետ Մ. Գիմբուտասը կարծում է, որ հնդեվրոպական ցեղերին վաղ շրջանում բնորոշ են եղել թելային կերամիկայի մշակույթը և թաղման կուրգանային եղանակը (տե՛ս Gimbutas M., 1970), որը վիճարկվում է այլ հետազոտողների կողմից: Կավալի-Սֆորցան, սակայն, ելնելով այս տեսակետից, կարծում է, որ նախապատմական ժամանակաշրջանում *homo sapiens*-ն Աֆրիկայից կամ մերձարևելյան տարածքներից նախ տեղափոխվել է միջինասիական և հարավուրալյան շրջաններ (որտեղ հայտնաբերվել են ինչպես կուրգաններ, այնպես էլ բրոնզե զենքեր, ծիերի կմախքներ և այլն), իսկ ավելի ուշ՝ Եվրոպա և այլ վայրեր: Սույն մոտեցումը հակասում է մի շարք գիտնականների այն տեսակետին, որ հնդեվրոպական ցեղերն ընդհանրապես Միջին Ասիայում չեն եղել, այլ, երկար ժամանակ գոյատևելով Առաջավոր Ասիայում, աստիճանաբար գաղթել են դեպի Եվրոպա և Հարավային Ասիա (Իրանական բարձրավանդակ, Հնդկաստան և այլն): Հետաքրքիրն այն է, որ համապատասխան մարդաբանական տիպերի գենային կառուցվածքների հետազոտություններով կարելի է հաստատել թե՛ մեկ և թե՛ մյուս տեսակետը, եթե նկատի ունենաք, որ հիշյալ գենետիկական փոփոխությունները բոլոր տարածքներում բնութագրվում են համարյա նույն միջին ցուցանիշով: Այսուհանդերձ, մի շարք հետազոտողներ փորձում են պարզել, թե իսկապես հողագործական զբաղմունքի անցումը կարևոր նախապայման է բոլոր լեզուների ձևավորման համար, մանավանդ, երբ նկատելի գենետիկական հեռավորությամբ բնորոշվող և տարբեր լեզուներով խո-

սող որոշ ժողովուրդներ նաև տարածական առումով են ավելի հեռու գտնվում իրենց ծագման կենտրոնից: Ասվածը վերաբերում է առաջին հերթին ավստրալանեզիական և ամերիկահնդկացիական լեզուներով խոսողներին, որոնք իրենց ներկայիս բնակության վայրեր են տեղափոխվել, ըստ վերոհիշյալ հաշվարկների, մոտ 35-40.000 տարի առաջ: Համապատասխան հնագիտական փաստերից հետևում է, որ այս տարածքում հողագործությունը նույն ինտենսիվությամբ չի զարգացել, ինչպիսին եղել է Եվրոպայում կամ Ասիայում: Դրա պատճառը, ըստ Պ. Բելվուդի (տե՛ս Bellwood P., 2000), համապատասխան բնակլիմայական պայմաններն են, որոնք չեն նպաստել այստեղ հողագործության զարգացմանը: Դեռ այսօր էլ Նոր Գվինեայում որոշ տեղաբնիկների հիմնական զբաղմունքը որսորդությունն է (հատկապես ձկնորսությունը), ինչպես նաև հավաքչությունը: Միևնույն ժամանակ հնագիտական հետազոտությունները հաստատում են, որ մոտ 8000 տարի առաջ Հիմաստանի տարածքում զարգացած հողագործական մշակույթը Հարավարևելյան Ասիայից անցել է նորզելանդական, ավստրալական և այլ բնիկ ժողովուրդներին: Գենետիկական փոխհարաբերության, ինչպես նաև լեզվական ցեղակցության առումով վերջիններս միմյանց բավականաչափ մոտ են, և ելնելով նաև այդ տարածքում խոսվող լեզուների յուրահատկություններից՝ ենթադրվում է, որ այստեղ հողագործությունը զարգացել է մոտ 6000 տարի առաջ: Ասվածը հաստատում են այդ լեզուներում ընդհանուր *բրինձ*, *ժաֆառեղեզ*, *նավակ*, *արոր*, *կացին*, *դաժ* և այլ հասկացություններն արտահայտող ձևերը, որոնք ունեն նաև հնագիտական նշանակություն: Այս ամենից ենթադրվում է, որ լիարժեք հաղորդակցական լեզուների ձևավորման ժամանակն այդ տարածքներում ևս համընկնում է հողագործության զարգացման փուլին: Տվյալ եզրակացության համար հիմք է ընդունվում նաև այն փաստը, որ այստեղ տարածված լեզուների միջև ընդհանրությունների հիման վրա տեսանելի են նրանց ծագումնաբանական հարաբերությունները: Ինչպես վերը նշվեց, ավելի բարդ է ամերիկահնդկացիական լեզուների և նրանց կրողների ինչպես գենետիկական, այնպես էլ լեզվական փոխհարաբերությունների հարցը, ինչը դեռ նախորդ դարի սկզբներին նկատել էին Ֆ. Բոասը, Լ. Կրոբերը և ուրիշներ: Պատճառը թերևս այն է, որ ամերիկյան մայրցամաքի բնիկները, որոնք ենթադրաբար այստեղ են ներթափանցել Ասիայի հյուսիսային տարածքներից, թե՛ իրենց գենային հատկանիշներով և թե՛ համապատասխան լեզուներով շատ են տարբերվում

միմյանցից: Ամերիկացիներ Ջ. Գրինբերգը և Մ. Ռահլենը կարծում են, որ ամերիկյան մայրցամաքը բնակեցվել է երկրագնդի վրա մարդկային տիպերի, այսպես կոչված, երկրորդ տարածման արդյունքում: Այսինքն՝ մինչ այստեղ տեղափոխվելը նրանց միջև արդեն առկա է եղել գենետիկական և լեզվական որոշ հեռավորություն, որը ձևավորվել էր Ասիայում: Ըստ Ջ. Գրինբերգի վերլուծությունների՝ լեզվական առումով հյուսիսամերիկյան էսկիմոսալեուտյան և Նադենե լեզուները իրենց յուրահատկություններով հարաբերակցվում են թե՛ եվրոպական և թե՛ դենեկովկասյան, իսկ ամերիկյան լեզուները՝ ուրալալթայական լեզուների հետ (տե՛ս Greenberg J., 1987, 49): Ընդ որում, Գրինբերգի եզրակացությունները հիմնվում են առավելապես այդ լեզուների, այսպես կոչված, առաջնային հիմնական բառաֆոնդերի ընդհանրությունների վրա, ինչպիսին մարմնի մասեր, ազգակցություն ցույց տվող և որոշ առօրյա գործածության բառերն ու մեկից տասը նշանակող թվականներն են: Այստեղ առկա է նաև գենային բազմազանություն, որը տարատեսակ փոխազդեցությունների հետևանք է, և միակ առիքն ուղ փաստը արյան վերոհիշյալ ABO համակարգում [O] իզոհակածինի գերակայությունն է մյուսների նկատմամբ: Այս դեպքում չի կարելի խոսել նաև հողագործական զբաղմունքի մասին (բացառությամբ մեքսիկական և այլ հարակից տարածքների), քանի որ համապատասխան ձևերն այդ լեզուներում բացակայում են: Այս հանգամանքն այսօր էլ տարակարծիք մեկնաբանությունների տեղիք է տալիս, և այստեղ տարածված էթնիկական խմբերի կենսաբանական ու լեզվական համաբանական զարգացման վերաբերյալ միանշանակ տեսակետ դժվար է հայտնել: Ամերիկացի գիտնական Դ. Բիկերտոնը (տե՛ս Bickerton D., 2000) նման իրողությունը բացատրում է տվյալ տարածքում բնակվողների գենային և լեզվական բազմաշերտությամբ, որն արտացոլում է, այսպես կոչված, կրեոլ լեզվավիճակ: Վերջինս առաջանում է այն դեպքում, երբ ներգաղթյալների լեզուն հաղորդակցումից դուրս է մղում տեղաբնիկների լեզվին, սակայն ներառում է նաև վերջինիս բազմաթիվ յուրահատկություններ: Բացի դրանից՝ որոշակիորեն փոխվում են նաև հաղթող լեզվի ինչպես բառապաշարը, այնպես էլ քերականությունը: Այսօր աշխարհում տարածված են ինչպես անգլերենի, այնպես էլ ֆրանսերենի, իսպաներենի, պորտուգալերենի, հոլանդերենի, արաբերենի և այլ լեզուների հիման վրա ձևավորված կրեոլ լեզուներ, որոնք խոսվում են տարբեր տարածքներում: Այս լեզուների առաջացումը պայմանավորված է արտալեզվական

գործոններով, երբ գաղութարարների լեզուն յուրացվում է գաղութացվող ժողովուրդների կողմից: Տվյալ մոտեցումը հիշեցնում է լեզվաբանության մեջ վաղուց գոյություն ունեցող լեզուների խաչավորման տեսությունը, որն այսօր միանշանակորեն չի ընդունվում: Բիկերտոնի կարծիքով, սակայն, երբ համապատասխան արտալեզվական փաստերը բացակայում են, չի կարելի մերժել վերոհիշյալ լեզուների «կրեոլացման» դրույթը, եթե նկատի ունենաք նրանց միջև առկա ընդհանրությունների բնույթը: Գենետիկայի տեսանկյունից նման երևույթը կոչվում է «գենային խառնում», որն արտացոլվում է մարդկային տիպերի գենետիկական կառուցվածքում: Կավալի-Սֆորցայի կարծիքով, այդպիսին են, օրինակ, եվրոպացիները, որոնց գեների երկու երրորդն ունի մերձավորարևելյան, իսկ մեկ երրորդը՝ աֆրիկյան ծագում: Այս իրողությունը նա բնական է համարում, քանի որ հակառակ պարագայում ժամանակակից եվրոպացին նման կլիներ 100.000 տարի առաջ գոյություն ունեցող մարդուն (Cavalli-Sforza L., 1996, 95-96): Ինչ վերաբերում է լեզուներին, ապա նշենք, որ ցանկացած կրեոլ լեզվում նրա գերակա բաղադրիչ տարրը, թեև որոշ չափով փոփոխված, կարելի է առանձնացնել և պարզել նրա յուրահատկությունները: Այս մոտեցումն են որդեգրել ամերիկյան տեղաբնիկ լեզուների ուսումնասիրողները և համապատասխան վերլուծությունների հիման վրա կազմել այդ լեզուների ծննդաբանական ծառը:

Գենետիկական և լեզվական նման բարդ իրավիճակ առկա է նաև աֆրիկյան տարածքում, ինչը գիտնականների մի մասը բացատրում է այն հանգամանքով, որ homo sapiens-ը, այնուամենայնիվ, Աֆրիկայից չի ծագում, իսկ մյուսներն այդ իրավիճակը կրկին բացատրում են տարատեսակ խառնուրդներով: Այս լեզուների հետազոտողները, օրինակ, աֆրիկյան մայրցամաքում առանձնացնում են երկու տարածքներ, որտեղ առկա են, այսպես կոչված, «կովկասոիդների» և տեղաբնիկների խառնուրդներ. առաջինը Հյուսիսային Աֆրիկան է, իսկ երկրորդը՝ Արևելյան Աֆրիկան: Ասենք նաև, որ ըստ ավանդական ըմբռնման՝ կովկասոիդների շարքին են դասվում ինչպես խուռիները, խեթերը, էտրուսկները, ուրարտացիներն ու բասկերը, այնպես էլ հյուսիսկովկասյան, ենիսեյոստյակական և չինտիբեթական ժողովուրդները (տե՛ս Ross Ph., 2000): Տվյալ պարագայում, մեր կարծիքով, ճիշտ կլինի նախապես տարբերել ընդհանրապես *մարդկային սեսակի* կամ *մարդաբանականի* և *մարդաբանական հիմքերի* կամ *էթնիկական խմբերի* ծագում ու *սարածում*

հասկացությունները: Այդ դեպքում կարելի է խուսափել այն միակողմանի մոտեցումից, որ էթնիկական խմբերի առաջացումն ուղղակիորեն կապվում է *homo sapiens*-ի հետագա զարգացման հետ: Հետևաբար, եթե հողագործական զբաղմունքի ձևավորման նախնական կենտրոնը դիտում ենք Մերձավոր Արևելքը, ապա այստեղ և հարակից շրջաններում էլ կարող էին առաջանալ նաև համապատասխան էթնիկական խմբերը: Այլ կերպ ասած՝ չի կարելի ասել, որ այս կամ այն ժողովուրդը ծագում է Աֆրիկայից կամ այլ վայրից, քանի որ մարդկային տեսակի և էթնոսի առաջացման ժամանակագրությունը տարբեր է, ինչպես տարբեր է նաև հիշյալ «նախալեզվային վիճակի» և լիարժեք հաղորդակցման լեզուների զարգացման ժամանակագրությունը: Թերևս այդ պատճառով է, որ սույն աշխատության նախորդ գլխում հարկ համարեցինք հիմնականում անդրադառնալ նոստրատիկ լեզուներին, որոնք տարածված են եղել, և դրանցից շատերը դեռ խոսվում են մերձավորարևելյան և փոքրասիական տարածքներում: Ինչ վերաբերում է մյուս ժողովուրդներին, որոնց լեզուների առաջացման համար հողագործությունը կարևոր նախապայման չի կարող լինել, ապա նրանց ինչպես գենային յուրահատուկ կառուցվածքի, այնպես էլ լեզվական տիպի ձևավորման համար կարևոր պետք է համարել աշխարհագրական նույն տարածքում նրանց երկար համագոյակցությունը: Վերադառնալով կրկին հյուսիսաֆրիկյան լեզուներին ու դրանց կրողներին՝ կարելի է ընդունել, որ վերջիններս, ձևավորվելով որպես առանձին էթնիկական խմբեր Մերձավոր Արևելքում և դրան հարակից շրջաններում, հետագայում կարող էին տեղափոխվել Աֆրիկայի հյուսիսային և արևելյան տարածքներ, որտեղ մինչ այդ կազմավորվել էին նաև տեղաբնիկ ժողովուրդները: Ահա այս հանգամանքներով պայմանավորված՝ աֆրիկական մայրցամաքում ներկայումս ունենք մեծ գենային և լեզվական բազմազանություն, եթե նկատի ունենանք նաև, որ ըստ գենետիկական հետազոտությունների՝ աֆրիկացիների և ոչ աֆրիկացիների բաժանումը տեղի է ունեցել մոտավորապես 150.000 տարի առաջ (Cavalli-Sforza L., 147):

Ելնելով սեփական հետազոտությունների արդյունքներից (տե՛ս Գաբրիելյան Յ., 2001)՝ կարծում ենք, սակայն, որ իրական չէ դնելովկասյան լեզուների առանձնացումը՝ որպես ինքնուրույն լեզվախումբ, քանի որ ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուրարտերենը, ըստ էության, հնագույն հայերենի նախնական վիճակ է,

և հետևաբար այն հնդեվրոպական լեզու պետք է համարել, իսկ խուռիերենն ու էտրուսկերենը՝ գոնե մոտարատիկ գերընտանիքի մեջ մտնող լեզուներ: Այս պարագայում ասվածը, բնականաբար, փոքր-ինչ դժվար է ամրագրել համապատասխան գենետիկական հետազոտություններով, քանի որ այդ ժողովուրդներն այլևս գոյություն չունեն, իսկ նրանց հետնորդների հարցը դեռ վիճարկվում է, սակայն հայերենի և ուրարտերենի փոխհարաբերության հարցում, ինչպես ստորև կտեսնենք, որոշակի ճշգրտումներ, այնուամենայնիվ, կարելի է կատարել:

Մարդու գենետիկական տիպերի, ժողովուրդների և նրանց լեզուների համադրման գործընթացում առանձին մշակակություն ունեն մասնակութաբանական հետազոտությունները, եթե նկատի ունենաք, որ լեզուն մարդկային մշակույթի կարևոր բաղադրիչներից մեկն է: Վերը նշվեց, որ մի շարք մարդաբանական և ժողովրդագրական հետազոտություններում յուրահատուկ տեղ է հատկացվում մասն մարդկային հասարակությունների մշակութային ժառանգության ուսումնասիրությանը:

Սույն աշխատության առաջին գլխում նշվեց, որ մինչ օրս մշակույթի էության վերաբերյալ պատկերացումները տարբեր են և հակասական: Այդ հակասականությունն ակնհայտ է դեռ անտիկ շրջանից եկող տեսություններում, երբ հույն փիլիսոփա Ցիցերոնը մ.թ.ա. I դարում առաջին անգամ գործածել է *cultura animi* («մշակել մարդուն») հասկացությունը: Իսկ լատիներեն *cultura* («մշակույթ») բառը նախապես վերաբերել է հողի մշակմանը և մինչև 17-րդ դարը առանձին գործածություն չի ունեցել, այլ համատեղվել է որևէ բնագավառի հետ, որին ուղղված է մշակման կոնկրետ գործընթացը, ինչպես՝ *agri cultura*՝ «հողի մշակում», *cultura juris*՝ «վարքի մշակում» և այլն: 17-րդ դարում գերմանացի փիլիսոփա և իրավաբան Ս. Փուֆենդորֆը մշակույթ է համարում այն ամենը, ինչ ստեղծում է մարդն իր հասարակական գործունեության արդյունքում: Հետագայում առաջ են քաշվել մշակույթի սահմանման տարբեր մոտեցումներ, որոնց հիման վրա կարող ենք եզրակացնել, որ «մշակույթ» բազմիմաստ հասկացություն է: Առավել պարզ կարելի է համարել այն սահմանում, որ որպես մշակույթ պետք է համարել ամեն բան, որ մարդը սովորում է ուրիշներից, իսկ ինքնուրույնաբար ձեռք բերված գիտելիքները մշակութային արժեք չեն ներկայացնում: Մյուս կողմից, սակայն, սովորելու գործընթացները մույնպես տարբեր են. կարելի է նայելով սովորել, թե ինչ են անում ուրիշները, կարող է ուրիշների

կողմից ինչ-որ բան ուսուցանվել գրավոր, բանավոր կամ այլ եղանակով: Ամեն դեպքում այդ կերպ ստացված գիտելիքների ծավալը մարդու մոտ ավելին է, քան ինքնուրույնաբար ձեռք բերվածներիցը, քանի որ առաջինները հասարակական շփումների արդյունք են: Ոմանք կարծում են, որ մշակույթի տարրեր առկա են նաև կենդանիների մոտ, ինչպես, օրինակ, կաթնասունների և թռչունների ծնողների (հատկապես՝ մոր) կողմից ձագերին է փոխանցվում իրենց փորձը: Մարդկանց մոտ մշակութային գիտելիքների փոխանցումը ուսուցման միջոցով տեղի է ունենում առաջին հերթին ընդօրինակման եղանակով կամ ուղղակի ուսուցմամբ, որտեղ պարտադիր է ուսուցանողի (հաղորդողի) և ուսուցանվողի (ընդունողի) առկայությունը: Այս գործընթացում լեզվի՝ որպես ուսուցման (հաղորդման) միջոցի մասնակցությունը մշակութային գիտելիքների ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում, ինչը բացակայում է կենդանիների մոտ: Այդպիսով՝ լեզուն մարդու կարևոր կենսաբանական և մշակութային ձեռքբերումներից է, որն առաջացել է նրա կազմաբանական ու կազմախոսական զարգացման և դրա գեներտիկորեն ամրագրման արդյունքում: Հետևաբար, ինչպես վերը նշվեց, լեզուն մարդու բնածին կարողություններից է:

Ելնելով վերոնշյալից՝ կարող ենք ասել, որ մշակույթի հիմքում մարդկային (հասարակական) հաղորդակցությունն է, և այն կարելի է համարել գեներտիկական ժառանգականության տարր այն առումով, որ դրա միջոցով տեղի է ունենում տեղեկույթի (գիտելիքի) փոխանցումը մեկ սերնդից մյուսին: Հայտնի է նաև, որ մարդու գենոմը փոխանցվում է ԴՆԹ կառուցվածքի կրկնությամբ, իսկ մշակութային տեղեկույթը նյարդային համակարգի միջոցով հասնում է անհատի ուղեղին, իսկ նրանից՝ այլ անհատների և այլն: Հիշյալ փոխանցման միջոցները ևս տարբեր են՝ անմիջական դիտարկումից մինչև գրքեր և ժամանակակից տեխնիկական միջոցներ: Այսինքն՝ մշակութային զարգացումը մոր տեղեկույթի բազմացման հետևանք է, որի ընթացքում, ինչպես կենսաբանական փոփոխությունների դեպքում, կարող են տեղի ունենալ նաև հաղորդակցական խաթարումներ հաղորդողի և ընդունողի կամ բնօրինակ տեքստի և նրա պատճենի միջև, որի հետևանքով մշակութային փոփոխությունները ևս կարող են լինել օգտակար, չեզոք և վնասակար: Նկատի ունենալով, որ կենսաբանական փոփոխությունները հիմնականում տարերային գործընթացներ են՝ թվում է, թե մույնը կարելի է ասել նաև մշակութային փոփոխությունների մասին, սակայն իրականում դրանք ունեն

որոշակի տարբերություններ, եթե նկատի ունենանք, որ մշակութային փոփոխությունները հաճախ կամային և նպատակային նորարարություններ են: Այսինքն՝ դրանք վերընթաց բնույթ ունեն և նպատակ ունեն բարելավելու նախորդող մշակութային վիճակը: Մյուս կողմից, ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, միշտ չէ, որ մշակութային նորաբանություններն ապահովում են անհրաժեշտ առաջընթացը, և պարզվում է, որ դրանք երբեմն անօգուտ փոփոխություններ են: Կամ հնարավոր է, որ դրանք միաժամանակ կարող են լինել և՛ օգտակար, և՛ վնասակար (ինչպես նոր դեղամիջոցների ստեղծումը): Ինչ վերաբերում է առանձին էթնիկական խմբերի մշակութային փոփոխություններին, ապա հնարավոր է, որ դրանք, պատմական ժամանակամիջոցում տարբեր հիմնավորումներով առաջացած նորարարություններ լինելով հանդերձ, այսօր աշխարհաճանաչողական փոփոխությունների պատճառով այլևս որպես այդպիսին չընկալվեն: Այս դեպքում կենսաբանության մեջ բնական ընտրության սկզբունքի հետ համադրելի է «մշակութային ընտրություն» հասկացությունը՝ նկատի ունենալով, որ առաջին դեպքում կենսաբանական մեկ տիպը փոխարինվում է տվյալ իրավիճակի կենսապայմաններին համապատասխան ձևով, իսկ երկրորդում ընտրվում է մշակութային այն տիպը, որն առավելապես համապատասխանում է տվյալ խմբի աշխարհընկալումներին: Լ. Կավալի-Սֆորցան տարբերակում է «մշակութային ընտրությունը», որն անհատի ընտրության հնարավորությունն է, և «բնական ընտրությունը», որն ապահովում է տվյալ տեսակի հետագա գոյատևումը (տե՛ս Cavalli-Sforza, 2001, 191): Այս մոտեցման հիման վրա ոմանք առաջարկում են մշակույթի փոխանցման երկու ձև՝ ուղղահայաց և հորիզոնական: Առաջին դեպքում նկատի է առնվում առաջնային փոխանցումը, երբ այն տեղի է ունենում ծնողների և երեխաների միջև, իսկ երկրորդում՝ երկրորդային փոխանցման ձևը, երբ այն տեղի է ունենում հանրույթի տարբեր անդամների միջև: Բացի դրանից՝ առաջին դեպքի համար կենսաբանական և մշակութային փոփոխությունները համարժեք են, թեև հնարավոր են նաև, այսպես կոչված, միջանկյալ (կամ խառնուրդային) վիճակներ, երբ երեխան ձեռք է բերում ինչպես ծնողներից ժառանգած, այնպես էլ ուրիշներից ստացած գիտելիքներ: Վերը նշվեց, որ հողագործական և ամասնապահական զբաղմունքի անցման շրջանում տեղի է ունենում էթնիկ խմբերի խտության աճ, ինչպես նաև մշակութային ուղղահայաց կապերի սերտացում: Այդպիսով ձևավորվում է յուրահատուկ հասարակական մշակույթ, որով


տվյալ հանրությի առանձնանում է մյուսներից: Այստեղ յուրահատուկ տեղ է զբաղեցնում արդեն հստակ ձևավորված ընտանիքը, որը դառնում է տվյալ հանրության կարևոր սոցիալական հիմքը: Այս առումով նշենք, որ այս շրջանում գերիշխող հայրիշխանությունը ևս որոշակի դեր է ունեցել դրանում, քանի որ մայրիշխանության շրջանում հիշյալ ուղղահայաց կապերը թույլ են եղել, ըստ էության, լիարժեք ընտանիքի բացակայության պատճառով, եթե նկատի ունենանք, որ այդ շրջանում երեխայի հայրը հայտնի չի եղել: Այսինքն՝ գերակայել է, այսպես կոչված, «հոտային անունության» ձևը: Ֆրանսիացի գիտնականներ Դ. Լեբրասը և Է. Տոդը տարբերել են նաև հայրիշխանական ընտանիքի մի շարք տիպեր՝ ըստ ծնողների և երեխաների փոխհարաբերության, որտեղ հիշյալ կապերը առավել սերտ են եղել ընտանիքի հոր բարձր հեղինակության պայմաններում: Այդ պայմաններում էլ ձևավորվել են նաև ուժեղ էթնիկական խմբերը՝ իրենց բնորոշ կենսաբանական, մշակութային և լեզվական յուրահատկություններով: Միևնույն ժամանակ մշակութային նորարարություններն առավել արդյունավետ են դրսևորվում հորիզոնական կապերում կամ ընտանիքից դուրս հարաբերություններում, որն ընդհանուր առմամբ հարստացնում է տվյալ խմբի մշակութային ժառանգությունը: Սրանով հանդերձ՝ կարծում ենք, որ մարդու կենսաբանական և մշակութային ժառանգական հատկանիշների համադրումը բավականաչափ բարդ խնդիր է այն պատճառով, որ նույնիսկ ծնողների և նրանց երեխաների մտավոր կարողությունները չեն կարող համարժեք լինել: Ամեն դեպքում ակնհայտ է, որ մշակութային փոփոխությունները մարդկանց մոտ ավելի արագորեն են տեղի ունենում, քան գենետիկականը:

Մեկ այլ խնդիր է լեզվի և մշակույթի փոխհարաբերությունն այն հարցադրման տեսանկյունից, թե համապատասխան էթնիկական խմբի ժառանգական հատկանիշների սահմանման առումով որ տարրը պետք է դիտել առավել կայուն կամ առաջնային: Վերոհիշյալ դիտարկումներն այն մասին, որ մշակույթի փոխանցումն առանց լեզվի հնարավոր չէ, վկայում են կարծես լեզվի առաջնայնության դրույթի մասին: Տվյալ դեպքում հարկ է նկատել, որ մշակութային ձևերն ու դրանց փոփոխություններն առավել տեսանելի են հենց լեզվում, և համապատասխան լեզվական ձևերի ինչպես պատմական, այնպես էլ համաժամանակյա քննությամբ հնարավոր է պարզել կոնկրետ հանրության մշակութային ա-


ռանձնահատկություններն ու դրանց փոփոխությունների ժամանակագրությունը:

Այս ամենի հաշվառումով L. Կավալի-Սֆորցան առաջարկել է մի ընդհանրական պատկեր, որտեղ ներկայացված են գենետիկական կապերով բնութագրվող մարդկային տիպերն ու համապատասխան լեզվաընտանիքները, որոնք կազմում են առայժմ վիճելի 6 գերընտանիքներ (տե՛ս Cavalli-Sforza L., 2000, 12):

գենետիկական կապեր	մարդկային տիպեր	լեզվա- ընտանիքներ	գեր- ընտանիքներ
----------------------	--------------------	----------------------	--------------------



Այստեղ թերևս առավել վիճելի են մարդկային տիպերի առանձնացումն է, քանի որ դրանց բնորոշման չափանիշները միասնական չեն: Ինչպես, օրինակ, Կավալի-Սֆորցան մի կողմից առանձնացնում է սևամորթների և սպիտակամորթների տիպերը՝ ըստ մաշկի գույնի, իսկ մյուս դեպքերում՝ ըստ աշխարհագրական տարածման: Հաջորդ խնդիրը վերաբերում է լեզվաընտանիքների և գերընտանիքների դասակարգմանը, որը, ինչպես վերը նշվեց, ընդհանուր առմամբ վիճելի է համապատասխան լեզուների ուսումնասիրվածության տարբեր աստիճանների, ինչպես նաև համարժեք լեզվական փաստերի բացակայության պատճառով, ինչն էլ իր հերթին պայմանավորված է լեզուների ոչ միաժամանակյա ձևավորման հանգամանքներով: Անհասկանալի է նաև նոստրատիկ և եվրասիական գերընտանիքների փոխհարաբերությունը, քանի որ, ըստ տվյալ պատկերի, ստացվում է, որ նոստրատիկ գերընտանիքը մտնում է եվրասիական գերընտանիքի կազմի մեջ: Այս ամենի պատճառը թերևս այն է, որ գիտնականն այստեղ փորձում է իր դասակարգումներն իրականացնել գենետիկական կապերի առաջնայնության դրույթի հիման վրա: Մինչդեռ այն առավել արդյունավետ կարող էր լինել բոլոր տեսակի բնութագրերի համամասնական համադրմամբ՝ առանց որևէ մեկի գերակայության: Այս առումով կարծում ենք, որ մարդկային տիպերի սյունակում անհրաժեշտ էր նշել գոնե այն հիմնական էթնիկական խմբերի կամ ժողովուրդների անվանումները, որոնց գենետիկական հատկանիշների ուսումնասիրությունների հիման վրա կազմվել է համապատասխան հարաբերությունների պատկերը: Նման փորձ իրականացրել է հետազայում Մ. Ռահլենը (տե՛ս Rahlen M., 2000, 25), որը, ելնելով աշխարհի բազմաթիվ ժողովուրդների՝ նույն Կավալի-Սֆորցայի և մյուսների կողմից կատարված գենետիկական հետազոտությունների արդյունքներից, ներկայացրել է նրանց կենսաբանական ծագման և աշխարհագրական տարածման միասնական պատկերը՝ ցույց տալով նաև այդ ժողովուրդների միջև գենետիկական փոխհարաբերությունները՝ ըստ այդ հեռավորության 0-1 չափման (տե՛ս նույն տեղում)։



Այստեղ վերոհիշյալ աֆրիկյան և ոչ աֆրիկյան մարդաբանական տիպերի տարբերակման փոխարեն Մ. Ռահլենն առաջարկում է աֆրիկյան և ասիական խմբերի՝ միմյանցից առանձնացման վարկածը, որը պետք է տեղի ունեցած լիներ մոտ 100.000 տարի առաջ: Միևնույն ժամանակ նա ընդունում է, որ այդ առանձնացումը տեղի է ունեցել հենց աֆրիկյան տարածքում՝ հաշվի առնելով նշված երկու տիպերի միջև նվազագույն, իսկ տարբեր աշխարհամասերում հետագայում տարածված որոշակի խմբերի միջև համարյա կրկնակի գենետիկական հեռավորությունները: Առավել հետաքրքիր իրավիճակ, սակայն, կարող ենք տեսնել այստեղ նշված ժողովուրդների և նրանց լեզուների փոխհարաբերության առումով, եթե նկատի ունենանք, որ առկա է լիարժեք համապատասխանություն նրանց կենսաբանական և լեզվական ծագումնաբանության մեջ: Այլ կերպ ասած *ցեղակից լեզուներով խոսում են գենետիկական կաղերով ևս միմյանց* մոտ ժողովուրդները: Դիտարկենք, օրինակ, տվյալ պատկերում 2-րդ տիպի տակ ներկայացված խմբերը, որոնք կազմում են, այսպես կոչված, «կովկասյան» (կամ ավանդական «կովկասոիդ») մարդաբանական տիպը: Այդ դեպքում ակնհայտ է դառնում, որ այդ տիպը ներկայացնող ժողովուրդների լեզուները հիմնականում հնդեվրոպական են՝ R հապլոխմբի ընդհանուր գերակայությամբ, իսկ ավելի լայն ընդգրկմամբ կազմում են նաև նոստրատիկ գերընտանիքը՝ R, J (սենական) և G (կովկասյան) հապլոխմբերի առկայությամբ: Նույն կերպ սամոյեդների, մոնղոլների, կորեացիների, այնու և նրանց հետ ծագումնաբանական սերտ կապով բնութագրվող մյուս ժողովուրդների լեզուները կազմում են ուրալալթայական լեզվաընտանիքը, որտեղ գերակայում է N հապլոխումբը և այլն:

Վերը նշվեց, որ նոստրատիկ գերընտանիքում ընդգրկված լեզուներն ու դրանց կրողների կենսաբանական յուրահատկությունները թերևս առավել ուսումնասիրված են և այդ առումով կարող են կողմնորոշիչ դեր խաղալ մյուս լեզուների ու ժողովուրդների համապատասխան յուրահատկությունների բացահայտման ու մեկնաբանման գործում: Հետևաբար կարելի է փորձել պարզաբանել այդ փոխհարաբերություններն արդեն ներկայացված փաստերի ու տեսակետների *հաշվառմամբ*: Այսպիսով ակնհայտ է, որ նոստրատիկ ընդհանրությամբ բնութագրվող լեզուները և նրանց կրողները պատմական ժամանակաշրջանում որոշ ժամանակ համագոյակցել են կոնկրետ աշխարհագրական տարածքում, որտեղ ձևավորվել են համապատասխան նա-

խալեզվական վիճակները: Հիշենք նաև, որ ըստ Յ. Պեդերսենի՝ մոստորատիկ գերընտանիքի կազմում պետք է ընդգրկել հնդեվրոպական, ուրալալթայական և սեմաքանյան լեզվաընտանիքների լեզուները: Հետագայում որոշ լեզվաբաններ, ինչպես, օրինակ, Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը, այս գերընտանիքի կազմում առաջարկում են նաև կովկասյան (այդ թվում՝ նաև քարթվեական) լեզուները, որոնց կրողները Կավալի-Սֆորցայի, Ռահլենի և մյուսների կողմից չեն հատկացվում եվրոպացիների (կամ ավանդական «եվրոպոիդների») մարդաբանական խմբին: Այստեղ է, որ առաջանում է հակասություն «կովկասոիդ» և «եվրոպոիդ» հասկացությունների միջև, քանի որ, ըստ նորագույն դասակարգումների, եվրոպացիները պատկանում են «կովկասոիդ» մարդաբանական խմբին և այդպիսով որպես համարժեք իրողություններ են ընկալվում: Այսպես, օրինակ, մի շարք հետազոտողներ (տե՛ս Назарова А., 1999) դրանք դիտում են որպես հոմանիշ հասկացություններ, որի հետևանքով էլ առաջանում է մարդաբանական տիպերի և էթնիկական խմբերի ոչ միանշանակ ընկալում: Այս առումով նշենք, որ վերը հիշատակված դենեկովկասյան լեզուների խմբում ավանդաբար ներկայացվում են հյուսիսկովկասյան, արխագադիգեյական, մախոդադստանյան, խուռաուրարտական, ենիսեյան, սինոտիբեթական, նադենե և բասկերեն լեզուները, որոնցից որպես վիճարկելի առանձնացրինք խուռաուրարտական լեզուները և բասկերենը: Կենսալեզվաբաններն իրենց հերթին, վերոհիշյալ հանգամանքներով պայմանավորված, համապատասխան հետազոտություններից դուրս են թողնում խուռաուրարտական ժողովուրդների կենսաբանական և հետևաբար նաև նրանց լեզուների ծագումնաբանության հարցը, իսկ բասկերին համարում են հնագույն եվրոպական, բայց ոչ հնդեվրոպական ծագման ժողովուրդ: Վերջին հիմնավորման համար հիմք է բասկերի մյուս եվրոպական ժողովուրդներին նման գենային կառուցվածքը, որտեղ գերակայում են R, b հապլոխումբը և հնդեվրոպական, ինչպես նաև մոստորատիկ գերընտանիքի կազմում ներկայացված լեզուներից տարբեր առանձնահատկությունները: Հիշենք նաև, որ մի շարք գիտնականների կարծիքով, ըստ իրենց լեզվական բնութագրերի, խուռաուրարտական լեզուները ևս կարելի է հատկացնել մոստորատիկ լեզուների թվին (տե՛ս Գաբրիելյան Յ., 2001), իսկ հյուսիսաֆրիկյան և մի շարք կովկասյան ժողովուրդների ու նրանց միջև լեզվական առնչությունները պետք է բացատրել տարաբնույթ գաղթերով և որոշակի ժամանակամիջոցում նույն տարածքում (հատ-

կապես՝ Մերձավոր Արևելքում) համագոյակցմամբ: Բասկերի առումով առավել ընդունելի ենք գտնում հնագույն շրջանում նրանց դեպի Եվրոպա ավելի վաղ տեղի ունեցած գաղթի տեսակետը: Բացի դրանից՝ նոստրատիկ գերընտանիքի կազմում առավել սերտ լեզվական առնչություններ, մեր կարծիքով, առկա են հատկապես հնդեվրոպական և սեմաքամյան լեզուների միջև: Սույն աշխատությունը լեզվական փաստերով չծանրաբեռնելու նպատակով նշենք միայն, որ նման եզրակացությունների հանգում ենք նաև հայերենի և սեմական մի շարք լեզուների համապատասխան տվյալները համեմատելիս, եթե ընդունում ենք այն վարկածը, որ հայերենում պահպանվել են դեռ նոստրատիկ ընդհանրությունից եկող արմատական ձևեր, ինչպես՝ հայ. *աւր* – նոստր. **avu* (առավոտ, օր), հայ. *four* – նոստր. *Kara*, հայ. *մառն* (խավար) – նոստր. **mAra* (քիծ, կեղտ), հայ. *կիմ* – նոստր. **kʷni-*, հայ. *առն* (արուռչխար) – նոստր. **Hera* (արու կենդանի), հայ. միս – նոստր. **Homsa* և այլն (տե՛ս Ջահուկյան Գ., 1987, 70–72):

Այսպիսով՝ նախ անդրադառնանք հնդեվրոպական լեզուների կրողներին, որոնք ներկայացնում են Եվրոպայից մինչև Կենտրոնական Ասիա տարածված լեզուները: Ինչպես ցույց են տալիս Լ. Կավալի-Սֆորցայի, Մ. Ռահլենի և այստեղ հիշատակված մյուս հետազոտողների ուսումնասիրությունները, ներկայումս Եվրոպայում բնակվող հնդեվրոպական ծագման ժողովուրդների միջև առկա է թե՛ գենետիկական և թե՛ լեզվական նվազագույն հեռավորություն, եթե նկատի ունենանք նաև այստեղ *R_{1a}* և *R_{1b}* հապլոխմբերի գերակայությունը: Մեծ չէ նաև հիշյալ հեռավորությունը Եվրոպացի և ոչ Եվրոպացի հնդեվրոպական ժողովուրդների միջև, ինչպես, օրինակ, հայերի և իսպանացիների միջև գենետիկական հեռավորությունն ընդամենը 0.14 է, հայերի և ռուսների միջև՝ 0.19 այն դեպքում, երբ բասկերի և իսպանացիների միջև այդ ցուցանիշը 0.25 է (տե՛ս *Hazarova A.*, 1999, 4-16), ինչը վկայում է այն մասին, որ չնայած բասկերի և իսպանացիների մյուս տարածքում երկարատև համագոյակցությանը՝ բասկերի ելակետային և յուրահատուկ ժառանգական հատկանիշները պահպանվել են: Մյուս կողմից, չնայած հայերենի և Հյուսիսային Կովկասում խոսվող օսեթերենի միևնույն հնդեվրոպական լեզվաընտանիքի, սակայն տարբեր լեզվաճյուղերի պատկանելությանը (օսեթերենն իրանական ճյուղի լեզու է)՝ հայերի և օսեթների միջև գենետիկական հեռավորությունը, ըստ

նույն հետազոտությունների, 0.18 է, ինչից կարելի է եզրակացնել, որ այդ ժողովուրդները նախապես համագոյակցել են նույն տարածքներում և հետագայում տեղափոխվել այլ վայրեր: Յնդիկները, որոնց նախնական լեզվավիճակը բնութագրվում է որպես հնդեվրոպական, իրենց գենետիկական հատկանիշներով առանձնանում են հարակից տարածքներում բնակվող չինտիբեթական լեզուների կրողներից: Վերջիններիս լեզուներն աղերսներ չունեն ոչ միայն հնդեվրոպական ընտանիքի, այլև նոստրատիկ գերընտանիքին պատկանող լեզուների հետ: Ըստ Ա. Նազարովայի և մյուսների տվյալների՝ ժամանակակից սեմական լեզուներով խոսողներից հրեաների և արաբների հետ հայերի գենետիկական հեռավորությունը ևս համեմատաբար մեծ չէ. առաջին դեպքում այն կազմում է 0.16, իսկ երկրորդում՝ 0.18, եթե նկատի ունենանք, որ այն աֆրիկյան ժողովուրդների հետ համեմատելիս կազմում է 0.42 (տես նույն տեղում, 7): Այստեղ թերևս միակ դժվար բացատրելի փաստն այն է, որ հայերի և չեչենների միջև գենետիկական հեռավորությունը բավականաչափ փոքր է (0.08), եթե նկատի ունենանք, որ լեզվական որևէ առնչություն այդ լեզուներով խոսողների միջև գոյություն չունի: Ավելացնենք նաև, որ չեչենների ծագման և տարածման վերաբերյալ գիտնականների մոտ դեռ միասնական կարծիք գոյություն չունի, իսկ գենետիկական հեռավորության տեսանկյունից նրանց ավելի մոտ են հրեաները, և այն հավասար է 0.06-ի: Տվյալ դեպքում թերևս կարելի է ենթադրել, որ մարդաբանական այն տիպը, որից սերում են չեչենները, իր ծագման վայրից տեղափոխվելով նոր տարածքներ, յուրացրել է տեղաբնիկների լեզուն, որը պատկանում է հյուսիսկովկասյան լեզուների թվին: Չեն բացառվում նաև համապատասխան գենետիկական փոփոխությունները՝ որպես վերը հիշատակված «գենային խառնման արդյունք», ինչպես, օրինակ, Տ. Ալեքսեևան և Մ. Աբդուշելիշվիլին կարծում են, որ չեչենների գենոֆոնդում առկա է նաև արաբական ենթաշերտ (Алексеева Т., Абдушеввили М., 2003):

Ելնելով վերը ներկայացված վերլուծություններից՝ կարծում ենք, որ ընդունելի պետք է դիտել նոստրատիկ լեզուների՝ Յյուսիսային Միջագետքում ձևավորված լինելու վարկածն այն հիմնավորմամբ, որ ըստ գենետիկական հետազոտությունների արդյունքների ևս՝ այդ լեզուներով խոսողները տարածված են եղել հիմնականում Փոքր Ասիայի հարավային և հարավարևելյան շրջաններում, որտեղից էլ սկսվել է հնդեվրոպական, սեմական, կովկասյան և այդ գերընտանիքին հատկացվող

այլ լեզուների կրողների գաղթը տարբեր ուղղություններով: Ժամանակագրական առումով, ինչպես վերը նշվեց, վերջինս տեղի է ունեցել մոտ 10.000 տարի առաջ՝ այդ տարածքներում հողագործական մշակույթի ձևավորումից հետո:

Այսպիսով, եթե ընդունելի ենք գտնում այն տեսակետը, որ համապատասխան էթնիկական խմբերի միջև առկա է ոչ միայն լեզվական, այլև կենսաբանական ընդհանուր ծագումնաբանություն, իսկ նրանց հետագա աշխարհագրական տեղաշարժերն էականորեն չեն ազդել նրանց ելակետային ժառանգական հատկանիշների վրա, ապա, այստեղ ներկայացված փաստերից ելնելով, կարող ենք ունենալ այդ խմբերի և նրանց լեզվական պատկանելության հետևյալ համադրական պատկերը.

Ժողովուրդներ	լեզվաընտանիքներ	գերընտանիքներ
--------------	-----------------	---------------

Մբուտի	ծագումն անհայտ է	
արևմտյան աֆրիկացիներ	— նեգրակորդոֆյան	----- ?
Բանտու	— նեղոսսահարական	
նեղոսյան		
եթովպիացիներ	— աֆրասիական	նոստրատիկ
բերբերներ	(սեմաքամյան)	
բուշմեններ	— հնդեվրոպական	
սեմական		
հնդեվրոպական		
(տարածված Եվրոպայից		
մինչև Ասիա)		
հյուսիսային և հարավային	— իբերակովկասյան	
կովկասյան	դրավիդյան	
արևելահնդկական		
լապեր	— ուրալյան	եվրասիական
սամոյեդներ	չինտիբեթական	
չինացիներ	— ալթայական	
տիբեթցիներ		
մոնղոլներ	— էսկիմոսալեուտյան	
կորեացիներ	— չուկչակամչատյան	
Ճապոնացիներ		
սիբիրյան		
Այնու		
էսկիմոսներ		
չուկչներ		
ամերիկյան հնդկացիներ	— ամերինդյան	
(հյուսիսային, միջին, հարավային)		
թայեր		
կխմերներ	— ավստրոնեզական	ավստրալյան?
ինդոնեզացիներ	— խաղաղօվկիանոսյան	
պոլինեզացիներ		
մելանեզացիներ		
նորգվինեացիներ	— ավստրալական	
ավստրալացիներ		

Ինչպես հետևում է այս պատկերից, լեզվաբանական ուսումնասիրությունների արդյունքներով առավել հստակ թերևս կարելի է առանձնացնել ընդամենը երկու գերընտանիք՝ նոստրատիկ և եվրասիական, իսկ «օստրյան» անվանվող գերընտանիքի հարցում միանշանակ տեսակետներ դեռ գոյություն չունեն: Որոշ հետազոտողներ էլ, ինչպես, օրինակ, ռուս լեզվաբան Ն. Անդրեևը (Андреев Н., 1988), նոստրատիկ և եվրասիական գերընտանիքները միավորում է և անվանում ընդհանուր ծագման կամ «բորեալ» լեզուներ: Ասենք միայն, որ վերջինս, ըստ էության, հանգում է լեզուների միածագում տեսությանը, եթե նկատի ունենանք, որ նրանց կողմից ներկայացված աշխարհի համարյա բոլոր լեզուների համար ընդհանուր արմատական պարզ կազմությունները կարելի է մեկնաբանել որպես վերը հիշատակված «նախալեզվային» ձևեր: Այստեղ տեսնում ենք նաև, որ «եվրասիական» կոչվող գերընտանիքում ևս ունենք ոչ միանշանակ իրավիճակ, քանի որ լեզվաբանների մի մասը այդ գերընտանիքի կազմում ընդգրկում է նաև էսկիմոսալեուտյան և չուկչականշատյան լեզուները, իսկ մյուսները դրանք այդտեղից դուրս են թողնում: Հետևաբար թե՛ գենետիկական և թե՛ լեզվաբանական հետազոտությունները գերընտանիքների սահմանման հարցում միասնական եզրակացությունների չեն հանգեցնում: Պատճառը, ինչպես նշվեց, լեզուների հեռավոր ցեղակցական հարաբերությունների տարբեր պայմաններում ձևավորման, ինչպես նաև գենետիկական փոփոխությունների (մուտացիաների) սահմանման ոչ հստակ ժամանակագրության մեջ է: Բացի դրանից՝ նոստրատիկ գերընտանիքում ընդգրկված լեզուները, ի տարբերություն մյուսների, ավելի լավ են ուսումնասիրված, և գուցե այս հանգամանքը նույնպես որոշակի դեր ունի հիշյալ դասակարգումների համար: Ավելացնենք նաև, որ եթե ելնում ենք Լ. Կավալի-Սֆորցայի և մյուսների կողմից ներկայացված արդյունքներից, նշված լեզվաընտանիքների մեջ մտնող լեզուների (բացառությամբ մեռած լեզուների) կրողների միջև գենետիկական հեռավորությունը ևս մեծ չէ:

Այսպես հարց է առաջանում, թե ինչպես է տեղի ունեցել նոստրատիկ լեզուների կրողների զաղթը՝ հաշվի առնելով այն պնդումը, որ այն սկսվել է Հյուսիսային Միջագետքից հողագործական մշակույթի զարգացման պայմաններում: Սույն պարագայում գենետիկական հետազոտությունները տալիս են բավականաչափ հետաքրքիր արդյունքներ՝ լրացնելով լեզվականը: Ելնելով վերը ներկայացված համապատաս-

խան տվյալներից՝ կարելի է ենթադրել, որ մոստրատիկ ընդհանրությունը քայքայվել է աստիճանաբար, և տարբեր լեզվաընտանիքների լեզուներով խոսողներն այդ ընդհանրությունից դուրս են եկել տարբեր ժամանակներում: Համադրելով գենետիկական և լեզվական փաստերը՝ կարող ենք ասել, որ այստեղից ավելի վաղ առանձնացել են իբերական-կասյան լեզուների կրողները, որից հետո Փոքր Ասիայի հարավային և կենտրոնական տարածքներում ձևավորվել է հնդեվրոպական միասնությունը, որի մեջ մտնող ցեղերի մի մասը (եվրոպական լեզուների կրողները) աստիճանաբար տեղափոխվել է Եվրոպա, իսկ մյուսը (հնդիրանական և մյուս արևելյան ժողովուրդները)՝ իրենց ներկայիս բնակության վայրեր: Սենաքամյան լեզուների կրողների տարածումը, ինչպես վերը նշվեց, տեղի է ունեցել հակառակ ուղղությամբ՝ դեպի Աֆրիկայի հյուսիսային և արևելյան շրջաններ: Բնականաբար, նշված տեղաշարժերի արագությունն ու բնույթը մույնպես տարբեր է եղել: Այս առումով կարծում ենք, որ հնդեվրոպական որոշ ժողովուրդներ, ինչպես, օրինակ, հայերն ու հույները, մյուսներից ավելի երկար են մնացել մոստրատիկ կամ նախահնդեվրոպական ընդհանրության սահմաններում, և ավելի ինտենսիվ է եղել նրանց շփումը ոչ հնդեվրոպական և հատկապես սեմական լեզուներով խոսողների հետ, որն արտահայտվում է նրանց միջև ինչպես հարաբերականորեն նվազ գենետիկական հեռավորությամբ, այնպես էլ առավել սերտ լեզվական աղերսներով (տես Գաբրիելյան Յ., 2001, 187-200): Պատճառը կարծում ենք այն է, որ հայերը, լինելով հնդեվրոպական ցեղեր, այնուամենայնիվ, մեծ տեղաշարժեր չեն կատարել՝ Փոքր Ասիայի հարավային շրջաններից տեղափոխվելով դեպի Հայկական բարձրավանդակի արևելյան և արևմտյան տարածքներ: Այսինքն՝ հայերն այդպիսով ավելի վաղ են հաստատվել իրենց ներկայիս բնակության վայրերում, քան հնդեվրոպական մյուս ցեղերը, որոնք անցել են գաղթի ավելի մեծ ճանապարհ: Ասենք նաև, որ այս մոտեցումը փոքր-ինչ տարբերվում է մինչ այժմ «մոստրատիկ» տեսության հետևորդների, մասնավորապես Թ. Գամկրելիձեի, Վ. Իվանովի, Մ. Գիմբուտասի, Հ. Պեդերսենի, Ա. Ֆայստի և մյուսների տեսակետներից, որոնց կարծիքով եվրոպական ժողովուրդները միջինասիական և հետո նաև Կասպից ծովի հյուսիսային տարածքներով են տեղափոխվել Եվրոպա, որը, կարծում ենք, քիչ հավանական է և հիմնված է հիմնականում հնագիտական ոչ միանշանակ փաստերի վրա: Բացի դրանից, ինչպես տեսանք, գենետիկական հեռա-

վորությունը եվրոպացիների և միջինասիական տարածքներ ավելի վաղ տեղափոխված ժողովուրդների միջև, եթե նկատի ունենանք նաև այստեղ հնդեվրոպացիներին բնորոշ R հապլոխմբի բացակայությունը և N խմբի գերակայությունը, որոշակիորեն մեծ է, իսկ լեզվական առումով հնդեվրոպական և ուրալալթայական ու ասիական ծագման մյուս լեզվաընտանիքներն առանձնակի սերտ կապեր չեն ցուցաբերում: Կարծում ենք, որ առավել հավանական է եվրոպական լեզուների կրողների գաղթը (մոտավորապես մ.թ.ա. 5-4 հազարամյակներում) Փոքր Ասիայի կենտրոնական և հյուսիսային տարածքներից դեպի Բալկաններ և ապա նաև եվրոպա: Ինչ վերաբերում է բասկերին, ապա նրանց գենետիկական և լեզվական աղբյուրների հարցը համարում ենք դեռ վերջնականապես չճշգրտված:

Վերջապես առանձին անդրադառնալով հայերին և հայերենին՝ նշենք, որ համապատասխան գենետիկական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ևս կարելի է որոշակի ճշգրտումներ կատարել հայ ժողովրդի և նրա լեզվի ծագման ու զարգացման վերաբերյալ գոյություն ունեցող բազմատեսակ և բազմաբնույթ տեսակետներում: Առավել հայտնի է, այսպես կոչված, «կազմավորման տեսությունը», ըստ որի՝ հայ ժողովուրդն առաջացել է հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական տարբեր ցեղերի միախառնումից: Այս առումով նշենք, որ էթնիկական խմբերի կամ նրանց լեզուների խառնումից (կամ խաչավորումից), ըստ գիտության նորագույն տվյալների, նոր ձևեր չեն առաջանում այն պատճառով, որ տվյալ խմբի գենետիկական միջուկային հատկանիշները, այնուամենայնիվ, պահպանվելով գերակայող են մնում, իսկ խառնվող լեզուներից որևէ մեկը դառնում է հաղթող՝ ներառելով պարտվող լեզվի կամ լեզուների որոշ յուրահատկություններ: Այսինքն՝ անկախ նշված փոխազդեցությունների բնույթից՝ այդպիսով նոր լեզուներ չեն առաջանում, իսկ կոնկրետ էթնիկական խմբի գենետիկական հիմնական բնութագրերն էլ չեն փոխվում: Այս առումով արդի բնական լեզվաբանության հետևորդները գտնում են, որ գեները, ինչպես նաև բնական լեզուները դժկամությամբ են իրենց կազմում ընդունում օտար տարրեր և օտար ազդեցության պարագայում անընդհատ պայքարում են դրանց ներթափանցման դեմ: Այդ սկզբունքով, օրինակ, լեզուներում առաջանում է պուրիզմի (մաքրամոլության) երևույթը, երբ լեզվում ինչ-որ հանգամանքներում առաջացած փոխառյալ ձևերը փոխարինվում են սեփական կազմություններով: Իսկ գենետիկական փո-

փոխությունները կամ մուտացիաները տեղի են ունենում այն ժամանակ, երբ հիշյալ պայքարը ինչ-ինչ պատճառներով թուլանում է և տեղի է ունենում օտար գեների ներթափանցում և այդպիսով նաև գեների «խառնում»։ Ընդ որում, այդ պայքարը, պայմանավորված տվյալ էթնոսի ինքնագիտակցության բարձրացմամբ, կարող է նաև ուժեղանալ, որի հետևանքով օտար ծագման գեները թուլանում են կամ ընդհանրապես դուրս են մղվում, և այդպիսով կոնկրետ էթնիկական խմբի գենետիկական ժառանգականության հիմնական գծերը իսպառ չեն անհետանում (տե՛ս Bickerton D., 1998)։ Ինչ վերաբերում է մարդաբանական ընդունված չափանիշներին, ապա թեև դրանց առաջնային նշանակություն տալն իրական չէ այն պատճառով, որ հայերը, օրինակ, հատկացվում են արմենոիդ կամ կովկասոիդ տիպին, որտեղ ընդգրկվում են նաև շումերները, արքադացիները, արևելյան վրացիները, ուտիները, քրդերը և էթնիկական այլ խմբեր, այդուհանդերձ որոշակի լրացուցիչ ճշգրտումներ հիշյալ խմբերի մարդաբանական յուրահատկությունների վերաբերյալ այդ չափանիշների միջոցով կարելի է կատարել։

Ինչպես վերը նշվեց, ըստ համապատասխան գենետիկական հետազոտությունների, հաստատվում է հայերի նվազ գենետիկական հեռավորությունը հնդեվրոպական լեզուների, ինչպես նաև նոստրատիկ գերընտանիքին հատկացվող լեզուների կրողների միջև։ Այս իրողությունը հաշվի առնելով՝ արդի մի շարք հայ և օտարազգի հետազոտողներ փորձել են ճշգրտել հայերի գենոֆոնդի և նրա ձևավորման հանգամանքները։ Սրան ուն կարևոր նշանակություն է տրվում հայերի ժամանակակից և հին խմբերի ուսումնասիրությանը՝ ելնելով վերոհիշյալ այն դրույթից, որ կոնկրետ էթնիկական խմբի գենետիկական հիմնական հատկանիշները ժամանակի ընթացքում պահպանվում են։ Հիմք ընդունելով Հայկական բարձրավանդակում հնագիտական պեղումներով ձեռք բերված և տարբեր դարաշրջաններից վկայված ոսկրանյութի բաղադրության վերլուծությունները և համեմատելով դրանք ժամանակակից հայերի համապատասխան տվյալների հետ՝ հայ գիտնական Ն. Քոչարը ցույց է տվել, որ անտիկ շրջանից սկսած՝ ժամանակակից հայերի և նրանց հնադարյան խմբերի միջև գենետիկական հեռավորությունը համարյա չի փոխվել, իսկ դա ապացուցում է բոլոր համեմատվող խմբերի չափազանց սերտ ազգակցական կապը (տե՛ս Քոչար Ն., 2012)։ Այս տվյալները կարևոր են այն առումով, որ եթե ուսումնասիրվում է ոսկրանյութը, ապա մենք չգիտենք, թե հայտնաբերված անհատն իր

մահից հետո փոխանցել է արդյոք իր գեները հաջորդ սերունդներին, իսկ ժամանակակից մարդուն ուսումնասիրելիս հաստատ գիտենք, որ նրա գեները ժառանգվել են իր նախնիներից: Այս փաստերը ժխտում են նաև վերը հիշատակված «կազմավորման տեսությունը», ըստ որի՝ հայերը որևէ ժառանգական համասեռություն չեն ցուցաբերում: Նույն կերպ հետազոտելով տարբեր տարածքներում բնակվող հայկական խմբերի գենետիկական առանձնահատկությունները՝ Լ. Եպիսկոպոսյանը հանգել է այն եզրակացությանը, որ նրանք, անկախ իրենց աշխարհագրական տարածումից, էթնիկական և ռասայական առումով միատարր են (տե՛ս Епископосян Л., 2001): Ասվածը հաստատում են նաև Վ. Ներսիսյանի կատարած արյան իմունոլոգիական ուսումնասիրությունները, որոնց հիման վրա գիտնականը եզրակացնում է, որ արյան բոլոր հատկանիշներից ելնելով՝ կարող ենք արձանագրել բոլոր հայկական խմբերի միատեսակ բնույթը (տե՛ս Нерсисян В., 2002): Լեզվաբանության տեսանկյունից հատկապես հետաքրքիր է այն փաստը, որ ըստ վրաց գիտնական Վ. Կաշիքիձեի գենետիկական հետազոտությունների արդյունքների՝ հարավկովկասյան տարածքում ներկայումս բնակվող ժողովուրդներից առավել սերտ են հարաբերությունները հայերի և հույների միջև (տե՛ս Кашибидзе В., 1990), իսկ Ն. Քոչարը նման սերտ գենետիկական կապեր տեսնում է հայերի և կիպրոսաբնակ հույների միջև (Քոչար Ն., 1990): Վերջինս այդ իրողությունը բացատրում է այն հանգամանքով, որ մարդկության պատմության տեսանկյունից ոչ հեռու անցյալում Կիլիկիայի թագավորությունն ու Կիպրոս կղզին տարածքանորեն մոտ են եղել, և փոխադարձ խաչասերումների հավանականությունը մեծ է եղել, ապա գենետիկական մեծությունը հայերի և հույների միջև բավական տրամաբանական է (Քոչար Ն., 2012, 297): Ելնելով, սակայն, վերը հիշատակված այն դրույթից, որ թե՛ գենետիկական և թե՛ լեզվական խաչավորումներից նոր տեսակներ ու լեզուներ չեն առաջանում, մենք այդ երևույթի պատճառ համարում ենք ավելի վաղ շրջանում հայերի և հույների ընդհանուր ծագումնաբանությունը: Վերջինս հաստատվել է հնդեվրոպական լեզվաբանության արդյունքներով, ինչպես, օրինակ, Ա. Մեյեն, Գ. Ջոլտան, Վ. Պորցիգը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ, համեմատելով հայերենի և մյուս հնդեվրոպական լեզուների տարաբնույթ փաստերը, եկել են այն եզրակացության, որ հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենն առավել սերտ առնչություններ ունի հունարենի հետ (տե՛ս Ջահուկյան Գ., 1987, 300-308): Այս փաստերը

խոսում են այն մասին, որ դեռ մախահնդեվրոպական շրջանից հայերն ու հույները երկար ժամանակ գոյատևել են նույն տարածքում (Փոքր Ասիայի հարավում), և ի տարբերություն մյուս եվրոպական լեզուների կրողների՝ հույներն ավելի ուշ են հեռացել այդ տարածքից, որն առաջացնում է նաև նրանց գեներում տվյալ տարածքին բնորոշ J հապլոխմբի առկայությունը: Իսկ քանի որ այդ համագոյակցությունը տևել է երկար ժամանակ, ապա նրանց միջև գենետիկական հեռավորությունն էլ պետք է նվազ լիներ: Կարծում ենք, այս փաստն ավելի հիմնավոր է, քան հայ-հունական գենետիկական և լեզվական սերտ առնչությունները խաչավորմամբ բացատրելը: Ինչ վերաբերում է հայ-հունական վաղ շրջանի միասնության ժամանակագրությանը, ապա այն, ըստ գերմանացի լեզվաբան Վ. Պորցիգի, գոյություն է ունեցել մինչև մ.թ.ա. 2-րդ - հազարամյակի սկիզբները (տե՛ս Որսպուր B., 1964):

Գենետիկական և լեզվական փաստերի համադրմամբ թերևս կարելի է ճշտել նաև հայերի և ուրարտացիների փոխհարաբերության հարցը: Հիշենք, որ Ուրարտուի և ուրարտացիների վերաբերյալ միասնական մոտեցում մինչ այժմ գոյություն չունի, իսկ այն տեսակետը, որ հայկական ցեղերը, գրավելով Ուրարտու պետությունը, իրենց են ձուլել նաև ոչ հնդեվրոպական ծագման ուրարտական լեզուների կրողներին, վերը ներկայացված դրույթի համաձայն, պետք է համարել վիճելի: Ինչպես նշեցինք, Մ. Ռահլենը, Լ. Կավալի-Սֆորցան և մյուս հետազոտողները խուռաուրարտական լեզուները հատկացնում են դենեկովկասյան լեզուների թվին, որոնց կրողներն իրենց գենետիկական հատկանիշներով առանձնանում են հնդեվրոպական ժողովուրդներից: Այս առումով ճշտենք, որ համապատասխան գենետիկական հետազոտությունները, այնուամենայնիվ, այս փաստը չեն հաստատում, քանի որ խուռաուրարտական համարվող լեզուների կրողներն արդեն գոյություն չունեն, իսկ նրանց հետնորդների հարցը լուծվում է կամայականորեն: Ամեն դեպքում ենթադրյալ Ուրարտուի տարածքում (որը համընկնում է, ըստ էության, հայերի պատմական և ներկայիս բնակության վայրերի հետ) հնագիտական պեղումների միջոցով ձեռք բերված մարդկային կմախքների ու ոսկրանյութի հետազոտությունները ցույց են տալիս, որ թե՛ ըստ մարդաբանական տիպի և թե՛ ըստ գենետիկական առանձնահատկության, ուրարտացիների և հայերի միջև նկատելի տարբերություններ չկան (տե՛ս Алексеев В., Krojman W., Cappieri M., Назарова А., Асланишвили В., Кочар Н. և այլն): Լեզվական առումով «ուրարտու» ան-

վանումը հանդիպում է միայն ասորեստանյան սեպագիր արձանագրություններում, իսկ ուրարտական համարվող վկայություններում այդ անվանման փոխարեն հանդիպում է Բիայնիլի անունը, որի -/ի մասնիկը համարվում է հոգնակի թվի վերջավորություն, և հայերենում այն պետք է հնչվեր «Վան»։ Վերջին տարիներին կատարված լեզվաբանական հետազոտությունները ևս (տե՛ս Ջահուկյան Գ., 2000, Մովսիսյան Ա., 1998, Գաբրիելյան Յ., 2001 և ուրիշներ) հաստատում են, որ ուրարտերեն համարվող լեզուն, ըստ էության, ներկայացնում է հայերենի հնագույն վիճակ։ Հետևաբար վիճելի է դառնում նաև այն տեսակետը, որ խուռաուրարտական լեզուները կապ չունեն հնդեվրոպական լեզուների հետ, և դրանք պետք է համարել այլ լեզվախումբ։ Անդրադառնալով խուռիներին՝ նշենք, որ նրանց լեզուն ներկայացված է մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսից, իսկ ուրարտերենը՝ մ.թ.ա. IX-VI դարերից, թեև ուրարտացիներն ասուրական աղբյուրներում հիշատակվում են ավելի վաղ։ Միևնույն ժամանակ, եթե համենատուն ենք խուռերենի, ուրարտերենի և հայերենի փաստերը, տեսնում ենք, որ թեև բառամթերքի տեսանկյունից նրանց միջև որոշակի ընդհանրություններ կան, սակայն այդպիսիք բացակայում են նրանց ձևաբանական ու քերականական համակարգերում (տե՛ս Գաբրիելյան Յ., 2001, 198)։ Վերջիններս կարելի էր բացատրել թերևս աքքադական սեպագրերի թերությամբ, եթե նկատի ունենանք, որ դրանցում արտահայտված ձևաբանական ու քերականական կազմիչները միանշանակորեն վերծանել հնարավոր չէ։ Այսուհանդերձ, ելնելով նրանից, որ ընդհանուր լեզվամտածողության արտահայտման տեսանկյունից կարևոր դեր ունի նախադասության կառուցվածքը, ապա նկատում ենք, որ խուռերենը ցուցաբերում է մյուսներից տարբեր շարահյուսական կազմություն (տե՛ս Խաչիկյան Մ., 1999, 44, 53)։ Այս փաստը ևս, կարծում ենք, բացառում է խուռաուրարտական միասնության հնարավորությունը թե՛ ժամանակագրության և թե՛ լեզվական առնչությունների տեսանկյունից։ Նշենք նաև, որ պատմականորեն խուռիները եղել են Միտաննիի պետության հիմնական բնակիչները, որոնց լեզվում առկա է նաև հնդկական բաղադրիչ (Ջահուկյան Գ., 1987, 422)։ Ավելացնենք, որ Hurri անվանումն էլ խուռական ցեղերի ինքնանվանումն է, իսկ մյուսները նրանց անվանել են «միտաննիներ», ինչպես «հայը» մեր ինքնանվանումն է, իսկ «արմենը»՝ օտար։ Հետևաբար դժվար է խուռիներին և ուրարտացիներին (հայերին) նույն ծագումը վերագրել, մանավանդ, որ խուռերենն իր առանձնահատկություններ-

րով առավելապես նման է սեմական (արամեական) լեզուներին: Ուստի բոլոր փաստերը հաշվի առնելով՝ խոռոչները կարելի է համարել նոստրատիկ ծագման՝ հայերենի հետ ունեցած որոշ նմանությունները բացատրելով այդ ընդհանրությամբ: Ասվածը, ցավոք, գենետիկական հետազոտություններով ամրագրել չենք կարող և ելնում ենք հիմնականում պատմական և լեզվական տվյալներից: Նման իրավիճակում թերևս որոշակի նշանակություն կարող են ունենալ նաև մարդաբանական փաստերը: Այսպես, օրինակ, բազմաթիվ հետազոտողներ այն կարծիքն են հայտնել, որ խեթերը հայկական ցեղեր են եղել, իսկ խեթերենն էլ հայերենի հնագույն վիճակ է ներկայացնում (տես Գաբրիելյան Յու., 2001, 195-196), իսկ Հին Արևելքի խոշորագույն մասնագետ Բ. Տուրակը դեռ նախորդ դարի սկզբին գրել է, թե «խեթեր» անվանումը պայմանական պետք է համարել նախնադարյան Հայաստանի հյուսիսում բնակվող բոլոր ցեղերի համար, և խեթերի՝ որպես առանձին ժողովրդի առանձնացումն իրական չէ (տես Тугаев Б., 1900, 11): Ավստրիացի հնագետ և մարդաբան Ֆ. Լուշանն էլ կարծում է, որ ըստ զանգի կառուցվածքի՝ խեթերի և հայերի միջև նմանություններն ակնհայտ են, և դեռ այսօր էլ տարբեր տարածքներում բնակվող հայերը բնութագրվում են զանգի կառուցվածքի նույն տիպով (տես Лыжан Ф., 2010, 141): Նա գտնում է, որ չնայած խեթերի և սեմական ցեղերի նույն տարածքում երկարամյա համագոյակցությանը՝ նրանց զանգի և դեմքի կառուցվածքի բնորոշ գծերը տարբեր են եղել, որը նրանց հետնորդների մոտ պահպանվել է մինչև օրս: Այդպիսով, որպես խեթերի հետնորդներ՝ Լուշանը համարում է հայերին, և անկախ այլ ցեղերի հետ բազմաբնույթ շփումներից, ըստ նրա, նրանց կազմաբանական առանձնահատկությունները որևէ կերպ չեն փոխվել: Այս առումով Լ. Եպիսկոպոսյանը նշում է, որ հայերի գենոֆոնդն աչքի է ընկնում առավել պահպանողականությամբ, որն արտահայտվում է օտար ծագման գենետիկական տարրի դուրս մղմամբ (տես Епископосян Л., ips.ras.ru): Այս երևույթն արդի գիտնականները բացատրում են տվյալ էթնիկական խմբի ինքնապահպանման բնագծով, իսկ Լ. Եպիսկոպոսյանը ենթադրում է, որ հայերի էթնիկական ինքնությունն ազդել է նրանց գենետիկական ինքնության վրա, ինչը բնորոշ է նաև շատ այլ էթնիկական խմբերի (տես նույն տեղում): Այս դեպքում կարծում ենք՝ վճռորոշ դեր ունի լեզուն, որի օգնությամբ էլ դրսևորվում է հիշյալ ինքնությունը:

Վերադառնալով կրկին խեթերի և խեթերենի, ինչպես նաև հայերի ու հայերենի փոխհարաբերությունների խնդրին՝ նշենք, որ «խեթ» անվանումը գալիս է եգիպտական աղբյուրներից, իսկ խեթերն իրենց անվանել են *nāšili* կամ *nēsumnili*: Նկատի ունենալով, ինչպես վերը ներկայացված, այնպես էլ բազմաթիվ այլ գիտնականների տեսակետները խեթերի, ուրարտացիների և հայերի վերաբերյալ՝ մեր հետազոտություններում փորձել ենք լեզվական ձևերի վերլուծությամբ որոշակի կապ տեսնել նրանց անվանումների միջև: Ընդ որում, մենք ելնում ենք խորհրդային շրջանի հայտնի լեզվաբան Է. Մակաևի այն տեսակետից, որ հնագույն շրջանում, երբ արդեն գերիշխել է հողագործական կացութաձևը, առաջացել են հողագործների և ռազմիկների սոցիալական շերտերը, որոնցից երկրորդը պաշտպանում էր ցեղը օտար հարձակումներից: Այդպիսով նա եզրակացնում է, որ *aira-* վեդայական *ārya* (հայ. արի, գերմ. *har-* «հարվածող, խփող», ավեստերեն *harə-tar* «պաշտպանող») և նման այլ ձևեր ոչ թե էթնիկական, այլ սոցիալական անվանումներ են եղել դեռ նախահնդեվրոպական (կամ նոստրատիկ) շրջանում (տե՛ս Макаев Э., 1974): Այդ դեպքում, մեր կարծիքով, սոցիալական մյուս շերտի (բուն հողագործների) համար գործածվել է *Hatt-* «փոքր, օտար» ձևը, և հայերենի *արի* և *խեթ* (*հեթ*) ձևերը արտացոլում են նախահնդեվրոպական շրջանից եկող անվանումները (տե՛ս Գաբրիելյան Յ., 2001, 192): Ավելին, կարծում ենք, որ *խաթ*, *խեթ*, *հաթ*, *հեթ* ձևերը, որոնք վկայվում են տարբեր լեզուներում, նույն ծագումն ունեն և նախապես տարածված են եղել նոստրատիկ ընդհանրությամբ բնութագրվող հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներում: Այս առումով նշենք նաև, որ հռոմեացիների կողմից վաղ գերմանական ցեղերի կազմում հիշատակվում են հողագործ խաթերը (*chatti*), որոնք հետագայում անվանվել են Զեսսեր (*Hess*) կամ Զասսեր (*Hass*): Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վաղ գերմաներենին բնորոշ է եղել *t>ss* հնչյունական փոփոխությունը, ապա գերմանական այս ցեղանունը ևս կարող ենք հանգեցնել նախահնդեվրոպական *Hatt-* ձևին: Բոլոր այս փաստերից ելնելով՝ ենթադրում ենք, որ «ուրարտու» անվանումը բխում է նախահնդեվրոպական հիշյալ արմատից՝ նկատի ունենալով, որ աքքադական սեպագրերում (որը կիրառվում էր նաև «ուրարտական» կոչված արձանագրություններում) գործածվել է URU դետերմինատիվ, որը, դրվելով տեղանուններից առաջ, նշանակել է «երկիր, վայր, քաղաք, տեղ» հասկացությունները: Դրան համապատասխան ու-

նենք ^{URU}Hatti, «խեթերի երկիր, քաղաք, վայր» (տե՛ս Фридрих Н., 1952, 15), որը՝ որպես առաջին բաղադրիչի (դետերմինատիվի) իմաստատարը նշանակության գիտակցման հետևանք, աննշան փոփոխություններով վերածվել է նախ Uruatri, իսկ հետագայում՝ Urartu ձևի, որն էլ առկա է ասուրական արձանագրություններում: Այսինքն՝ թե՛ «խեթեր» և թե՛ «ուրարտացիներ» անվանումները հայերին տրվել են օտարների կողմից: Հայերենում այդ անվանումները որպես հատուկ անուններ չեն հիշատակվում, և Ուրարտուի դիմաց ունենք Արարատ տեղանունը՝ արդեն մթազնած իմաստով (հմմտ. եբրայերեն Arārāt), իսկ ուրարտական տեքստերի հայկական բնույթի մասին ավելի որոշակի պատկերացում են տալիս Գ. Ջահուկյանի և այլոց համապատասխան ուսումնասիրությունները (տե՛ս հատկապես Ջահուկյան Գ., 2000): Այս ամենին կարող ենք ավելացնել նաև վերը հիշատակված գեներտիկական և մարդաբանական հետազոտությունները:

Անդրադառնալով հայերի՝ կրկին օտար ծագման «արմեն» անվանմանը՝ նշենք, որ որոշ լեզվաբանների կարծիքով այն կապվում է մարապարսկական ընկալման հետ և բխում է հնդեվրոպական *aryam*, *arim* «թշնամի, օտար» ձևից, ոմանք էլ այդ անվանման հիմքում տեսնում են կրկին հնդեվրոպական ծագման *arm* – «ցեղ, սերունդ» (հմմտ. հայերեն *qarm*, ինչպես նաև՝ *utrm*, «ցեղ, սերունդ») ձևը: Բացի դրանից՝ գոյություն ունեն բազմաթիվ այլ տեսակետներ, որոնք հիմնականում վիճելի են (տե՛ս Ջահուկյան Գ., 1987, 282-288): Կարծում ենք, որ առավել հավանական է առաջին մեկնաբանությունը, եթե նկատի ունենանք, որ «հայ» ինքնանվանման հիմքում առավել ընդունելի տարբերակ կարելի է դիտել նախահնդեվրոպական (H)ar – «մեծ, ուժեղ» արմատից r>j հնչյունափոխությամբ առաջացած Haj «հարձակվել, գրավել» (ուրարտերեն Hai «գրավել, տանել» ձևը, քանի որ, ըստ մեր դիտարկումների, ժողովուրդների ինքնանվանման հիմքում միայն դրական իմաստներ են (Գաբրիելյան Յ., 2001): Այս մոտեցումը հիմնվում է նաև Է. Մակաևի վերոհիշյալ տեսակետի վրա, որից կարելի է եզրակացնել, որ նախահնդեվրոպական շրջանում սկսվում է հողագործների և ռազմիկների սոցիալական խմբերի վերածումը (H)ar և (H)att անվանումներով էթնիկական խմբերի, որոնց հակադրության մեջ, բնականաբար, գերիշխող դիրքում հայտնվում են ռազմիկները: Ուստի պետք է ենթադրել, որ այդ շրջանում, երբ սկսվել է արդեն նոստրատիկ ընդհանրության քայքայումը, էթնիկական խմբերն առանձնացել են սոցիալական շերտավորման

հիման վրա, որն արտացոլվել է հիշյալ անվանումներում: Ամեն դեպքում ակնհայտ է, որ «հայ»-ը ինքնանվանում է, իսկ «արմեն» հայերին կոչել են օտարները: Թեև փոքր-ինչ վիճելի է թվում խեթական արձանագրություններում հանդիպող «հայասա» անվանման հարցը, կարծում ենք, սակայն, որ նրա կապը հայերի ինքնանվան հետ միանշանակ է, և մի քանի «հայասական» համարվող անձնանունների ոչ լիարժեք ստուգաբանությամբ, ինչպես նաև հակասական պատմական փաստերի հիման վրա հայասերենը հայերենից տարբեր լեզու համարելը՝ ոչ հիմնավոր: Միևնույն ժամանակ հնարավոր ենք համարում մի շարք գիտնականների այն տեսակետը (ինչպես, օրինակ՝ Jensen P., 1898), որ Հայ ձևը ներկայացնում է վաղինդեվրոպական Hat-ի (>j հնարավոր անցմամբ) հետագա փոփոխությունը և այդպիսով նաև երկու անվանումների միաժամանակյա գոյությունը Փոքր Ասիայի կենտրոնական և արևելյան շրջաններում, ինչպես նաև հայերի հավանական բնակության տարածքներում:

Ամփոփելով նշենք, որ հայերն արդեն մ.թ.ա. 3-րդ հազարամյակում վերջնականապես ձևավորված են եղել որպես առանձին էթնիկական խումբ և տարածված են եղել Հայկական բարձրավանդակի արևելյան և արևմտյան շրջաններում: Նման տարածումն էլ առաջացրել է նաև որոշակի գենային բազմազանություն, որը նկատում են կենսաբան-հետազոտողները: Անդրադառնալով այն գիտնականների տեսակետին, որ ինչպես հնդեվրոպացիների, այնպես էլ հայերի նախահայրենիքը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, և հայերն իրենց նախնական բնակության վայրից որևէ տեղաշարժ չեն կատարել, գիտականորեն չի հիմնավորվում, եթե նկատի ունենանք, որ հնդեվրոպացիների նախահայրենիքի Առաջավոր Ասիայում գտնվելու վարկածը հաստատվում է բազմակողմանի փաստերով, և դրանցից ամենակարևորն այն է, որ այդ տարածքը համարվում է հողագործական մշակույթի զարգացման վաղ կենտրոններից մեկը, որտեղ էլ գոյություն է ունեցել լեզուների նոստրատիկ ընդհանրությունը, և, ինչպես վերը նշեցինք, հայերենը՝ որպես հնդեվրոպական բարբառ, իր մյուս ցեղակիցների հետ ձևավորվել է այդ ընդհանրության մեջ՝ հետագայում առանձնանալով և տեղափոխվելով Հայկական բարձրավանդակի արևելյան և արևմտյան շրջաններ: Այստեղ կարելի է հիշել նաև Մովսես Խորենացու տեղեկությունը հայերի հարավից գաղթելու վերաբերյալ: Ուստի հայերի՝ որպես առանձին էթնոսի ծագման տիրույթը և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստանն է:

Գրականության ցանկ

- Աճառյան Յ.**
Աճառյան Յ. Հայոց լեզվի պատմություն, 1-2, Երևան, 1940-1951:
Հայերեն արձատական բառարան, 1-7, Երևան, 1971-79:
- Այվազյան Ս.** Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան, 1986:
- Գաբրիելյան Յ.**
Գաբրիելյան Յ. Հայերենի ցեղակցության հարցը, Երևան, 1991:
Բնականության սկզբունքը լեզվաբանության մեջ, «Կանթեղ», 2001, 6:
- Գաբրիելյան Յ.** Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Երևան, 2001:
- Գաբրիելյան Յ.** Հայերը, խեթերը և գերմանները, «Բանբեր Երևանի համալսարանի», 3, 2001:
- Գաբրիելյան Յ.** Հնդեվրոպական արմատի կազմության սահմանափակման խնդիրը, «Կանթեղ», 1, 2003:
- Գաբրիելյան Յ.** Հնդեվրոպական լեզուներում հոլովական ձևերի զարգացման խնդիրը, «Բանբեր Երևանի համալսարանի», 3, 2005:
- Գաբրիելյան Յ.**
Գաբրիելյան Յ. Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, 2006
Վերաբերությունը և ցուցանիշությունը ըստ բնական մոտեցման, «Օտար լեզուները Հայաստանում», 2011, 12:
- Գաբրիելյան Յ.** Հարաժամանակայնությունը որպես լեզվի ուսումնասիրության հայեցակետ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1, 2014:
- Գաբրիելյան Յ.** Հայերի և հայերենի ծագման խնդիրներն ըստ լեզվաբանական և գենետիկական տվյալների, «Բանբեր Երևանի համալսարանի», 2017, 1:
- Գավուքչյան Մ.**
Երենյան Ս. Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրեալ, 1982:
Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, «Պատմաբանասիրական հանդես», 2, 1970:
- Իշխանյան Ռ.** Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան, 1988:
- Իշխանյան Ռ.** Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ, Երևան, 1989:
- Խաչիկյան Մ.** Առաջավոր Ասիայի հին լեզուների՝ խուռերենի, ուրարտերենի, էլամերենի տիպաբանական ուսումնասիրություն, Երևան, 1999:

- Ղափանցյան Գ.** Ուրարտուի պատմություն, Երևան, 1940:
- Ղափանցյան Գ.** Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961:
- Մարտիրոսյան Ն.** Հայերենի հարաբերությունը հեթեթերենի հետ, «Հանդես ամսօրյա», 1927:
- Մովսիսյան Ա.** Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա, Երևան, 1992:
- Մովսիսյան Ա.** Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Երևան, 1998:
- Չամչյան Մ.** Հայոց պատմություն, հ. Ա., Ե., Վենետիկ, 1874:
- Պեղերսեն Հ.** Հին հայերենի լեզվի շերտը, «Հանդես ամսօրյա», 1903:
- Պիզանի Վ.** Հնդեվրոպական լեզուների ծագումը, «Պատմաբանասիրական հանդես», 1, 1979:
- Ջահուկյան Գ.** Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970:
- Ջահուկյան Գ.** Հայասայի լեզվի հին անատոլիական ծագման վարկածը, «Պատմաբանասիրական հանդես», 1, 1976:
- Ջահուկյան Գ.** Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «Պատմաբանասիրական հանդես», 1986, 1:
- Ջահուկյան Գ.** Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
- Ջահուկյան Գ.** Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայակական բնույթի մասին, «Պատմաբանասիրական հանդես», 2000, 1:
- Ջահուկյան Գ.** Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003:
- Վարպետեան Ա.** Ովքե՞ր են ի վերջոյ արիացիները, Երևան, 1990:
- Քոչար Ն.** Հայ ժողովրդի ծագման, կազմավորման և զոյատևման մասին, Փյունիկ, 1990, 8:
- Քոչար Ն.** Արմենոիդ ռասայական տիպի ծագումնաբանական խնդիրները Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, 1:
- Алексеев В. П.** Происхождение народов Кавказа, Москва, 1974.
- Алексеева Т. И.** Этногенез восточных славян по данным антропологии, Москва, 1973.
- Андреев Н. Д.** Раннеиндоевропейский праязык, Ленинград, 1988.
- Барулин А. Н.** К аргументации полигенеза, Языки славянских культур, Москва, 2008.
- Барулин А. Н.** Основания семиотики: Знаки, знаковые системы,

- коммуникация, Москва, 2002.
- Бомхард А.** Очерк сравнительной фонологии так называемых “нотратических” языков, Вопросы языкознания, 1989, 3.
- Вандриес Ж.** Язык, Москва, 1937.
- Гамкрелидзе Т.,** Индоевропейский язык и индоевропейцы, 1-2, Тбилиси, 1981-1984
- Иванов В.** Антрогония, Москва, 1940.
- Геккел Э.** Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике, Москва, 1999.
- Джаукян Г. Б.** Истоки рода человеческого, Москва, 1984.
- Джохансон Д.** Эгоистический ген, Москва, 1993.
- Докинз Р.** Расширенный фенотип: длинная рука гена, Москва, 2010.
- Доккинз Р.** Эволюция мозга человека, Москва-Ленинград, 2008.
- Дробышевский С. В.** Хетты, фригийцы и армяне, Москва, 1961.
- Дьяконов И. М.** Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963.
- Дьяконов И. М.** Языки древней Передней Азии, Москва, 1967.
- Дьяконов И. М.** Предыстория армянского народа, Ереван, 1968.
- Дьяконов И. М.** О прародине носителей индоевропейских диалектов, Вопросы древней истории, 4, 1983.
- Епископосян Л. М.** Генетика ростовых процессов в армянской популяции, Ереван, 2000.
- Епископосян Л. М.** Изменчивость коротких tandemных повторов у хромосомы человека, Генетика, 37, 8, 2001.
- Епископосян Л. М.** Когда генетика и история сталкиваются, Ереван, 2008.
- Епископосян Л. М.** Генетическая история этноса с позиции современной науки, ips.ras.ru.
- Зубов А. А.** Палеоантропологическая родословная человека, Москва, 2004.
- Иллич-Свитыч В. М.** Опыт сравнения нотратических языков. Сравнительный словарь; взт., 1970-1984.
- Кашибидзе Б. Ф.** Одонтология армян, Биологический журнал Армении, т. XLIII, 1990, 4.
- Монир Ю. В.** К истокам человеческой коммуникации: Ритуализованное поведение и язык, Москва, 2005.
- Назарова А. Ф.,** Генетическое расстояние 55 человеческих популя-

- Алхутов С. М.** ций Евопы, Азии, Америки, Африки и Океании, Москва, 2000.
- Назарова А. Ф.** Эволюция человеческий популяций, Москва, 2000.
- Нерсисян В. М.** Распределения антигенов системы НЛА в популяции армян, Генетика, т. 38, 2002, 7.
- Невская А. А.,
Леушина Л. И.
Пизани В.** Асимметрия полушарий головного мозга и опознания зрительных образов, Ленинград, 1990.
- Пинкер С.** Этимология (история, проблемы, метод), Москва, 2001.
- Порциг В.** Язык как инстинкт, Москва, 2004.
- Слобин Д.** Членение индоевропейской языковой области, Москва, 1964.
- Тестелец Я. Г.** Психолингвистика, Москва, 2006.
- Томаселло М.** Введение в общий синтаксис, Москва, 2001.
- Тураев Б. А.** Истоки человеческого общения, Москва, 2011.
- Фридрих И.** К истории хеттского вопроса, СПб., 1900.
- Хачикян М. Л.** Краткая грамматика хеттского языка, Москва, 1952.
- Хомский Н. О.** Хурритский и урартский языки, Ереван, 1985.
- Широков О. С.** О природе и языке, Москва, 2005.
- Якушин Б. В.** Армяно-греческие этногенетические контакты по данным сравнительно-исторической фонологии, Историко-филологический журнал, 1977, 1.
- Arnold K.** Гипотезы о происхождении языка, Москва, 1984.
- Austin J.** Language evolution: Semantic combinations in primate calls, Nature, 2006, Vol. 441.
- Barber E.** How to do things with words, Oxford, 1999.
- Bechtel E.** Ontogeny and phylogeny, Redwoss, 2002.
- Bickerton D.** Connectionism and the mind, Oxford, 1991.
- Bloom L.** Symbol and structure: A comprehensive framework for language evolution, Oxford, 2003.
- Bowerman M.** Language development and language disorders, New York, 1991.
- Braun A.** Learning a semantic system, New York, 1993.
- Böhler K.** Strukturelle Semantik, Frankfurt, 2007.
- Burger H.** Sprachtheorie. Die Darstellungsfunktion der Sprache, Stuttgart, 1982.
- Burger H.** Das Gespräch in den Massenmedien, Berlin, 1991.
- Bybee J.** Formen sprachlicher Kommunikation, München, 1999.
- The Evolution of grammar. Tense, Aspect and Modality

- in the languages of the World, Chicago, 1994.
- Carey S.** Semantic development, Cambridge, 1998.
- Menozzi P., Piazza A.** The History and Geography of Human Genes, Princeton, 1994.
- Cavalli-Sforza L. L.** Gene, Völker und Sprachen, München, 2000.
- Chapman K.** Inappropriate word extensions, Baltimore, 2007.
- Chomsky N.** Aspects of the theory of syntax, Cambridge, 1995.
- Chomsky N.** Syntactic Structure, The Hague, 2005.
- Clark E.** The child's construction of Language, London, 1993.
- Clark E.** Meanings and concepts. Handbook of Child psychology, New York, 1995.
- Comrie B.** Language universals and linguistic typology: Syntax and morphology, Oxford, 1991.
- Demenocal P. B.** Climate and human evolution, Science, 2011, Vol. 331.
- Dressler W.** Naturalness and functionalism. Future challenges for Natural Linguistics, Munich, 2002.
- Fisher R.** The Genetical Theory of Natural Selection, Oxford, 1973.
- Gardner H.** The shattered mind: The person after brain damage, New York, 1974.
- Gimbutas M.** Proto-Indo-European culture, Philadelphia, 1970.
- Givon T.** Functionalism and grammar, Amsterdam, 1995.
- Givon T.** The genesis of syntactic complexity: Diachrony, ontogeny, neuro-cognition, evolution, Amsterdam, 2009.
- Greenberg J.** Language Universals, The Hague, 1974.
- Greenberg J.** Language in the Americas, Cambridge, 1987.
- Greenfield P.** Language, tools and brain, Behavior and brain sciences, 1991, Vol. 14.
- Gimbutas M.** Proto-Indo-European culture, Philadelphia, 1970.
- Ginneken H. van** La reconstruction typologique des langues archaïques de l'humanité, Leiden, 1939.
- Greppin J., Markey T.** When Worlds Collide: Indo-Europeans and Pre-Indo-Europeans, New York, 1990.
- Grice H. P.** Logic and conversation: Speech acts, New York, 2007.
- Guillaume P.** Referential extension in early language development, New York, 2006.
- Haiman J.** Natural Syntax, Iconicity and Erosion, Cambridge, 1985.
- Haiman J.** Iconicity, Morphology, Berlin, 1999.

- Halliday M.** Learning low to mean - Explorations in the development of Language, London, 1995.
- Hockett Ch.** A Manual of Phonology, Baltimore, 2005.
- Hopper P. J.** Grammaticalization, Cambridge, 2003.
- Humboldt W.** Schriften zur Sprache, Stuttgart, 1973.
- Hurford J. R.** The language mosaic and its evolution, Oxford, 2003.
- Jackendoff R.** Foundations of language: Brain, meaning, grammar, evolution, Oxford, 2002.
- Jobling M.** Aquaculture and Behavior, London, 1995.
- Katz A., Fodor J.** The Structure of Semantic Theory, London, 1997.
- Kuhl P.** Speech perception by the chinchilla, New York, 1995.
- Kuhen M.** On the origin of languages, Stanford, 1994.
- Kurilowicz J.** Phonologisches Problem der indogermanischen Aspiraten, Biuletyn Polskiego Towarzystwa yezikoznawczego, 1973.
- Language evolution, Oxford, 2003.**
- Language origins: Perspectives on evolution, Oxford, 2005.**
- Lieberman Ph.** Uniquely Human: The Evolution of Speech, Thought and Selfless Behavior, Cambridge, 1991.
- Luschan F.** Völker, Rassen, Sprachen, Berlin, 2010.
- Mallory J. P.** In Search of the Indo-Europeans, Hudson, 1989.
- Mayerthaler W.** Ikonismus in der Morphologie, Tübingen, 1997.
- Mayerthaler W.** Morphologische Natürlichkeit, Wiesbaden, 2007.
- Mc Gurk H.** Hearing lips and seeing voices, Nature, 1976.
- Menozzi P., Piazza A.** Synthetic maps of human gene frequencies in Europe, Science, 1978, 201.
- Menozzi P.** The History and Geography of Human Genes, Princeton, 1994.
- Miles H.** The cognitive foundations for reference in a singing orangutan, Language, Cambridge, 1990.
- Nelson K.** The Derivation of Concepts and Categories from Event Representations, Erlbaum, 1988.
- Patterson F.** The mind of the gorilla, New York, 1986.
- Piaget J.** Biologie und Erkenntnis, Frankfurt, 1974.
- Piaget J.** Meine Theorie der geistigen Entwicklung, Frankfurt, 1983.
- Pierce Ch.** Philosophical Writings, New York, 1960.
- Pinker S.** Language an adaptation to the cognitive niche, Oxford, 2003.

- Pinker S.** The faculty of Language, Cognition, 2005, vol. 95.
- Renfrew C.** Archeology and Language, Cambridge, 1988.
- Renfrew C.** Archeology, Genetics and Linguistic Diversity, Man, 1992, 27.
- Renfrew C.** Die Indoeuropäer - aus archäologischer Sicht, Spektrum der Wissenschaften, 2000, 1.
- Ross Ph.** Streit um Wörter, Spektrum der Wissenschaften, 2000, 1.
- Ruhlen M.** A Guide to the World's Languages, Stanford, 1991.
- Ruhlen M.** The Origin of Language: Training the Evolution of the Mother Tongue, Stanford, 1996.
- Schleicher A.** Die Darwinische Theorie und die Sprachwissenschaft, Weimar, 1863.
- Searle J.** Sprechakte. Ein Sprachphilosophischer Essay, Frankfurt, 1999.
- Semino O.** Origin, Diffusion and Differentiation of Y. Chromosome, Am J. Hum. Genetics, 2004, 74.
- Spelke E.** Early Cognitive Development: Objects and Space, Handbook of perception and cognition, San Diego, 1996, Vol. 1.
- Tomasello M.** The cultural origins of human cognition, Cambridge, 1999.
- Tomasello M.** Origins of Human Communication, Cambridge, 2008.
- Wiese H.** Numbers, language, and the human mind, Cambridge, 2004.

Բովանդակություն

Նախաբան	3
Լեզվի ծագումը.....	6
Լեզվի էությունն ու գործառույթը	37
Լեզուներ և ժողովուրդներ	66
Գրականության ցանկ.....	114

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒՐԻ ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

**ԼԵԶՈՒ,
ԼԵԶՈՒՆԵՐ ԵՎ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Time to Print» օպերատիվ տպագրությունների սրահում:
Ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 09.12.2019:
Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 7.625:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am